



ՀԱՆՏՈՎ
ԿԱՌԻՑԵԼ





Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՆ

Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԴԱԿԻԹ ՔԵՐԹՄԵՆՃԵԱՆ

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ
ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾԻՆԻ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(1999-2011 ԹԹ.)

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

2011

ՆՈՒԻՐՈՒՈՒՄ Է
ԱՉԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ՝
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԴԻԷՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՐԾ ԿԱԶՈՐԴԻԿՈՍԻ
ԾՆՆԴԵԱՆ 60-ԱՄԵԼՅ
ՅՈՒԲԵԼԵԱՆԻՆ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵԿԵՂԵՑԱՇԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՆ ՀԱՅՈՑ

1999 թ. հոկտեմբերի 27-ին Ազգային-Եկեղեցական ժողովի աշխարհասփիռ եւ հայրենաբնակ ընտրեալ պատգամաւորները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի սրբազան կամարների ներքոյ, աղօթքով եւ հոգեւոր խոկումներով ու պատասխանապատւութեան բարձր գիտակցութեամբ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի գահի 132-րդ Ամենայն Տայոց Կաթողիկոս ընտրեցին Արարապետան Տայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսեանին:

Անցած տասն եւ աւելի տարիների ընթացքում բազմափորձ, անյոզնաբեկ, լուսամիտ ու ազգանուէր Տայոց Տայրապետը դժուարութիւնների յաղթահարումով, իր կազմակերպչական տաղանդի, մեծ իմացականութեան եւ եռանդագին ջանքերի գործադրումով բեղուն արգասիքներ բերեց Մայր Աթոռի եւ Տայ Եկեղեցու հոգեւոր-ազգային, կրթական, եկեղեցականաց նոր սերնդի պատրաստման եւ հոգեւորականների ծառայութեան արդիւնաւորման, եկեղեցաշինական, դպրոցաշինական լայնահուն առաքելութեան մէջ, որի լիարժէք իրագործումը արգելում էր խորհրդային իշխանութեան աւելի քան եօթանասուն տարիներին:

Ամենայն Տայոց ազգընտիր Տովուապետը եռանդուն իր գործունէութեամբ մեր եկեղեցական պատմութեան մէջ լուսաւոր նոր դարագլուխ բացեց: Նորին Սրբութեան հետեւողական աշխատանքի շնորհիւ Մայր Աթոռի տարածքն ընդլայնուեց շուրջ երեք անգամ: Այդ հողատարածքներում այսօր վեր են խոյացել եկեղեցական, վարչական, մշակութային եւ բնակելի կառոյցներ:

Նպարտութիւն է հաւաքաւոր մեր ժողովրդի համար ունենալ մեծ անհարականութեան փէր, անձնուէր ու քաջեռանդ Նայրապէր, ով նշանակալի յաջողութիւններով իրագործում է իր երջանկայիշարակ նախորդների՝ Նայոց բազմերախար Նայրապէտների իղձերը՝ մեր Սուրբ Եկեղեցու շինութեան ու պայծառութեան եւ Նայոց լուսառաքար հաւաքքի առաւել զօրացման:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագոյն Նոգեւոր Խորհուրդը սիրով եւ երախտագիտութեամբ հրապարակութեան է յանձնում «Նայոց Նայրապէտի փեսիլքով» մասնագիտական վերլուծութիւններով գրուած արժէքաւոր այս գիրքը՝ Նորին Սրբութեան նախաձեռնութեամբ Մայր Աթոռի փարածքում իրականացուած եկեղեցական եւ աշխարհիկ կառոյցների վերաբերեալ:

Այս օրերին լրացաւ մեծագործ եւ շար սիրելի Վեհափառ Նայրապէտի ծննդեան 60-ամեակը: Ազգովի շնորհաւորելով Նորին Սրբութեանը՝ մեր աղօթքն ենք բարձրացնում առ Աստուած եւ ինդրում «գերկայնութիւն կենաց Նորն մերոյ աստուածագեաց, զի առաջնորդեսցէ մեզ ուղիղ գնացիւք ի շաւիղս արքայութեան երկնից, մեծապայծառ ջահիւ հաւաքով եւ սիրովն իւրով». ամէն:

ԳԵՐԱԳՈՅՆ ՆՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

26 օգոստոսի, 2011 թ.

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան տարիները շրջադարձային եղան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար: Մի կողմից ետխորհրդային բեկումնային զարգացումները եւ կրօնական հարցերում ընձեռուած ազատութիւնը, միւս կողմից՝ Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակի տօնակատարութիւնները, հոգեւոր կառոյցների շինարարութեան մեծ ալիք բարձրացրին, որն առաւելագոյնս դրսեւորուեց շնորհիւ Գարեգին Բ Հայրապետի բանիմաց գործունէութեան. հիմնուեցին նոր եկեղեցիներ, հոգեւոր ու բարեգործական այլ կառոյցներ, կրօնադաստիարակչական շէնքեր եւ այլն:

Գարեգին Բ Վեհափառն անդրանիկ կոնգակով նախանշելով իր ծրագրերը՝ մասնաւորաբար շեշտել է. «Շարունակելու ենք ջանքերը՝ բարձրացնելու խոնարհուած եկեղեցիները, վերանորոգելու ու բարեզարդելու հայրենի դարաւոր սրբավայրերը եւ կառուցելու նորերը՝ նուիրական երազով, որ ամէն բնակավայրում, մեծ քաղաքների թաղամասերում վեհաշուք յառնեն աղօթքի տները մեր՝ իրենց շուրջ սկիզբ տալով համայնքային բնականոն կեանքին»: Հոգեւոր-եկեղեցական կեանքի զօրացումը ազգային վերազարթօնքի հիմքն է, ինչպէս այս առթիւ նա նշում է՝ «Եկեղեցին հայկական ծննդավայրն է հայ հոգու, մեր հոգեւոր ազգային ինքնութեան աներեր սիւնը...: Եկեղեցին նաեւ մեր ազգային ամբողջականութեան հոգեւոր մարմնացումն է, հոգեւոր մեր հայրենիքը»¹: Իրօք, Հայրապետի խօսքն ու գործունէութիւնը ներդաշնակ են, ինչպէս եւ գնահատուել է. «Այսօր, տասը տարի ետք, կը շարունակուին Ս. Էջմիածնի մայրավանքին մէջ բազմաթիւ շինարարական աշխատանքներն, ու պատմական հին կալուածներ կը վերադար-

¹ «Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի խօսքը առաջնորդանիստ եկեղեցու հիմնարկէի ընթացքում», «Էջմիածին», 2005, 2, էջ 10:

ձուին Մայր Աթոռին: Մենք միայն կուզենք վկայել, որ ամէն անգամ, երբ կայցելենք Մայր Աթոռ, Մայրավանքը առաւել եւս բարգաւաճած եւ ընդարձակուած կը գտնենք: ...Մայր Աթոռի անմիջական շրջապատէն դուրս՝ Վեհափառ Հայրապետը Ս. Ներսէս Պարթեւ Հայրապետին նման մեծ ջանք տարած է եւ կը տանի եկեղեցական աշխատանքին: Իր օրով վերաբացուեցան եւ կառուցուեցան բազմաթիւ եկեղեցիներ այլ եւ այլ վայրերու մէջ»¹: Նոյն հեղինակի վկայութեամբ՝ «Վեհափառ Հայրապետին նախընթաց հոգացողութիւնը Արարատեան թեմի երիտասարդութեան եւ պատանիներուն նկատմամբ ծանօթ է բոլորին: Հայորդեաց տուները որպէս իր յղացումը եւ իրագործումը ոսկի տառերով արձանագրուած են մեր Եկեղեցւոյ տարեգրութեան մէջ: ... Զուտ եկեղեցական մարզէ ներս՝ Վեհափառ Հայրապետը մեծ աշխատանք տարած է եւ կը շարունակէ տանիլ հոգեւորականներու նոր սերունդներ հասցնելով: Վազգէնեան ճեմարանը, որ տարիներէ ի վեր մեծ յաջողութեամբ կը գործէ, արդիւնք է իր յղացումին»²:

Գարեգին Բ Հայրապետի շինարարական գործունէութեան արդիւնքը նկատելի ներդրում է ժամանակակից հայկական ճարտարապետութեան մէջ: Առանց այդ թերի կը լինէր Հայոց անկախութեան տարիների ճարտարապետական մշակոյթը: Այն զարգացաւ ոչ միայն Հայաստանում, այլ նաեւ սփիւռքահայ գաղթօջախներում: Ակնարկուող տարիներին աննախադէպ ընդարձակուեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառուցապատումն ու տարածքը, հայրենիքի թեմերում եւ գաղթավայրերում կառուցուեցին բազմաթիւ եկեղեցիներ, որոնց կողքին մեծ թիւ են կազմում նաեւ խորհրդային ժառանգութեան մի շարք կառոյցների պահպանութիւնն ու օգտագործումը բարեսիրական նպատակներով: Աւելին, ակնարկուող շինարարական միջոցառումները մեծ նշանակութիւն ունեն մեր օրերում անչափ կարեւոր՝ եկեղեցական եւ հոգեւոր կառոյցների շինարարական նորմերի կիրառման եւ կատարելագործման համար:

¹ Խաժակ արքեպ. Պարսամեան, Հովուապետը իր հօտին պահապան, «Էջմիածին», 2009, ԺԱ, էջ 6:

² Աճդ, էջ 7:

Տուեալ աշխատութեան նպատակն է վերլուծաբար ներկայացնել Գարեգին Բ Հայրապետի նախաձեռնութեամբ մինչ օրս ծաւալուած շինարարական գործունէութիւնը: Աշխատութեան հիմնախնդիրներէց են՝ ներկայացնել Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան տարիներին իրականացուած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճարտարապետական զարգացումների փաստագրումը, վերլուծութիւնն ու բնութագրումը, ինչպէս նաեւ անդրադառնալ եկեղեցական կիրառական արուեստի նմուշներին, յիշատակագրերին եւ այլն:

Զանազան հեղինակներ իրենց յօդուածներում եւ հաղորդումներում անդրադարձել են Գարեգին Բ Հայրապետի շինարարական գործունէութեանը: Դրանք, լաւագոյն դէպքում, Վեհափառի եկեղեցաշէն գործունէութեան այս կամ այն ծրագրի համառօտ նկարագրութիւններ կամ մեկնաբանութիւններ են: Սոյն աշխատութեան մէջ հանգամանօրէն ներկայացուած է Գարեգին Բ Հայրապետի գահակալութեան տարիներին իրականացուած շինարարութիւնն ամբողջ ծաւալով եւ հանգամանօրէն: Տեղեկատուական կարգով նշուել են հայրենական եւ հայկական գաղթօջախների թեմերում կատարուած գործերը եւ մանրամասնօրէն մեկնաբանուել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարածքում կատարուած ճարտարապետական մտայղացումների իրականացումները: Այդ նպատակով ի մի են բերուել եղած անդրադարձերը, որոնք ճանաչողաբար ընդարձակուել են նորակառոյց շէնքերի ցուցակագրութեամբ եւ յօրինուածքների վերլուծութեամբ: Կատարուել են Ս. Էջմիածնի կառուցապատման պարբերացումը, նոր փաստագրութիւնը, ոճական բնութագրումը եւ այլն: Օգտագործուել են «Էջմիածին» ամսագրի համապատասխան տարիների թողարկումներում տեղ գտած պաշտօնական տեղեկատուութիւնները, կաթողիկոսական դիւանի, Մայր Աթոռի եւ թեմերի ճարտարապետաշինարարական արխիւների նիւթերն ու փաստաթղթերը: Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շինարարական գործունէութեան մասշտաբների մասին պատկերացում կազմելու համար, համառօտ անդրադարձ է կատարուել մինչեւ Վեհափառի Հայրապետի գահակալութիւնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում իրականացուած շինարարական գործերին, որի համար օգտագործուել են

Յովհաննէս Շահխաթունեանցի «Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառաց Արարատայ» (հտ. Ա, Ս. Էջմիածին, 1842 թ.), Սիմէոն Երեւանցու «Զամբո» (Ս. Էջմիածին, 1873 թ.), Աբէլ Մխիթարեանցի «Կաթողիկէ Մայր եկեղեցի Վաղարշապատայ ընդ չորից վանօրէից նորին» (հտ. Բ, Վաղարշապատ, 1875 թ.), Առաքէլ Դաւրիժեցու «Պատմութիւն» (Ս. Էջմիածին, 1884 թ.), Մաղաքիա արքեպս. Օրմանեանի «Ազգապատում» (վերահրատարակուած, հտ. Ա-Դ, Ս. Էջմածին, 2001-2002 թթ.) եւ յատկապէս ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարազդատ Յարութիւնեանի՝ Վազգէն Ա Կաթողիկոսի շինարարական գործունէութիւնը ներկայացնող «Եկայք շինեսցուք» (Ս. Էջմիածին, 1989 թ.) եւ «Հայոց եկեղեցու շինարար գահակալները» (Ս. Էջմիածին, 1996 թ.) աշխատութիւնները: Մայր Աթոռի ճարտարապետական ժառանգութեան յօրինուածքային, յատկազօային-տարածական առանձնայատկութիւնների յստակեցման համար համեմատական կարգով ուսումնասիրուել են նաեւ համահայկական եւ միջազգային կրօնահամայնքային կամ ազգային կենտրոնները՝ օգտուելով տուեալ կենտրոնների հրատարակութիւններից եւ համացանցային կայքերից:

Գարեգին Բ Կաթողիկոսի կենսագրութիւնը կարելի է բաժանել երեք շրջանի. առաջինը՝ ուսումնական կատարելագործման տարիներն են, երկրորդը՝ Արարատեան Հայրապետական թեմում առաջնորդական տարիները եւ երրորդը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գործունէութիւնը, որ ցարգ շարունակուում է:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսը 1966 թ. ընդունուել եւ 1971 թ. գերագանցութեամբ աւարտել է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հոգեւոր ձեւարանը: 1972-1975 թթ. նրան առիթ է ընձեռուել ուսումնառութիւնը շարունակելու Վիեննայի Համալսարանի Աստուածաբանական ֆակուլտետում: 1975-1979 թթ. ուսանել է Բոննի Համալսարանում, այնուհետեւ՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու Զագորսկի հոգեւոր ակադեմիայի ասպիրանտուրայում: Վերադառնալով Ս. Էջմիածին, 1980-1983 թթ. նրան վստահուել է Արարատեան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդի օգնականի պաշտօնը, իսկ 1983-1999 թթ. ստանձնում է նոյն թեմի առաջնորդական փոխանորդի պարտա-

կանութիւնները: Այս տարիներին իսկ ակնյայտ էր նրա շինարարական արդիւնաւէտ գործունէութիւնը, որ առաւել եւս բեղմնաւոր բնոյթ ստացաւ կաթողիկոսական գահակալութեան տարիներին: Գարեգին Բ Հայրապետն Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոսն է՝ ընտրուած 1999 թ. հոկտեմբերի 27-ին: Մինչ այդ նրա շինարարական գործունէութիւնը դրսեւորուել էր դեռեւս Արարատեան Հայրապետական թեմում: Հէնց նրա առաջնորդութեան շրջանում իրականացուեցին Նոր Նորքի գանգուածի Ս. Սարգիս եկեղեցու (ճարտ.՝ Բ. Արզումանեան, 1996-1999 թթ.), Մաշտոցի պողոտային յարող հատուածում՝ Ս. Սարգիս եկեղեցու գանգակատան (ճարտ.՝ Ռ. Զուլհակեան), Մայր Աթոռի Սեւանի Վազգենեան դպրանոցի նոր մասնաշէնքի եւ եկեղեցու շինարարական, Սեւանի վանքային համալիրի եկեղեցիների վերականգնման, Նորագաւիթի Ս. Գէորգ եկեղեցու նորոգման եւ այլ աշխատանքները: Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարի մտայղացումն անցաւ Վազգէն Ա Կաթողիկոսի գահակալութեան տարիներին կազմակերպուած համահայկական ճարտարապետական մրցոյթով: Նախագիծը հաստատուեց նոյն ժամանակներում: Եկեղեցու հիմնային աշխատանքներն իրականացուեցին երջանկայիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի օրօք, մինչդեռ ճարտարապետական այդ հսկայ կառոյցն ամբողջութեամբ կառուցուեց եւ ճիշտ ժամանակին ու անթերի շահագործման յանձնուեց Գարեգին Բ Կաթողիկոսի պահանջկոտ եւ ամենօրեայ հոգատար հսկողութեամբ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի շինարարական գործունէութեան շառաւիղն ընդգրկում է երեք ուղղութիւն, որոնց առանցքն է կազմում Մայր Աթոռի տարածքի բարեկարգումն ու կառուցապատումը, երկրորդը՝ Հայաստանեան թեմերում եւ երրորդը՝ սփիւռքի թեմերում իրականացուած համանման աշխատանքները: Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հայրենական 9 թեմերում հաշուառւում են 130-ից աւելի նորակառոյց՝ եկեղեցիներ, հոգեւոր շէնքեր եւ նոյնքան մեծ ու միջին շինութիւնների նորոգումներ, ինչպէս նաեւ հինգ տասնեակի հասնող աշխարհիկ շէնքերի վերակառուցումներ, որոնք պէտք է ծառայեն նոր սերնդի դաստիարակման ազգասիրական նպատակներին:

Հայոց նախորդ կաթողիկոսների օրօք սկսուած սփիւռք-հայրենիք համագործակցութիւնը յաջողութեամբ շարունակուած եւ ընդլայնուած է Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան տարիներին: Բազմակողմանի յարաբերութիւնների խորքով աննախադէպ բարգաւաճում ու շինարարական բարձր տեմպ կայ Վիրահայոց թեմում: Շինարարական բեղուն գործունէութիւն է ծաւալուել նաեւ Ռուսաստանի Դաշնութիւնում եւ ԱՄՆ-ում: Հաստատապէս կարելի է արձանագրել, որ այսօր ԱՄՆ-ի Արեւելեան եւ Արեւմտեան թեմերում կատարուած եկեղեցաշինական գործունէութիւնը յաւակնում է դառնալ հայկական արդի ճարտարապետութեան առինքնող դրսեւորումներից մէկը, որում, բնականաբար, իր անուրանալի դերն ունի Ամենայն Հայոց Հայրապետի կազմակերպչական աւիւնը: Նշուածներով հանդերձ, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարեւորագոյն ճարտարապետաշինարարական մտայղացումը եղաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարածքի եւ համալիրի ընդարձակման ու յարմարեցումը կեանքի արդի պահանջներին, որոնց գաղափարական յենքն այն է, որ անկախութիւն նուաճած հայրենիքի վերակառուցումը պահանջում է նաեւ համապատասխան հզօր կրօնական կենտրոն: Հայ ժողովրդի հոգեւոր մայրաքաղաքն օրըստօրէ դառնում է համաքրիստոնէական կարեւորագոյն կենտրոններից մէկը:

Ա. ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄԸ ՄԻՆՁԵԻ
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԳԱՀԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառուցապատումն իրականացուել է պատմականութեան սկզբունքով: Այնտեղ կարելի է նկատել անտիկ եւ վաղ միջնադարեան կառուցապատման առանձնայատկութիւններ, որոնք փոփոխութիւնների են ենթարկուել 6-15-րդ դարերի ընթացքում, երբ կաթողիկոսական աթոռը տեղափոխուել էր Էջմիածնից՝ նախ Դուին ու յետոյ՝ այլ վայրեր: Մայր Աթոռի դերի ու նշանակութեան վերահաստատման հետ 1441 թ., նիւթական անբաւարար միջոցների պատճառով հնարաւոր չեղաւ միանգամից ամբողջապէս վերականգնել համալիրի նախնական վիճակը, ուստի դա արուեսց աստիճանաբար եւ մեծ ջանքերի գնով: Այդ առումով Գարեգին Բ Հայրապետի գահակալութեան տարիներին Ս. Էջմիածնի շինարարական իրադարձութիւնները աննախադէպ վերելքի ու հասունացման շրջան թեւակոխեցին. ստեղծագործաբար յստակեցուեցին ու ամբողջացան Մայր Աթոռի կառուցապատման ձեռնարկումները: Դրանց փաստագրական վերլուծութիւնը կատարելուց առաջ, մինչեւ Գարեգին Բ Հայրապետի գործունէութեանն անդրադառնալը, անհրաժեշտ է համառօտակի անդրադառնալ Մայր Աթոռի կառուցապատման պատմութեանը:

1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ս. Էջմիածինը վաղ քրիստոնէական ճարտարապետութեան կազմաւորման ճանաչողական փուլի եզակի կառոյցներից է: Այն քրիստոնէական հաւատքի հոգեւոր առաջին հաստատութիւններից եւ հիմնադիր ինստիտուտներից մէկն է: Լինելով միջնադարեան մշակոյթի բաղկացուցիչ, այդուամենայնիւ, այն ուշ անտիկ դարաշրջանի կենտրոններից է, որը մեծ դեր ունեցաւ քրիստոնէական հաւատքի արմատաւորման եւ պետականացման գործընթացում: Այս տեսանկիւնից Ս. Էջմիածնի ճարտարապետութիւնն իր յորինուածքային արմատներ-

րով հասնում է մինչեւ հայկական հելլենիզմի ժամանակաշրջանը, որն աստիճանական զարգացում ապրեց յետագայ դարերում: Այնուհետեւ խորհրդանշելով քրիստոնէական դաւանանքն ու արուեստը՝ դարձաւ հայ ժողովրդի ինքնութեան խորհրդանիշներից մէկը: Ս. Էջմիածինը, ինչպէս վկայում է Ազաթանգեղոս պատմիչը՝ «...տեսանեմ ի մէջ քաղաքին մօտ յապարանս արքունի՝ խարսխաձեւ ճախարակաձեւ խարխսի ոսկի, մեծութեամբ իբրեւ զմեծ մի բլուր, եւ ի վերայ նորա սիւն մի հրեղէն բարձր մինչեւ յոյժ, եւ ի վերայ նորա թակաղաղ մի ամպեայ, եւ խաչն լուսոյ ի վերայ նորա»¹: Մայր Տաճարը, որպէս Ս. Էջմիածնի վանքի հիմնադիր եկեղեցի, կառուցուել է հեթանոսական Սանդարամետի մեհեանի վայրում, ըստ աւանդութեան, Սբ. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքի նկարագրութեամբ: Այն կառուցուել է «մօտ յապարանս արքունի» եւ գլխաւոր մեհեանի տեղում, որտեղ «Թագաւորան (Տրդատ Գ) եւ ամենայն ժողովրդովք հանդերձ երթայր հասանէր ի տեղին ցուցեալ հրեղէն սեանն ոսկիակալ խարսխին, եւ արդէն բարձր քաղաքորմով փակեալ զտեղին ի պատիւ, եւ դրամբք եւ դռնափակօք ամրացուցեալ, կանգնեալ եւ անդ զնշան փրկչական խաչին»²:

Ս. Էջմիածնի համալիրը Վարդգէսաւանի եւ Վաղարշապատի անտիկ մշակոյթների խառնարանում արարուած, քրիստոնէական ճարտարապետութեան ձեւագոյան առաջին մեկնաբանութիւններից է, որի գաղափարական առանցքը Քրիստոսի ուսմունքն է: Սա պատահական իրադարձութիւն չէր: Պատմական վկայութիւններով Հայաստանում ստրկատիրական կարգերի վերջին շրջանում իրականացուել է հին քաղաքների վերականգնում եւ նորերի հիմնադրում: Այդ իրադարձութեան օրինակներից են առաջին դարի կէսերին հիմնադրուած Մծուրնը եւ Վաղարշ Ա-ի օրօք (116-144 թթ.) Արարատեան դաշտավայրի կենտրոնում հիմնադրուած Վաղարշապատ քաղաքը: Վաղարշապատը, ըստ էութեան, Հայաստանում կառուցուած վերջին անտիկ քաղաքն էր, որտեղից էլ չորրորդ դարի նախաչեմին քրիստոնէութիւնը տարածուեց Հայաստանում: Այն ամրագրուեց «ոսկէ մուրճով» յանձին Ս. Էջմիածնի Տաճարի:

¹ Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 375:

² Անդ, էջ 391-392:

Ինչպէս Յովհաննէս Շահխաթունեանցն է նշում՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի շինարարութիւնը սկսուել է Տրդատ Գ-ի թագաւորութեան 15-րդ տարում եւ աւարտուել 17-րդ տարում, այսինքն՝ 301-303 թթ.¹: Յետագայ դարերում Մայր Տաճարը բազմիցս վերակառուցուել ու նորոգուել է:

Մայր Տաճարը հիմնովին նորոգուել է 5-րդ դարավերջին Վահան Մամիկոնեանի մարզպանութեան շրջանում²: Վանքի վանահայրն է եղել նշանաւոր պատմիչ Ղազար Փարպեցին: Վանքի բուն յորինուածքը եղել է «տաճարը պարագծային կառուցապատման կենտրոնում» սխեմայով, որտեղ Մայր Տաճարը գտնուել է ուղղանկիւն կամ շրջանաձեւ կառուցապատման կենտրոնում: Սա բնորոշ է ուշ անտիկ դարերին յաջորդող Արշակունիների հարստութեան շրջանում գոյութիւն ունեցած համալիրին, որտեղ եղել են նաեւ մատենադարան, հայրապետանոց, բնակելի ու տնտեսական օժանդակ սենեակներ: Իր բովանդակութեամբ յորինուածքը միանգամայն զուգահեռում է վաղ միջնադարեան Դուինի, Զուարթնոցի, Արուծի եւ այլ կաթողիկոսանիստ համալիրներին³: Տուեալ յորինուածքն իր աղերսներն ունի Պերգամոսի միջնաբերդի բաղադրիչ հատուածների, Մագնեսիայի ագորայի, ինչպէս նաեւ Ֆորումների տաճար-հրապարակ համադրութիւնների հետ, ինչպէս Պոմպէի եռանկիւնաձեւ եւ Զերաչի Ֆորումներն են, Գաբիի ու Տիբուրի եւ այլ մեհենական համալիրները⁴: Ուստի, որքան էլ տեղեկութիւնները վաղ միջնադարեան Ս. Էջմիածնի նախնական համալիրի յորինուածքի մասին յստակ չեն, այնուամենայնիւ, վերոնշեալով կարելի է համոզուել, որ դրանում առկայ է Աբ. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքի կոմպոզիցիան: Մանաւանդ, որ ակնարկուող յորինուածքը համընկնում է նոյն ժամանակաշրջանը հետազօտող Գէորգ Տիրացեա-

¹ Յովհաննէս Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ Հինգ գաւառաց Արարատայ, հ. 1, Ս. Էջմիածին, 1842, էջ 15:

² Հմմտ. Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, էջ 345-346:

³ Տե՛ս Վ. Յարութիւնեան, Հայկական քաղաքաշինութեան եւ ճարտարապետութեան տեսութեան ու պատմութեան հիմնախնդիրներ, կազմող՝ Դ. Քերթեմեան, Երեւան, 2004, էջ 56-64, 279-310:

⁴ Տե՛ս անդ, էջ 56-64, 279-310:

նի տեսակէտի հետ¹ եւ ընդհանրութիւններ ունի Հին Արեւելքի՝ Միջագետքեան կառուցապատման սխեմաների (Ուր, Բաբելոն, Սամալ, Հատրա, Տիզբոն, Աբրա, Ֆրասսպա եւ այլն)², ուրարտական շրջանի (Ալթըն թեփէ, Մուսասիր ու այլ կրօնական տիպի)³ քաղաքների հետ:

7-րդ դարում Կոմիտաս Ա Աղցեցի Կաթողիկոսի (615-628 թթ.) հովանաւորութեամբ վանքի փայտաշէն մասերը վերաշինուել են քարով: 5-7-րդ դարերի Ս. Էջմիածնի յօրինուածքի մասին գոյուլթիւն ունեն տարամէտ կարծիքներ: Ակադեմիկոս Վարազդատ Յարութիւնեանի փաստագրութեամբ, որ հիմնուում է հայկական ճարտարապետութեան ուսումնասիրութեան հիմնադիր Թորոս Թորամանեանի կարծիքի վրայ՝ «Մայր տաճարը ի սկզբանէ կենտրոնադմբէթ խաչաձեւ յօրինուածք է ունեցել (ինչպէս Անիի Առաքելոց եկեղեցին) ու պսակուած է եղել 5 դմբէթներով՝ գլխաւորը՝ կենտրոնում, երկրորդականները՝ անկիւնային չորս աւանդատների վրայ: Նրա քառակուսի յատկագծում ամփոփուած չորս աբսիդները, Վահան Մամիկոնեանի ժամանակ կատարուած վերակառուցման ընթացքում, եկեղեցին ընդարձակելու նպատակով, իրենց բազմանիստ ծաւալներով դուրս են բերուել հարաւային, հիւսիսային եւ արեւմտեան ճակատների պարագծից: Տուեալ յօրինուածքով էլ 5-րդ դարից մեզ է հասել տաճարը»⁴:


Տեսակէտ կայ նաեւ, որ Մայր Տաճարը նախապէս բազիլիկ է եղել եւ միայն 7-րդ դարում Զուարթնոցը կառուցող Ներսէս Գ Տայեցի Կաթողիկոսի (641-661 թթ.) նախաձեռնութեամբ վերածուել է կենտրոնադմբէթ քառախորան յօրինուածքի: Սակայն այս վարկածը թէեւ չապացուցուեց 1955 թ. կատարուած վերանորոգման աշխատանքների հետ ընթացող պեղումների արդիւնքներով, այնուամենայնիւ, 1956 եւ

¹ Г. А. Тирацян, К вопросу о градостроительной структуре и топографии древнего Вагаршапата, ՊԲՀ, 1977, 2, с. 81-89.

² Ст'ю "Всеобщая История Архитектуры в 12 томах, Архитектура Древнего Мира", том 1, Москва, 1970, էջ 205, 213, 246, 316. հմմտ. Ara Berkian, Armenischer Wehrbau im Mittelalter, Darmstadt, 1976, Abb. 87, 88, 89.

³ Հայկական ճարտարապետութեան պատմութիւն, վեց հատորով, հ. 1, Երեւան, 1996, էջ 117, 122:

⁴ Վ. Յարութիւնեան, Եկայք Շիմեսցուք, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1989, էջ 11:



Մայր Աթոռ Ս. Էջմիածնի յատակագիրը (1827 թ.)



1959 թթ. յայտնաբերած նիւթերով դրա հաւանականութիւնը նաեւ չբացառուեց¹:

8-15-րդ դարերում քաղաքական անբարենպաստ պայմանների հետեւանքով կաթողիկոսական Աթոռը մի քանի անգամ փոխել է իր «հասցէն»՝ Էջմիածնից տեղափոխուելով Դուին (484-927 թթ.), Աղթամար (927-947 թթ.), Արգինա (947-1001 թթ.), Անի (1001-1051 թթ.), Սեբաստիա եւ Կիլիկիայի գանազան կենտրոններ (1051-1149 թթ.), յետոյ՝ Հռոմկլա (1149-1292թթ.) եւ Սիս (1293-1441թթ.): Միայն 1441 թ. Հայոց եկեղեցու կենտրոնը, Վաղարշապատի ազգային-եկեղեցական ժողովի նախաձեռնութեամբ՝ Կիլիկիայի Սիս մայրաքաղաքից վերստին փոխադրուեց իր աւանդական վայրը՝ Ս. Էջմիածին:

15 -16-րդ դարերը Հայաստան աշխարհի համար եղել են շինարարական գործունէութեան երկարատեւ դադարի ժամանակաշրջան: Չնայած դրան՝ Հայոց կաթողիկոսներից մի քանիսի ջանքերով Էջմիածնում իրականացուել են սահմանափակ ծաւալներով շինարարութիւն: Կիրակոս Վիրապեցի Կաթողիկոսը (1441-1443 թթ.) սկսել է նորոգել Կաթողիկէ եկեղեցին ու Հայրապետանոցը, իսկ Մակուեցի Գրիգոր Ժ Զալալբեկեանց Կաթողիկոսը 1443 թ. աւարտին է հասցրել այդ կարճատեւ շինարարական աշխատանքները, որոնց վերաբերեալ մեզ հասած տեղեկութիւնները խիստ սուղ են²:

Կառուցապատման առումով 16-րդ դարը նոյնպէս ամուլ չըջան եղաւ Մայր Աթոռի համար: Հայաստանի տարածքում շարունակուում էին թուրք-պարսկական պատերազմները: Եւ միայն 1639 թուականից յետոյ, երբ կայացուած համաձայնութեամբ Հայաստանը բաժանուել էր Արեւելեան՝ պարսկական եւ Արեւմտեան՝ թուրքական տիրապետութեան տակ գտնուող ենթամասերի, շինարարական գործունէութիւնն սկսեց զարթօնք ապրել: Առաքէլ Դաւրիժեցի պատմիչի վկայութեամբ՝ այդ ժամանակներում Մայր Տաճարը գտնուել է լքուած եւ աւերուած

¹ Տե՛ս անդ, էջ 25:

² Տե՛ս Աբէլ արքեպ. Մխիթարեանց, Կաթողիկէ Մայր եկեղեցի Վաղարշապատայ ընդ չորից վանօրէից նորին, Կ. Երկրորդ, Վաղաշապատ, 1875, էջ 16:

վիճակում¹: Ուստի, այն ենթարկուելով վերակառուցման՝ կրել է որոշ փոփոխություններ: Այս ընթացքում երկու անգամ վերակառուցուել են Մայր Աթոռի պարիսպները: Առաջին անգամ Մովսէս Տաթևացի (1629-1632 թթ.) Կաթողիկոսի ջանքերով է, որ Մայր Տաճարի շրջակայ պարիսպը կառուցուել է հողաչէն: Պարիսպների արեւելեան ու արեւմտեան կողմերն ունեցել են 63-ական կանգուն, իսկ հիւսիսային եւ հարաւային կողմերը՝ 56-ական կանգուն երկարութիւն, ինչպէս նաեւ՝ 8 բուրգեր կամ աշտարակներ: Վանքի գլխաւոր դարպասը գտնուել է արեւմտեան պարիսպի միջնամասում: Մայր Աթոռի պարիսպների երկրորդ վերակառուցումը իրականացուել է Սիմէոն Երեւանցի (1763-1780) Կաթողիկոսի օրօք: 1766 թ. պարսպապատուել է Մայր Տաճարի բակը եւ կառուցուել են նոր սեղանատունն ու վանական դպրոցի նոր շէնքը, ինչպէս նաեւ նորոգուել են Վեհարանը, Մայր Տաճարի տանիքը, ամրացուել են Տաճարի սիւները, իսկ 1771 թ. հիմնադրուել է տպարանը²: Ակնյայտ է, որ Մովսէս Գ Տաթևացի Կաթողիկոսը մեծ ջանքեր է ներդրել Ս. Էջմիածնի Տաճարի հիմնանորոգման համար³: Այս տարիներին Մայր Աթոռում տիրող իրավիճակի մասին պատկերացում կազմելու համար չափազանց կարեւոր են Առաքէլ Դաւրիժեցու հաղորդած վերոյիշեալ եւ այլ տեղեկութիւնները: Պատմիչի նկարագրութեամբ՝ «Գետից վարար ու հորդ ջուր բերին, հողի մի կողմը կապեցին եւ բազմաթիւ մշակներ գործի դրին: Մշակները սկսեցին հողը փորել եւ խառնել ջրին. այդպէս անելով ջուրը հողն առած տանում էր, իսկ քարը՝ մնում... շուտափոյթ հողը վերացաւ ...մնացած քարերը շարեցին տների պատերում: Ապա շուրջանակի լայն ու ընդարձակ պարիսպ քաշեցին՝ նրա վրայ ութ բուրգ կառուցելով: ...Ապա արեւմտեան կողմում պարսպի մէջ շինեցին դարպաս, տներ՝ իրենց եւ հիւրերի պէտքերի համար: Հիւսիսային եւ արեւելեան կողմերում շինեցին սեղանատուն, փուռ, ցորենի եւ այլ նիւթերի ամբարանոց: Այս բո-

¹ Տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Երեւան, 1988, էջ 241:

² Այս մասին տե՛ս Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Ս. Էջմիածին, 2001 թ., հ. Բ, յօդուած 2090.

³ Անդ: .

լոր շինուածքներից միայն պարիսպն էր հողից շինուած, իսկ մնացած բոլորը տաշած քարով, թրծուած աղիւսով, կրով եւ գաջով՝ գեղեցիկ ու վայելուչ յորինուածքով»։ Ինչ վերաբերում է Մայր Տաճարի վերանորոգութեանը՝ պատմիչի մօտ նշուած են կտուրի վրայ կատարուած աշխատանքները¹։

Փիլիպպոս Աղբակեցի (1633-1655 թթ.) եւ Յակոբ Զուղայեցի (1655-1680 թթ.) Կաթողիկոսների գահակալութեան տարիներին տեղի ունեցած թուրք-պարսկական պատերազմների հետեւանքով Մայր Աթոռը ենթարկուել է աւերումների, եւ մնացել են միայն եկեղեցին ու գմբէթաշէն տները։ Փաստօրէն, աւերուել են բոլոր փայտաշէն կառույցները։ Սեղանատունը, բնակելի տները վերակառուցուել են քարից, նորոգուել են եկեղեցու տանիքն ու գմբէթի ծածկը, ինչպէս նաեւ շրջակայ սալալատակը։ Փիլիպպոս Կաթողիկոսը 1654 թ. սկսել է կառուցել Էջմիածնի Մայր Տաճարի զանգակատունը, որ այնուհետեւ (1657-1658 թթ.) շարունակուել է նրա յաջորդ Յակոբ Զուղայեցի² կաթողիկոսի կողմից։ Այս շինարար Կաթողիկոսը կազմակերպել է Էջմիածնի տարածքի մի շարք գիւղերի եւ Մայր Աթոռի ջրամատակարարումն ու կոյուղու համակարգի կառուցումը, որը 19-րդ դարում բնակչութեան անփոյթ վերաբերմունքի պատճառով անօգտագործելի է դարձել³։

1679 թ. երկրաշարժից տուժել է ողջ Արարատեան դաշտավայրը, այդ թւում եւ Մայր Աթոռի համալիրը։ Աւերածութեան հետեւանքները վերացնելու նպատակով Եղիազար Ա Այնթապցի Կաթողիկոսը (1681-1691 թթ.) վերակառուցել է Մայր Տաճարը։ Նա եկեղեցու հարակային, արեւելեան եւ հիւսիսային խորաններից վեր՝ կտուրի վրայ կառուցել է տուել միանման ու փոքրաչափ զանգակատներ։ Եղիազար Կաթողիկոսի օրօք բազմաթիւ վերափոխութիւններ են կատարուել նաեւ Տաճարի ներսում, կառուցուել է Իջման սեղանը։ Վերափոխութիւններ են կատարուել հարակային եւ հիւսիսային կիսաբոլորակ խո-

¹ Տեղեկութիւնները վերցվել են Վարազդատ Յարութիւնեանի «Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները» աշխատութիւնից, Ս. Էջմիածին, 1996, էջ 9-10։

² Տե՛ս անդ, էջ 12-13 եւ 16։

³ Տե՛ս Աբէլ արքեպ. Մխիթարեանց, Գ2. աշխ., էջ 23-24։

րաններում, որպեսզի հնարաւոր լինէր դրանք օգտագործել եպիսկոպոսական ձեռնադրութիւնների ժամանակ տեղի ունեցող արարողութիւնների համար:

18-րդ դարում Մայր Աթոռում շինարարական գործունէութիւն է ծաւալել Նահապետ Եղեսացի Կաթողիկոսին (1691-1705 թթ.) յաջորդող Աղեքսանդր Ա Զուղայեցի Կաթողիկոսը (1706-1714 թթ): Նա 1713 թ. հիմնովին վերանորոգել է միաբանական ձեռնային սեղանատունը¹: Իսկ Աղեքսանդր Ա Զուղայեցուն փոխարինող Աստուածատուր Ա Համադանցի Կաթողիկոսը (1715-1725 թթ.) իր գահակալութեան տարիները նշանաւորել է Մայր Տաճարի ինտերիերի բարեզարդութիւններով: Նախքան այդ՝ 1718 թ., Մայրավանքում նա կառուցել է նաեւ տնտեսատունը², որը, ըստ հայոց կաթողիկոսների շինարարական իրագործումների ուսումնասիրութիւնների հեղինակ Վ. Յարութիւնեանի, Ղազարապատից արեւելք ընկած կառոյցն է³: Մայր Տաճարի ներքին բարեզարդման աշխատանքներից յատկապէս կարեւոր են Իջման սեղանի ամբողջապէս մարմարով վերակերտումը, Աւագ խորանի բեմական հատուածի մարմարապատումն ու յարդարումը, սալայատակի ու չորս կենտրոնական սիւների նորոգումը: Աղեքսանդր Ա Զուղայեցի եւ Աստուածատուր Համադանցի Կաթողիկոսների սկսած՝ տաճարի ներսը որմնանկարներով ամբողջական յարդարելու գործընթացը յետագայում շարունակել են Կարապետ Բ Ուլնեցի Կաթողիկոսը (1726-1729 թթ.) եւ նրա յաջորդներ՝ Աբրահամ Խոշաբեցի (1730 -1734 թթ.) եւ Աբրահամ Գ Կրետացի (1734-1737 թթ.) Կաթողիկոսները:

Բեղմնաւոր են Ղազար Ա Զահկեցի Կաթողիկոսի (1737-1751 թթ.) շինարարական իրագործումները, որոնցից են՝ 1741 թ. կառուցուած Հին Վեհարանի շէնքը, Մայր Տաճարի ու Հին Վեհարանի «Ծաղկազարդ» դահլիճի նկարազարդումները, ինչպէս նաեւ 1750 թ. կառուցուած ուխտաւորների վանատան կամ Ղազարապատի շէնքը: 1751-1763 թթ. յաջորդաբար գահակալած Մինաս Ա Ակնեցու, Աղեքսանդր

¹ Տե՛ս Յովհաննէս Շահխաթունեանց, Գ2. աշխ., հ. Ա, էջ 90:

² Տե՛ս անդ, էջ 101:

³ Վ. Յարութիւնեան, Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, էջ 58:

Ա Բիւզանդացու եւ Յակոբ Ա Շամախեցու շինարարական ամուլ տարիներից յետոյ կաթողիկոսական աթոռ բարձրացած Սիմէոն Ա Երեւանցին (1763-1780 թթ.) փայլեց իր շինարարական բեղուն գործունէութեամբ: Նա Մայրավանքի շրջակայ տարածքը մաքրել է տուել տարաբնոյթ կառոյցներից եւ 1766 թ. վանքը շրջափակել ու ամրացրել է 15 աշտարակներ ունեցող երկտակ պարիսպներով: Այդ պարիսպները արեւմտեան, հարաւարեւելեան եւ հիւսիսային կողմերում ունեցել են երեք դարպաս¹: Մէկ այլ տեղեկութեամբ այդ ժամանակաշրջանում Մայր Աթոռն ունեցել է հինգ դարպաս, որոնցից իւրաքանչիւրն ունեցել է իր անուանումը՝ Գիւղի դարպաս, Ղազարապատի դուռ, Մարի դուռ, Կալի դուռ, Բաղնիքի դուռ²: Ս. էջմիածնի շուրջ եղած պարիսպների յատկագիծը արտայայտուած է Վաղարշապատի՝ 1827 թ. կատարուած ուղևական հանոյթում³:

Մայր Աթոռում Սիմէոն Ա Երեւանցի Կաթողիկոսի ձեռնարկած աշխատանքներից թուարկենք Տաճարի կտրասպերի ու ամառային սեղանատան նորոգումները (1770 թ.), տպարանի շէնքի կառուցումն ու շահագործումը (1771 թ.)⁴: Սիմէոն Երեւանցին իր կատարած շինարարական գործերի մասին, բացի վիմական արձանագրութիւններից, յիշատակութիւն է թողել նաեւ իր հեղինակած «Ջամբո»-ում, որտեղ նշուած են 1770 թ. եկեղեցու տանիքը սրբատաշ քարերով նորոգելու եւ խորանների առաստաղները բացելով՝ թաքստոց վերնատուն կառուցելու վերաբերեալ, ինչպէս նաեւ Փիլիպպոս Կաթողիկոսի կառուցած ամառային սեղանատան, դպրատան եւ մոմատան շէնքերի վերանորոգումների մասին: Սիմէոն Երեւանցու նախաձեռնութեամբ իրականացուած գործերից են նաեւ իբրեւ կաթողիկոսական ամառանոց ծառայող երկյարկանի դարպասը, «մաղազան» կամ սառցարանի շէնքը, վանքի կոյուղու ցանցի կատարելագործումը եւ շէնքերի յատակները

¹ Յովհ. Շահխաթունեանց, Աշխ., հ.Ա, էջ 94 հմմտ. Վ. Յարութիւնեան, Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, էջ 65:

² «Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 2, Երևան, 1988, էջ 350:

³ Տե՛ս Վ. Յարութիւնեան, Հայկական ճարտարապետութեան պատմութիւն, էջ 483:

⁴ Յովհաննէս Շահխաթունեանց, Աշխ., հ.Ա, էջ 96-98:

խոնաւութիւնից զերծ պահելու համար ստեղծուած ստորգետնեայ հորերի ցանցը եւ այլն¹:

Ղուկաս Կարնեցի Կաթողիկոսը (1780-1799 թթ.) իր նախորդի ձեռնարկումների արժանի շարունակողն էր: Նրա գահակալութեան տարիներին հիմնականում կառուցուել են տնտեսական շինութիւններ: 1784-1785 թթ. վերանորոգուել եւ վերակառուցուել են Մայր Տաճարի շրջակայ սալայատակը, աստիճանաձեւ պատուանդանն ու նրանից վերել եղած պատերը բարձրացուել են չորս տողով: 1786 թ. Յակոբ եւ Յարութիւն Հովնաթանեանների կողմից թարմացուել է Մայր Տաճարի ներքին որմնանկարչութիւնը, 1788 թուականին վերանորոգուել է սեղանատունը: 1790 թ. արեւելեան հինգ կամարներով ընդարձակուել են ձմեռային սեղանատունը, ամբարներն ու հարաւային դարպասից մինչեւ հարաւային պարիսպների ծայրը երկարող խոհանոցը, որտեղ, մինչ այդ Աստուածատուր Համադանցի Կաթողիկոսի կառուցած տնտեսատունն էր:

19-րդ դարը եւս եղել է Մայր Աթոռի շինարարական բարեզարգման վերելքի մի նոր շրջան: Այս ժամանակներում Եփրեմ Չորագեղցի Կաթողիկոսը (1809-1830 թթ.) հերթական անգամ նորոգել է Մայր Տաճարի տանիքը, Սիմէոն Ա Երեւանցու կառուցած դպրատունը, որ գտնուել է Տաճարի հիւսիսային կողմում՝ պարիսպների միջեւ: Դպրատունը փոքրութեան պատճառով լքուել է, եւ ուսանողութիւնը տեղափոխուել է Տրդատադուան վերնայարկի սենեակները: Այդ պատճառով 1813 թ. Եփրեմ Կաթողիկոսը ձեռնարկել է նոր դպրատան կառուցումը²: Յովհաննէս Կարբեցին (1831-1842 թթ.) մինչեւ 1837 թ., Սիմէոն Ա Երեւանցի Կաթողիկոսի ձեռնարկած ամառային Վեհարանի տեղում կառուցել է Սինոդի սենեակները: Նոյն Կաթողիկոսի օրօք՝ 1837 թ. նորոգուել է Քանքան աղբիւրը, ընդարձակուել են Ղազարապատի շէնքը եւ գրադարանը³: Մայր Աթոռի շինարարական գործունէութիւնը աւելի արդիւնաւէտ է ներսէս Ե Աշտարակեցի Կաթողիկոսի գահա-

¹ Վ. Յարութիւնեան, Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, էջ 69-71:

² Տե՛ս Աբէլ Մխիթարեանց, Ըշվ. աշխ., էջ 32:

³ Տե՛ս անդ, էջ 33:

կալութեան տարիներին (1843-1857 թթ.): Նրա կարգադրութեամբ, հաւանաբար ոչ միայն գործնական, այլեւ միկրոկլիմայի ապահովման նպատակով, Ղազարապատից հարաւ, 1846-1850 թթ. կառուցուել է 70x170 մ չափերով եւ 6 մ խորութեամբ արհեստական լիճ, իսկ յարակից տարածքում հիմնուել է իր անունը կրող անտառակ, որոնք բարեկարգուել ու կատարելագործուել են յաջորդ Կաթողիկոսների՝ Մատթէոս Ա Կոստանդնուպոլսեցու (1858-1865 թթ.) եւ Գէորգ Դ Կոստանդնուպոլսեցու (1866-1882 թթ.) գահակալութեան տարիներին: Ներսէս Աշտարակեցու կաթողիկոսութեան տարիներին կառուցուել են նաեւ մի քանի արտադրական նշանակութեան շինութիւններ, այդ թւում՝ շերամից մետաքսաթելի ստացման, թղթի, շաքարի արտադրամասերը, անասնագոմբ¹: Ինչպէս նշում է Վ. Յարութիւնեանը՝ Ներսէս Աշտարակեցու նախաձեռնութիւններով Ս. Էջմիածնի շինարարական գործունէութիւնը ծրագրուած բնոյթ է ստացել, որ մեծ մասշտաբների է հասցուել Գէորգ Դ Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի օրօք: Այդ ծրագիրը ներկայացուած է Կաթողիկոսի 1868 թ. կոնդակում²: Իրօք, Գէորգ Դ Կաթողիկոսի շինարարական գործունէութիւնը մոնումենտալ զարգացման ուղու վրայ դրեց Ս. Էջմիածնի համալիրի յետագայ կառուցապատումը: Բացի Մայր Աթոռի բարեկարգման աշխատանքները, ուշագրաւ են նաեւ 1868 թ. Տաճարի արեւելեան կողմի թանգարանի շինարարութիւնը, 1869 թուականին՝ իր անունով կոչուած Գէորգեան ճեմարանի կառուցումը: Վերջինս 1871 թուականի հրեհհի պատճառով չահագործման է յանձնուել 1874 թ., ընդ որում այրուած մասը վերականգնուել է աւելի ուշ՝ 1885 թ.: Գէորգ Դ Հայրապետի կարեւոր շինարարական նախաձեռնութիւններից է նաեւ 1879 թ. կառուցուած եւ Արարատեան փողոցից (Էջմիածին քաղաքի ներկայիս Արարատեան փողոցից) արեւելք գտնուող՝ ճեմարանի սաների ննջարանը: Ինչպէս ճեմարանը, այնպէս էլ ննջարանային մասնաշէնքը կառուցուել են վանքի պարսպից դուրս: Այս ամէնով Գէորգ Դ Հայրապետը մեծ ներդրում ունի Մայր Տաճարի մասնագիտական վերականգնման գործում: Այդ ժամանակ առաջնահերթ խնդիրներ էին վանքի բակի եւ Տաճարի

¹ Անդ, էջ 34-39:

² Վ. Յարութիւնեան, Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, էջ 82-83:

վերանորոգումը, որը ընթացք ստանալով, շարունակուեց նրա յաջորդների կողմից: Նշուած աշխատանքներում կարեւոր են Մայր Տաճարի յատակի եւ շրջակայ բակի մակարդակների հաւասարեցումը: Խնդիրն այն էր, որ եկեղեցու յատակը երեք աստիճանի չափով ցածր էր բակի մակարդակից, ձեռնարկուած մեծածաւալ աշխատանքների արդիւնքում այն մէկ աստիճանի չափով բարձրացուել է շրջապատող բակից: Տուեալ աշխատանքներով հերթական անգամ նորոգուել են Մայր Տաճարի տանիքն ու հիմնախարիսխները: Ուշագրաւ է, որ ներկայացուող տարիներին ստեղծուել է Տաճարի վերականգնման աշխատանքները վերահսկող խորհուրդ, որի առաջնահերթ նպատակն էր անաղարտ պահել եկեղեցու յօրինուածքը եւ ձեւերը: Այսինքն՝ նախատեսուել էր Մայր Տաճարի վրայ կատարուող շինարարական աշխատանքները իրականացնել ոչ թէ սոսկ որպէս վերանորոգութիւն, այլ՝ մասնագիտական վերականգնում: Հակառակ սրան, ինչպէս փաստագրուած է Վ. Յարուլթիւնեանը՝ այս ընթացքում ճիշտ լուծումների հետ կատարուել են նաեւ մասնագիտական բազմաթիւ խախտումներ¹: Փաստօրէն, որքան էլ նշուած միջոցառումներն ու աշխատանքները իրականացուել են Մակար Ա Թեղուտեցի Կաթողիկոսի (1885-1891 թթ.) ժամանակ, այնուամենայնիւ, դրանք Գէորգ Դ Կաթողիկոսի նախաձեռնած ծրագրերի շարունակութիւնն էին: Կարեւոր է նշել, որ Մակար Ա Կաթողիկոսի գահակալութեան տարիներին՝ 1889 թ. վանքի պարիսպներից դուրս կառուցուել է նաեւ տպարանի շէնքը:

Երեմիայ Արքեպիսկոպոսի կաթողիկոսական տեղապահութեան շրջանում, 1889 թ., տպարանի հիւսիսային կողմում ճարտարապետ Միքայէլ Սալամբէկեանի նախագծով կառուցուել է «Երեմեան խցերի» շէնքը:

Մկրտիչ Խրիմեան Կաթողիկոսի գահակալութեան տարիներին (1892-1907 թթ.) Մայր Աթոռի տարածքում, Հին Վեհարանի շէնքի հարաւ-արեւմտեան կողմում, 1896 թ. կառուցուել է «Խրիմեան թանգարանը»: 1902 թ. Վասիլի Միրզոյեանի նախագծով կառուցուել է նաեւ

¹ Այս եւ ստորեւ բերուած այլ տեղեկութիւնները մեջբերուում են Վ. Յարուլթիւնեանի «Սուրբ Էմիլիանի շինարար կաթողիկոսները» գրքի «Մայր տաճարի պահպանութեան ուղղութեամբ կատարուած ջանքեր» գլխից, էջ 84-104:

Հիւանդանոց-բուժարանի փոքրածաւալ շէնքը, որն այսօր գտնուում է ճեմարանական ննջարանի դիմաց, Արարատեան փողոցի արեւելեան կողմում:

Մատթէոս Բ Կոստանդնուպոլսեցի Իզմիրլեան Կաթողիկոսի (1908-1910 թթ.) անուան հետ է կապուած շինարարական մեծածաւալ իրագործումների մէջ արհեստավարժ ճարտարապետներ ներգրաւելու փորձը¹: Նրա օրօք՝ 1909 եւ 1910 թթ. ճարտարապետ Ն. Ա. Մադաթեանը կատարել է Մայր Տաճարի մասնագիտական առաջին չափագրութիւնը: Նոյն ժամանակ ճարտարապետ Պօղոս Զոհրաբեանի (Զուրաբով) նախագծով կեանքի է կոչուել Հին Մատենադարանի շէնքը, իսկ Վասիլի Միրզոյեանի նախագծով կառուցուել է սերտանոցը կամ վարժոցը եւ մանկավարժական թանգարան ծառայող երկյարկ շէնքը: Երկու շէնքերը տեղում կազմելով մի ամբողջական համալիր՝ գտնուել են Արարատեան փողոցից արեւելք:

Մատթէոս Իզմիրլեանի կարճատեւ գահակալութեանը յաջորդած Գէորգ Ե Տիխիսեցի Կաթողիկոսի (1911-1930 թթ.) օրօք իրականացուած կարեւորագոյն նախաձեռնութիւններից է Մատթէոս Իզմիրլեան Կաթողիկոսի մտայղացմամբ եւ ճարտարապետ Պ. Զոհրաբեանի նախագծով 1910 թ. կառուցուած Նոր Վեհարանի համակառոցը: Հին Վեհարանն արդէն ժամանակի պահանջներին չէր համապատասխանում, եւ ձեռնարկուում է կառուցել նորը՝ աւելի հանդիսաւորն ու արդիականը: Նոր Վեհարանի կառուցումը իրականացուել է այդ ժամանակ վանքի արեւմտեան պարսպից դուրս²: Մեծ եղեռնի տարիներին՝ 1915-1920 թթ., շէնքը հայ գաղթականների համար ծառայել է հիւանդանոց, իսկ խորհրդային կարգերի առաջին տասնամեակներին վերածուել զօրանոցի:

Հայաստանի խորհրդային տարիներին՝ 1920-1945 թթ., Ս. Էջմիածնի դանդաղած շինարարական գործունէութիւնը երկրորդ աշխարհամարտից յետոյ աստիճանաբար աշխուժացել է: Սա երկրում տիրող հայրենասիրական ոգու զարթօնքի արդիւնքն էր: Աշխարհի տարբեր կողմերից ժամանող հայ մասնագէտները մասնակցում էին հայրենիքի

¹ Վ. Յարութիւնեան, Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, էջ 117:

² «Եկեղեցական ժամանակագրութիւն՝ Մայր Աթոռ», «Արարատ», 1910, էջ 399:

վերակառուցմանը: Գէորգ Զ Չորէքչեանի (1945-1954 թթ.) նման կարող անհատականութեան կաթողիկոսական գահակալութիւնը բարենպաստ եղաւ պատմական յուշարձանների եւ եկեղեցիների պահպանութեան գործը ամուր հիմքերի վրայ դնելու համար: Գէորգ Զ Չորէքչեան Կաթողիկոսին յաջորդած պայծառ մէկ այլ անհատականութիւն՝ Վազգէն Ա Պալճեան Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր գործունէութեամբ մեծ դերակատարութիւն ունեցաւ համայնավարական կարգերի պայմաններում եկեղեցու դերի բարձրացման գործում: Նա Ազգային-եկեղեցական ժողովի ընտրած Գերագոյն հոգեւոր խորհրդից բացի, Մայր Աթոռում ստեղծեց անուանի ճարտարապետներից ու ճարտարագէտներից կազմուած շինարարական գործերի յանձնաժողով, որ գործում էր հետեւողաբար մշակուած ծրագրով եւ ոչ թէ՛ ըստ անհրաժեշտութեան: Այս յանձնաժողովը համալրուած էր բարձր գիտելիքներով ու համապարփակ իմացութեամբ օժտուած արհեստավարժ մասնագէտներով: 1955, 1956 եւ 1959 թուականներին իրականացուած պեղումներով ճշտուեցին Մայր Տաճարի ծաւալատարածական կերտուածքն ու ճարտարապետական փոխառնչութիւնները: Մշակուեցին նրա՝ արդէն իսկ համաշխարհային մշակոյթի միջնադարեան եզակի յուշարձանի յետագայ պահպանութեան ծրագրերը¹: Նկատենք, որ Վազգէն Ա Կաթողիկոսի ժամանակաշրջանում Գէորգ Դ Կոստանդնուպոլսեցի շինարար Կաթողիկոսի փայփայած ծրագրերը քարակերտ իրականութիւն դարձան: Բացի Մայր Տաճարի վերանորոգումները, կարեւոր ձեռնարկումներ կատարուեցին Մայրավանքի ճարտարապետական միասնական պատկերի ձեւաւորման ուղղութեամբ: Այդ աշխատանքների թւում են Ս. Էջմիածնի տաճարային ու վեհարանային բակերի պարսպապատումը, Ժամացոյցի աշտարակի (ճարտ. Արծրուն Գալիկեան) եւ Մայր Աթոռի արեւելեան դարպասի կառուցումները: Կատարուեցին վերանորոգման եւ ընդարձակման զանազան կարեւոր աշխատանքներ:

1962 թ. երջանկայիշատակ Վազգէն Ա Կաթողիկոսի նախաձեռնութեամբ եւ ճարտարապետ Ռաֆայէլ Իսրայէլեանի նախագծով հիմնովին

¹ Նշուածների կապակցութեամբ տես Վ. Յարութիւնեան, «Եկայք Շինեսցուք», Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1989, էջ 13-30:

նորոգուեցին Մայր Տաճարի Աւագ Խորանի Սբ. Սեղանը եւ Տաճարի կենտրոնում՝ Իջման Սբ. Սեղանը:


Աւագ Խորանի Սբ. Սեղանը, որ կերտուած է Կարրարայի մարմարից եւ նման է արծուանիստ գահի իր յօրինուածքով եւ զարդանախշային լուծումներով ամբողջականացնում է բոլոր ժամանակների Հայ ճարտարապետութեան եւ եկեղեցական արուեստի լաւագոյն նուաճումները՝ դառնալով մի նոր խօսք եւ թելադրող յետագայի նման կառոյցների ձեւաւորմանը:

Իրականացուեցին մեծարժէք ճարտարապետական փոքր ձեւեր. Մեծ Եղեռնի զոհերի յիշատակին նուիրուած Աղօթքի Խաչքար-յուշարձանը (1965 թ., ճարտ. Ռաֆայէլ Իսրայէլեան), «Կաթնաղբիւր»-ը (1967 թ., ճարտ. Ռաֆայէլ Իսրայէլեան): 1981 թ. կանգնեցուեց «Խրիմեան աղբիւր» յուշարձանը (ճարտ. Արեգ Իսրայէլեան) նուիրուած Հայոց Հայրիկի՝ Մկրտիչ Խրիմեան կաթողիկոսի յիշատակին:

Վազգէն Ա Հայրապետի գործունէութիւնը ընթացաւ ճարտարապետութեան ու արուեստների խրախուսման քաղաքականութեամբ, որի լաւագոյն օրինակներ են Բ. Արզումանեանի հեղինակած «Սփիւռք-Հայրենիք» յուշակոթողը, Նոր Վեհարանի բակի խաչքարը, ոսկեկոռ եւ աղամանդապատ մաշտոցեան այբուբենը, ոսկեկոռ խաչը եւ այլն:

Վազգէն Ա Կաթողիկոսին յաջորդած Գարեգին Ա Կաթողիկոսի (1995-1999 թթ.) կարճատեւ գահակալութեան ընթացքում Մայր Աթոռի տարածքում կառուցուեց Երեմեան խցերի հարեւանութեամբ գտնուող ուսանողական հանրակացարանը:

Ահա այսպիսին էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճարտարապետաշինարարական ընդհանուր պատկերը, երբ կաթողիկոսական գահակալութիւնը 1999 թ. նոյեմբերին ստանձնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նա իր գործունէութիւնը ծաւալեց Սիմէոն Երեւանցի Կաթողիկոսի նմանութեամբ, սակայն այլ օրինաչափութեամբ: Վանական կորիզը իր պարագծային կառուցապատմամբ հնարաւոր չէր մեծացնել, տուեալ դէպքում ընդարձակումը կատարուեց գօտիների ստեղծման ճանապարհով:




Աւագ Խորանի Ս. Սեղանը եւ Իջման Ս. Սեղանը

Այսօր աշխարհում հոգեւոր կենտրոնները, իրենց առաքելութիւնից բացի, սատարում եւ պահպանում են պատմա-մշակութային, ճարտարապետական եւ արուեստի արժէքները: Եկեղեցական եւ հոգեւոր շէնքերը համադրում են աստուածաբանական համալսարանի, գիտահետազոտական կենտրոնների, ուսումնական, թանգարանային եւ վարչական կառույցների հետ: Հայաստանի անկախութեան ժամանակաշրջանում ստեղծուած նոր պայմաններն ու հայկական լայնածաւալ գաղթօջախների առկայութիւնը, պահանջում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը վերածել զօրեղ կաթողիկոսական կենտրոնի: Բնականաբար, տուեալ հանգամանքը ենթադրում էր նաեւ Մայր Աթոռի տարածքի ընդարձակում եւ կառույցների բովանդակային մեծացում, որը ելակէտ էր Գարեգին Բ շինարար Կաթողիկոսի ծրագրերի համար: Ստորեւ ներկայացուող այս փուլը Ս. Էջմիածնի զարգացման հինգերորդ ժամանակաշրջանն է, որ անհրաժեշտօրէն ընթանում է շինարարական մտածուած եւ ծրագրուած միջոցառումներով:

2. ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԳՕՏԵՒՈՐՈՒՄԸ


Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան տարիներին Մայր Տաճարի շուրջ եղած վանական կորիզը՝ հոգեւոր, վարչական, բնակելի, ուսումնական, արտադրական, հասարակական եւ այլ շէնքերով, թեւակոխեց յստակ համակարգուած կառուցապատման փուլ: Առաջին հերթին ջանքեր գործադրուեցին վերադարձնելու խորհրդային տարիներին կորցրած տարածքները, որ հնարաւորութիւն տուեց շուրջ երկու եւ կէս անգամ մեծացնել Մայր Աթոռի տարածքը: Մայր Տաճարի բակի հատուածի շուրջ ծաւալուած՝ վեհարանային, ուսումնական, միաբանական եւ արտադրական շէնքերով կառուցապատուած տարածքները ընդարձակուեցին եւ օղակ առ օղակ հարստացուեցին միջավայրային ճարտարապետութեան սկզբունքներով: Այսօր Մայր Աթոռում կառուցուած եւ կառուցուող շէնքերի թիւը շուրջ երեք տասնեակի է հասնում, ընդ որում, դրանցից 15-ը շարք մտան Գարե-




Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավոր յատակագիրը Վազգեն Ա (1955-1994 թթ.) Հայրապետի գահակալության տարիներին



Մայր Աթոռն Գյուղի



Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր գլխավոր յատակագիծը ձեւաւորուած
 Գարեգին Բ Վեհափառի գահակալութեան առաջին տասնամեակուն



գին Բ Կաթողիկոսի գահակալութեան տարիներին: Կառուցապատման գօտեւորման մէջ սկզբունքային առանցքն ու գլխաւորը մնում են Մայր Տաճարն ու նրա շուրջ ձեւաւորուած բակը:

Ա. ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ ԵՒ ՆՐԱ ՇՐՋԱԿԱՅ ՏԱՐԱԾՔԸ ԿԱՄ ՎԱՆԱԿԱՆ ԲԱԿԸ

Այս գօտին Մայր Աթոռի հնագոյն եւ սկզբունքային մասն է, որը համալիրի կորիզն է, նրա յօրինուածքի կենտրոնը, որի գաղափարական գլխաւոր տարրը՝ հիերարխիան, հէնց Մայր Տաճարն է: Ընդ որում բակում եղած ծաւալների ու շրջակայ միւս գօտիների յօրինուածքային առանցքները խաչաձեւում են Մայր Տաճարի գմբէթի շուրջ՝ հիւսիս-հարաւ, արեւելք-արեւմուտք ուղղութիւններով: Ինչպէս ցոյց է տալիս վերեւում ներկայացուած վանքի զարգացման հակիրճ պատմութիւնը՝ վանական բակը Մայր Աթոռի համալիրաստեղծ գործօնն է: 21-րդ դարի սկզբին՝ Գարեգին Բ Կաթողիկոսի օրօք, այստեղ եղած եկեղեցական շինութիւնների կազմը հարստացաւ նորակառոյց Ս. Յովհաննէս Մկրտիչ մկրտարանով:

Ճարտարապետական նուրբ զգացողութեամբ եւ յօրինուածքային ըմբռնողութեամբ կատարուած այս յաւելումը, բակի արեւելք-արեւմուտք առանցքի հետ, ընդգծեց նաեւ հիւսիս-հարաւ ուղղութիւնը, որ մինչ այդ թոյլ էր արտայայտուած: Այսպիսով, աւելի յստակացաւ վանական բակի պատկերը եւ աւելի ընդգծուեց նրա պարագծի միաշնչութիւնն ու անսամբլային կապը Մայր Տաճարի հետ, որտեղ գործուն դեր ունի բակի կանաչապատումը եւ ճարտարապետական փոքր ձեւերի միջոցով տարածութեան կազմակերպումը: Փաստօրէն, ստեղծուած միջավայրում վանական բակի պարագծային շէնքերի կառուցապատման ուրուագիծը ուղղագծային է, իսկ յարկայնութիւնը՝ երկյարկ. Մայր Տաճարն ու մկրտարանը ուրուագծով ազատ են եւ ունեն քանդակային դրուածք, որտեղ մասշտաբով առաջին դոմինանտը Մայր Տաճարն է, իսկ երկրորդը՝ նորակառոյց մկրտարանը: Համալիրի բովանդակ մակերեւոյթների ձեւակերտման մէջ իր աշխուժութեամբ





միանգամայն ուշագրավ է Մայր Տաճարի ծաւալայնութիւնը, կառուցապատման մնացեալ շէնքերի մակերեւոյթները միանգամայն հարթ են եւ ճակատային: Միեւնոյն օրինաչափութեամբ են լուծուած նաեւ գունային եւ լոյս-ստուերի համադրման խնդիրներն ու շէնքերի մասնահատման առանձնայատկութիւնները: Փաստօրէն, Մայր Տաճարը իր բոլոր ենթամասերով առաջադրում է բարդ ու քանդակային մասնահատումներ, մինչդեռ պարագծային կառուցապատման բոլոր բաղկացուցիչները ուղղաձիգ բաժանումներով հորիզոնականութիւններ չնչող շարքեր են:

Բ. ԳԵՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԶԵՄԱՐԱՆԸ ԿԱՄ ԿՐԹԱԿԱՆ ԳՕՏԻՆ ԵՒ ՇՐՋԱԿԱՅ ՀԱՄԱԿԱՌՈՅՑՆԵՐԸ

Այս գօտին հինգ ենթահամակառոյցների միջեւ տարածուող մուտքային հրապարակ է: Նրանում ներգրաւուած կառոյցները հիմնականում ուսումնակրթական նշանակութեան են: Իրականում վանքի պարիսպներից դուրս ծաւալուած տուեալ գօտին, ստեղծուելով դեռեւս 19-րդ դարի երկրորդ կէսին Գէորգ Դ Կոստանդնուպոլսեցի շինարար Կաթողիկոսի ջանքերով, որպէս բարձրագոյն հոգեւոր ուսումնառութեան կենտրոն, իր պերճանքին հասցուեց Գարեգին Բ Կաթողիկոսի գործունէութեամբ: Համալիրը ընդհանուր առմամբ շարունակում է վանական բակի յօրինուածքը: Նրա արեւելք-արեւմուտք առանցքը, սկսուելով Ս. Գրիգոր Լուսաւորչի դարպասից, արեւմտեան կողմով շարունակաբար երկարում է դէպի Մայր Տաճարի երկայնական առանցքը, իսկ արեւելեան մասով՝ ընդարձակում է դէպի Արարատեան փողոցի միւս կողմում տարածուող հրապակը՝ ատամնաբուժարանի, երբեմնի սերտարանի ու ննջարանների շէնքերի միջեւ: Փաստօրէն, այս առանցքը տպարանի շէնքի եւ Երեմեան խցերի միջեւ անցնող փողոցով միանում է վանական բակին եւ ստեղծում է երկու գօտիների յօրինուածքի կենտրոնների օղակաւորում: Վազգէնեան դարպասից Ս. Գայիանէ վանքի ուղղութեամբ ընթացող փողոցը մեր օրերի մտայղացումն է:



Տեսարաններ ուսումնական գոտու տարածքից



Այն, փոխուղղահայեաց լինելով Մայր Աթոռի արեւելք-արեւմուտք առանցքին, միաժամանակ զուգահեռ է Մայր Տաճարի տրանսեպտային առանցքի հետ: Այսպիսով, ուսումնական գօտին դէպի վանական բակ տանող նախահրապարակ է, որի կառուցապատման բաղկացուցիչներն են Երեմեան խցերը, ուսանողական հանրակացարանը, Գէորգեան հոգեւոր ճեմարանի համակառոյցը, Բաց խորանը, Վաչէ եւ Թամար Մանուկեան նոր մատենադարանը, տպարանի շէնքը: Արարատեան փողոցի արեւելեան կողմում գտնուող համակառոյցը դեռեւս իր ժամանակակից լուծումը չի ստացել: Ուսումնասիրուող գօտու կերպարի ստեղծման մէջ գլխաւորը Գէորգեան հոգեւոր ճեմարանի համալսարանական համակառոյցն է, որ չափազանց շահեկան կարգով միահիւսում է Գէորգեան ճեմարանը, մարզական եւ հանդիսութիւնների դահլիճների երկյարկ շէնքը եւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցին: Նշուածների անսամբլային միասնական լուծումը, միջավայրում Գէորգեան ճեմարանի հետ նոր եւ մեծացուած մասշտաբ են ստեղծում, ըստ այդմ էլ ընդգծում են ենթատարածքի ուսումնական մթնոլորտը: Սա Գարեգին Բ Հայրապետի նոր մտայղացման ճարտարապետական մարմնաւորումն է, որ նպատակամղուած է աստուածաբանական համալսարանական զարգացած կենտրոնի ստեղծմանը: Այս առումով նշուած շէնքերի հետ կարեւորում են նաեւ դէպի Ս. Գայրիանէ վանք տանող ճանապարհին միաբանական գերեզմանոցին մերձակայ էջմիածնի Հայորդեաց տունն ու Էօրնեկեան դպրոցը, ինչպէս նաեւ՝ երջանկայիշատակ Գարեգին Ա Կաթողիկոսի՝ նախատեսուող կրթական կենտրոնը: Այս՝ ճեմարանի եւ Բաց խորանի առաջ փռուած հրապարակի տարածքը, բացօթեայ թանգարանի վերածելը օրըստօրէ ամբողջականութեան մթնոլորտ է ստեղծում ուսումնական գօտու եւ վանական բակի միջեւ: Այնուամենայնիւ, կարելի է նկատել, որ Մայր Աթոռ ժամանող այցելուների շարժման յետագիծը դեռեւս լաւագոյն լուծումը չի ստացել, քանի որ այն սկսուելով ուսումնական գօտու տարածքից, դէպի Մայր Տաճար է ընթանում նրա հանդիսաւոր մուտքի հակառակ կողմով: Նախընտրելի կլինէր այցելուների մուտքը Մայր Աթոռ կատարուէր հէնց վանական բակի՝ Մայր Տաճարի շքամուտքի դիմահայեաց



մասով, այսինքն՝ Մայր Աթոռի հիւսիսային կողմում եղած երբեմնի պատմական մուտքի կողմից: Խօսքը վերաբերում է Մայր Տաճարի բակի հիւսիսային կողմով ձգուող այգու տարածքին, նրա՝ Ս. Վարդան եւ Ս. Յովհաննէս Մկրտիչ մկրտարանի ու ժամացոյցի աշտարակի միջեւ ընկած հատուածին: Այս ճանապարհով միանգամայն հնարաւոր կլինէր մուտք գործել Մայր Աթոռի ամենագործնական նշանակութեան հրապարակ, որը գտնուում է Մայր Տաճարի եւ Տրդատականամարի պատմական հանգոյցում: Բնականաբար, նման մտայղացումը կարելի է դիտել Մայր Աթոռի տարածքի գօտեւորուած համակարգի արդիւնաւէտ արգասիքներից մէկը:

Գ. ՎԵՀԱՐԱՆԻ ԿԱՄ ՎԱՐՉԱԿԱՆ ԳՕՏԻՆ

Վեհարանը կամ Հայրապետանոցը ի սկզբանէ Մայր Տաճարին յարակից կառոյցն է եղել: Երկու շէնքերը միասնաբար կազմել են Մայր Աթոռը: Այս իրողութիւնը վերամրագրել էր դեռեւս Ղազար Զահկեցի Կաթողիկոսը՝ 1741 թ. Հին Վեհարանի շէնքի կառուցմամբ: 19-րդ դարում կաթողիկոսական գրասենեակի մասնաշէնքի ու «Հայրիկեան թանգարանի» կառուցումը առիթ հանդիսացան Մայր Աթոռի ընդարձակմանը դէպի արեւմուտք, ինչը մտայղացուեց դեռեւս Մատթէոս Բ Կոստանդնուպոլսեցի Իգմիրլեան Կաթողիկոսի շինարարական ծրագրերում եւ կառուցուեց Գէորգ Ե Տփլիսեցի Կաթողիկոսի գահակալութեան տարիներին: Շէնքի կառուցման բարերարն էր մեծանուն գործարար Ալեքսանդր Մանթաշեանը, իսկ ճարտարապետը՝ Պօղոս Զոհրաբեանը: Շէնքի հիմնարկէքը կատարուել է 1910 թ. յունիսի 6-ին¹: Բնականաբար, Վեհարանի գօտու ստեղծման գործում որոշիչ է նրատեղադրութիւնը հէնց Մայր Տաճարի առանցքով: Տուեալ հանգամանքը ստեղծագործաբար շարունակուեց Վազգէն Ա Կաթողիկոսի օրօք: Նորովի վերակառուցուեց Տրդատայ դուռը, որ հանդիսաւորութիւն հաղորդելով, կապող օղակ դարձաւ վանական եւ Վեհարանի բակերի

¹ Տե՛ս Վ. Յարութիւնեան, Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, էջ 120:





Տեսարաններ Վեհարանի բակից



միասնական տարածութեան ստեղծման գործում¹: Վազգէն Ա Կաթողիկոսի նախաձեռնութեամբ կատարուած բարենորոգչական եւ բարեկարգման աշխատանքների մէջ², առանձնապէս պերճաշուք միջոցառում է նրա օրօք՝ 1982 թ. Բաղդասար Արզումանեանի նախագծով իրականացուած Ալէք եւ Մարի Մանուկեան դանձատունը: Վեհարանի բակի բարեկարգութիւնը շարունակուած է նաեւ այսօր Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալութեան տարիներին: Համալիրում, Վեհարանից հիւսիս, 2004 թ. կառուցուել է նոր Դիւանատունը, անմիջապէս Վեհարանի յետնամասում սկսուել է հանդիսութիւնների դահլիճի մասնաշէնքի կառուցումը, աւելացուել է «պաշտօնական դարպասը», որ յարակից է Հայրիկեան թանգարանին: Նշուածներից բացի վերականգնուած է Հին Վեհարանի շէնքը եւ վերականգնուելու որպէս թանգարան եւ հիւրատուն: Այսպէս Վեհարանի բակում ստեղծուել է երեք թանգարաններից կազմուած համակառոյց: Բակի պարագծային կառուցապատումը 2011 թ. ամբողջացուել է շինարարական փոքր, բայց անսամբլային առումով անհրաժեշտ երկու լրացումներով եւս՝ այժմեան վարչատնտեսական շէնքի հիւսիսային ուղղութեամբ ընդարձակումն է, իսկ միւսը՝ բարձրաստիճան հոգեւորականների հիւրատունն է, որ իրականացուել է Հին Վեհարանի շարունակութեան վրայ գտնուող երկյարկ սենեակների տեղում: Սա լրացնում է Վեհարանի բակի հարաւարեւմտեան անկեան կառուցապատումը, որ միաժամանակ կապող հանգոյց է Հին Վեհարանի եւ միաբանական կացարանների միջեւ:

Յօրինուածքային առումով վերոյիշեալ բակի գլխաւոր կառոյցը Նոր Վեհարանն է, իսկ յօրինուածքի կենտրոնը՝ նրա առջեւ ծաւալուող բարեկարգ բակը, որ անմիջապէս յարակից է վանական բակին: Վեհարանն ու Մայր Տաճարը իրար հետ ծաւալատարածական միասնութեան մէջ են գտնուում Մայր Աթոռի հիմնական՝ արեւելք-արեւմուտք առանցքի միջոցով:

¹ Տե՛ս Վ. Յարութիւնեան, Եկայք Շինեսցուք, էջ 42:

² Տե՛ս անդ, էջ 49:



Դ. ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՌՈՅՑԸ ԿԱՄ ԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ԳՕՏԻՆ

Մայր Աթոռի տարածքի կառուցապատման` Գարեգին Բ Հայրապետի գահակալութեան տարիներին կատարուող զարգացումների կարեւորագոյն առանձնայատկութիւններից մէկն է նաեւ վանական կեցութեան տարածքների ընդարձակումն ու արդիական բարեկարգումը: Միաբանական կացարանները, Գարեգին Բ Կաթողիկոսի օրօք զգալիօրէն ընդլայնուեցին, դառնալով Մայր Տաճարի բակի շուրջ ծաւալուող ուսումնահասարակական ու Վեհարանի գօտիները ամբողջացնող մի նոր գօտի: Իրար յաջորդող երեք բակերից կազմուած այս համակառուցքը ժառանգորդական բնոյթ է կրում: Այստեղ ներդաշնակօրէն իրար են միացուել հիւրատունը, Ղազարապատը եւ բոլոր յարմարութիւններով օժտուած` միաբանների 100 տեղանոց բնակելի շէնքերը: Կացարանային համալիրում հետաքրքիր լուծումներով խմբաւորուել են հինն ու նորը: Դրանք միասնաբար տիպաբանական մէկ ամբողջութիւն են եւ յօրինուածքային առումով երբեք իրար չեն բացասում, մանաւանդ, որ վանական կեանքի այս կենտրոնը օրգանապէս իրար է կապում Մայր Աթոռի միւս բաղկացուցիչ հանգոյցները: Միաբանական կացարանների երեք բակերի մուտքերը բնականոն տեղաբաշխում ունեն. ի յաւելումն Մսրայ դռան, ամէն մի բակ օժտուել է թաղակապ անցումներով:

Կացարանների համակառուցի հարաւային կողմով անցնող երկար եւ ուղղագիծ ասֆալտապատ ճանապարհը, ստեղծելով հետաքրքիր հեռանկարային խորք` ֆունկցիոնալ առումով չափազանց հմուտ լուծում է: Այն, առանց խոչընդոտելու Մայր Աթոռի միւս տարածքների հետիոտն շարժմանը, հնարաւորութիւն է ստեղծում յարմարաւէտ կերպով կազմակերպել աւտոմեքենաների մօտեցումը միաբանական կացարաններին ու Վեհարանին: Աւելին, տուեալ ճանապարհի միջոցով միանգամայն օրգանական միասնութիւն է հաստատուում կացարաններից դէպի հարաւ գտնուող վանքապատկան տնտեսութիւնների շէնքի, ինչպէս նաեւ Մայր Աթոռի մէկ այլ ժառանգորդական գօտու` «Ներսիսեան» անտառի ու աւազանի հետ: Յիշեալ ճանապարհի կարեւորութիւնը աւելի հանգամանալից պարզաբանելու համար նշենք,





Տեսարաններ միաբանական և արտադրական գոտիներից



որ այն երկարելով Վեհարանի ուղղութեամբ, կարող է ձգուել մինչեւ նրա բակի ու հանդիսութիւնների դահլիճի արեւմտեան կողմում ստեղծուած նորակառոյց մանկական խաղավայրը, որ մեծ պերճանք է հաղորդում Մայր Աթոռի միջավայրային բովանդակութեանը:

Ե. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՕԺԱՆԴԱԿ ԶԵՆՔԵՐԻ ՏԱՐԱԾՔԸ ԿԱՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՕՏԻՆ

Տնտեսական գօտին նոյնպէս Գարեգին Բ Կաթողիկոսի շինարարական գործունէութեան արգասիքն է: Այն զարգացնում է մինչ այդ այստեղ եղած նման յարմարութիւններով տարածքը՝ վերածելով այն պարփակ համակառոյցի: Համալիրը ընդգրկում է կառատունը, ժամանակակից տեխնիկական միջոցներով օժտուած արտադրական տարածքներն ու տեխնիկական անձնակազմի գրասենեակները, տնտեսական պահեստները, պոմպակայանը, էլեկտրական ենթակայանը, ջրային տնտեսութիւնը: Օժանդակ յարմարութիւնների նման տեղաբաշխումը հեռանկար խոստացող լուծում է, որ բաւարարելով Մայր Աթոռի կենցաղային կարիքները, միաժամանակ կարող է ծառայել դէպի հարաւ եւ արեւմուտք ծաւալուող այգեպատ տարածքների շահագործմանը:

Այնպէս է ստացւում, որ եթէ Բաց խորանի հրապարակը, որ հասնում է մինչեւ վանական բակն ու միւս գօտիները, Մայր Աթոռի տարածքում հետիոտն շարժման հնարաւորութիւն է տալիս, ապա օժանդակ տնտեսութեան մասնաշէնքի առջեւ ստեղծուած հրապարակաձեւ կայանատեղին կազմակերպում է Մայր Աթոռի տարածք ժամանող մեքենաների երթեւեկը:



3. ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԻՆ ԿԱՌՈՅՑՑՆԵՐԻՆ՝ ՆՈՐ ԿԵԱՆՔ

Մայր Աթոռի տարածքում եղած բոլոր կառույցները յուշարձանի կարգավիճակ ունեն եւ նրանց վերանորոգումները յուշարձանապահպանութեան բնոյթ են կրում: Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալութեան տարիներին Մայր Աթոռի տարածքում եղած կառույցները բազմիցս վերանորոգութիւնների են ենթարկուել: Եթէ Մայր Աթոռի տարածքի գօտեւորման հիմքում ընկած էր ռէվիտալիզացիայի (միջավայրի մթնոլորտային վերակենդանացման) գաղափարը, ապա ներքոյիչեալ յուշարձանների վերանորոգութիւնն առաջնորդուեց վերականգնման եւ վերակառուցման սկզբունքներով:

ԱՃԽԱՏԱՆՔՆԵՐ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎՐԱՅ

Մայր Տաճարը համաշխարհային միջնադարի ճանաչողական նշանակութեան կառույցներից է: Նրա վերանորոգութիւնների տարեգրութեանը անդրադարձ կատարուեց վերեւում ներկայացուած Մայրավանքի զարգացման պատմութեան մէջ: Վերջին վերանորոգութիւնների ընթացքում (1955 թ.) եկեղեցու կրող կոնստրուկցիաների, այսինքն, գմբէթը կրող չորս սիւնների ամրացումը կատարուել էր ամրանաւորման միջոցով, իրականացուել էին նաեւ կտուրի խոնաւութիւնը վերացնելուն միտուած վերանորոգութիւններ, ինչպէս նաեւ որմնանկարների մաքրման, ամրացման եւ լրացման աշխատանքներ¹: Այս առումով առանձնապէս կարեւորուում են 1956 թ. եւ աւելի ուշ Մայր Տաճարի տարածքում կազմակերպուած պեղումներն ու հնագիտական հետազօտութիւնները: Դրանց արդիւնքում ի յայտ եկած ժամանակագրական շերտերը կոնսերուացուել եւ պահպանուել են: Խօսքը վերաբերում է Մայր Տաճարի հիմքում եղած ուրարտական ու անտիկ ժամանակա-

¹ Տե՛ս Վ. Յարութիւնեան, Եկայք Շինեսցուք, էջ 18-23:



Մայր Տաճարի վերանորոգուած որմնանկարները



Մայր Տաճարի թանգարանի վերանորոգված որմնանկարները

չրջանների գտածոներին եւ յատկապէս վաղ քրիստոնէական բազիլիկ կառոյցի հետքերին, որը Վահան Մամիկոնեանի շինարարական գործունէութեամբ վերափոխուել էր խաչաձեւ եւ կենտրոնազմէթ՝ մինչ օրս պահպանուած յօրինուածքի¹: Այս ընթացքում կատարուել են նաեւ Մայր Տաճարի Աւագ եւ Իջման սեղանների վերակառուցումները, հարաւային զանգակատան վերականգնումը:

Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալութեան առաջին տարուանից՝ 2000 թ. ձեռնարկուեցին Մայր Տաճարի ամրացման նոր աշխատանքներ, այդ թւում՝ կտուրի ջրամեկուսացումը, ներքին որմնանկարների մաքրումը: Մայր Տաճարի տանիքը միշտ էլ շէնքի խոցելի մասն է եղել եւ բազմիցս վերանորոգուել է:

Վերջին վերանորոգութեան ընթացքում իրականացուած կապարային ծածկոյթը, կոնդենսատի (խոնաւութեան առաջացման) պատճառ դառնալով, քայքայել էր յատկապէս թանգարանի առաստաղի որմնանկարները: Տանիքի ծածկի օղափոխութիւնը ապահովելու նպատակով կապարային ծածկոյթը փոխարինուեց պղնձեայ ծածկոյթով: Տաճարի որմնանկարների մակերեւոյթի իւղոտուածութիւնը վերացնելու համար օգտագործուեցին զանազան մաքրող ու պահպանիչ լուծոյթներ: 2008 թ. իրականացուեց նաեւ եկեղեցու թանգարանային մասի որմնանկարների վերականգնումը: Նկարների որոշ մասեր քայքայուել էին, դրանք լաբորատոր հետազօտութիւնների միջոցով ուսումնասիրուելով՝ վերականգնուել են Մայր Աթոռի նկարիչ Անդրանիկ Անտօնեանի կողմից:

ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ՆՈՐ ԴԱՐՊԱՍՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Պարիսպների վերակառուցման կապակցութեամբ, ի յաւելումն Վազգէն Ա Կաթողիկոսի շրջանում իրականացուած Արեւելեան, Հիւսիսային դարպասների եւ ժամացոյցի աշտարակի (ճարտ.՝ Ա. Գալիկեան, 1959 թ.), Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալութեան տարիներին կա-

¹ Տե՛ս անդ, էջ 24-26:



Տեսարաններ Մայր Աթոռի նորակառույց դարպասներից՝ վերելում Պաշտօնական մուտքը, ներքելում՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի դարպասը

ռուցուեցին եւս երկու դարպասներ Արարատեան փողոցի կողմում՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի եւ Վեհարանի բակի հարաւային կողմում՝ պաշտօնական այցելութիւններ:

Վազգէնեան դարպասը, որ կառուցուել էր 1962 թ. Վազգէն Ա Կաթողիկոսի նախաձեռնութեամբ եւ ճարտարապետ Ա. Գալիկեանի նախագծով, Գարեգին Բ Կաթողիկոսի օրօք կատարուած ընդարձակումների արդիւնքում, 2002 թ. տեղափոխուեց դէպի քաղաքային՝ Կոմիտասի հրապարակ: Այն փոփոխութիւնների չենթարկուեց, մնաց Հոռոմոսի վանքի յաղթականարի՝ «Ղօշերի» բնագրային ձեւերով¹. Ինչը ամրագրուած է վիմական արձանագրութեամբ (տե՛ս վիմական արձանագրութիւն Թ. 5):

Ս. Գրիգոր Լուսաւորչի դարպասը յօրինուածքային միասնութեան մէջ է Բաց Խորանի հետ: Այն ճարտարապետութեամբ միանգամայն տարբեր է միւս երկու դարպասներից եւ նուիրուած է Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակին: Կոթողի եւ յարակից Խորանի ճարտարապետներն են Ջիմ Թորոսեանը եւ Ռոմէօ Ջուլհակեանը: Ս. Գրիգոր Լուսաւորչի դարպասը մտայղացուած է որպէս մոնումենտալ տետրապիլօն, որն աշխարհի կողմերի նկատմամբ տեղադրուած հեռանկարային կամարների եւ վերեւից դէպի երկնային լոյսը բացուող դմբէթատակ քառակուսու միջոցով սաւառնող տարածականութիւն եւ լոյս ու ստուերային խաղ է ստեղծում: Համակառոյցը իրականացուել է կապտաւուն բազալտից: Տետրապիլօնի արեւելեան ճակատին՝ կամարի մէջտեղում, 3 մ բարձրութեամբ քրիստոնէական խաչն է, որի երկու կողմերում Ս. Տրդատ թագաւորի ու Ս. Գրիգոր Լուսաւորչի հարթաքանդակներն են: Հարթաքանդակային կոմպոզիցիայի ներքեւում, ուղղանկիւն պարագծով ճաղապատ մուտքն է, որի թափանցիկ կառուցուածքը թոյլ է տալիս հեռում նկատելի դարձնել եւ ընդհանուր պատկերի մէջ ընդգրկել Մայր Տաճարը: Արեւմտեան ճակատին՝ Լուսաւորչի եւ Տրդատ արքայի քանդակների բարձրութեամբ, կամարի կողերին աստիճանաձեւ պատուանդանի ձե-

¹ Տե՛ս Վ. Յարութիւնեան, Եկայք շինեսցուք, էջ 34:

ևով զետեղուած պարզակաների վրայ Հայաստանում քրիստոնէութիւնը տարածող Սբ. Թադէոս եւ Սբ. Բարդուղիմէոս առաքեալների հարթաքանդականերն են: Հարթութիւնների ծաւալատարածական պլաստիկականութիւնը լրացնում են հայատառ վիմական արձանագրութիւնները, որոնցից ամենաընդարձակը փորագրուած է դարպաս-կոթողի հիւսիսային ճակատի արեւելեան թեւի վրայ (տե՛ս վիմական արձանագրութիւն Թ. 4):

2007-2009 թթ. իրականացուած Վեհարանի պաշտօնական դարպասի նախագծի հեղինակն է ճարտարապետ Գրիգոր Նալբանդեանը: Դարպասի նշանակութիւնը դէպի Վեհարան պաշտօնական այցելութիւնների մուտքը ապահովելն է: Այն կամարային բացուածքի երկու կողմերում պահակային ծառայութեան համար նախատեսուած աշտարակաձեւ ծաւալներով եզրափակուած աւտոմատ ղեկավարուող գեղազարդ մետաղական ճաղացանց է, կառուցուածքով երկփեղկ դուռ է: Դարպասի ճարտարապետական յորինուածքի մշակումը եւ շինանիւթի ընտրութիւնը պայմանաւորուած է ինչպէս Վազգէնեան դարպասի ճարտարապետութեամբ, այնպէս էլ յարակից՝ Խրիմեան թանգարանի պատմական կերպարին համահունչ միջավայրի ստեղծմամբ:

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՏՊԱՐԱՆԻ ԾԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՄԸ

Տպարանի շէնքը գտնուում է դէպի Մայր Տաճար տանող գլխաւոր ճանապարհի ձախ կողմում՝ Երեմեան խցերին առընթեր: Այստեղ տարածական համահնչութիւն ստեղծելը անյետաձգելի անհրաժեշտութիւն էր: Տպարանը վերակառուցուել է Վազգէն Ա կաթողիկոսի օրօք, վերջերս Գարեգին Բ Կաթողիկոսի ձեռնարկած տարածական գօտեւորման աշխատանքների կապակցութեամբ՝ Երեմեան խցերի այգեպատ տարածքի հետ սիմետրիայի ապահովման նպատակով, կատարուեց տպարանի առջեւում գտնուող հողատարածքի ցանկապատում:

Տպարանի շէնքը հիմնադրուել է դեռեւս 1889 թ. Մակար Կաթողիկոսի նախաձեռնութեամբ: 1901 թ. միայարկ շինութեանը կից



Մայր Աթոռի տպարանի վերանորոգության շինքը

Հարաւային կողմից աւելացուել են երկու ընդարձակ կամարակապ սրահներ՝ մասնակի նկուղով: Վ. Յարութիւնեանն այս առթիւ նշում է՝ «Երկրորդ յարկը կառուցուել էր մեր ժամանակներում եւ օգտագործում էր որպէս հանրակացարան»¹: Համաձայն ճարտարապետ Ա. Գալիկեանի եւ ինժեներ Ա. Մատինեանի 1959 թ. արուած տեխնոլոգիական նախագծի՝ երկրորդ յարկը ամբողջապէս պիտի քանդուէր եւ նորից վերակառուցուէր առաջին յարկի ճարտարապետական ձեւերով ու նոյն գոյնի քարով: Ըստ այդմ 1960-1962 թթ. աւելացուել է 4 մ բարձրութեամբ երկրորդ յարկը: Որքան էլ շէնքի վիճակը գնահատուել է բաւարար, 2003 թ. անհրաժեշտութիւն զգացուեց այնտեղ իրականացնել վերականգնման եւ վերակառուցման մի շարք աշխատանքներ: Շէնքի արտաքին պատերի ներքեւի հատուածներում կատարուել է մէկ մետր խորութեամբ ջրամեկուսացում: Արեւելեան ճակատի մայթի ասֆալտապատ ծածկոյթը փոխարինուել է ասֆալտ-բետօնով, իսկ կորոզիայի ենթարկուած արտաքին պատերի երեսաշերտը մաքրուել է աւազաշիթային եղանակով: Նկատի ունենալով, որ տպարանի շէնքը համարում է պատմական յուշարձան, վերանորոգման ընթացքում նրա արտաքին ճարտարապետական ձեւերը եւ լուծումները պահպանուել են նոյնութեամբ եւ չեն փոխուել: Առաջին յարկի մոմի արտադրամասը տեղափոխուել է եւ դրա տեղը վերածուել է գրատուն-սրահի, որտեղ այսօր գրքեր եւ յուշանուէրներ են վաճառուում: Սրահի համար որպէս մուտք են ծառայում հիւսիսային ճակատի առաջին յարկի մէջտեղի երկու պատուհանները, որոնք փոխարինուել են ճակատի ճարտարապետական ձեւերին համահունչ փայտեայ ապակեպատ դռներով: Տպագրատան ներքին ձեւաւորման համար, պատերի ներքին մակերեսների սուղը քանդելով բացուել է քարի անմշակ ֆակտուրան, որ մաքրուելով՝ ինտերիերում հետաքրքիր տեսք է ստեղծում: Այս ընթացքում հիմնանորոգման են ենթարկուել շէնքի օդափոխութեան, կոյուղու, ջրամատակարարման, ջեռուցման եւ ջրահեռացման համակարգերը:

¹ Վ. Յարութիւնեան, Եկայք Շինեսցուք, էջ 39:

ՀԻՆ ՎԵՆԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Հին Վեհարանը կառուցուել է 1738-1741 թթ. Ղազար Զահկեցի Կաթողիկոսի օրօք: Այն երկյարկանի, անպաճոյճ, հում եւ թրծուած աղիւսով իրականացուած շէնք է, որը դարերի ընթացքում հնացել-մաշուել էր: Այն Ղազարապատի հետ վերջին անգամ վերանորոգուել է 1968 թ. Վազգէն Ա Կաթողիկոսի նախաձեռնութեամբ, երբ կաթողիկոսական նստավայրի տեղափոխուելով Նոր Վեհարանի շէնք, Հին Վեհարանը վերափոխուել է հայ Կաթողիկոսների թանգարանի (ճարտարապետ՝ Ա. Գալկեան)¹:

Վերաշինութեան ընթացքում ամրացուել են շէնքի հիմքերը, փակուել են շէնքի հիւսիսային կողմի մուտքը, ու վերացուել նրա առաջ եղած աստիճանավանդակը, ինչպէս նաեւ վերակառուցուել են հարաւային սանդղքատունը ու նրա արեւելեան եւ արեւմտեան կողմերից բացուել են նոր մուտքեր, կատարուել են արտաքին երեսպատման աշխատանքներ, թանգարանացման գործընթացով պայմանաւորուած՝ յարդարուել են նկուղային եւ երկրորդ՝ «Ծաղկեայ» կոչուող գահադահլիճի յարկերը²:

Գարեգին Բ Հայրապետի նախաձեռնած տարածական զօտեւորման աշխատանքներով պայմանաւորուած, պահանջ առաջացաւ կատարելագործելու նաեւ Հայոց Կաթողիկոսների թանգարանը եւ նրա յարակից շինութիւնը: Վերակառուցման ճարտարապետն է Ա. Նազարէթեանը: Ներկայում վերակառուցումը ընթացքի մէջ է, քանդուել են Հին Վեհարանի հարաւային մասում 1970-ական թուականներին կառուցուած կցակառոյցի ծածկն ու աստիճանավանդակը, հանուել են կտուրի ցինկապատ թիթեղն ու փայտէ կոնստրուկցիաները:


Վերակառուցումից յետոյ շէնքը կը ծառայի որպէս թանգարան եւ հիւրատուն: Գետնի սալայատակի փոխարէն շէնքն ունենալու է օդափոխուող յատակ, որը կապահովի հիմքերի ներքին մակերեսների օդափոխութիւնը եւ կազատի յատակը շարունակ կուտակուող խոնաւու-

¹ Տե՛ս Վ. Յարութիւնեան, Եկայք Շինեսցուք, էջ 50:

² Տե՛ս անդ, էջ 51-52:



Ջին Վեհարանի վերակառուցումը



Հին Վեհարանի վերակառուցումը՝ վերելում շենքի կտրուածքը,
 ներքեւում՝ գահասրահի ներքին տեսքը

Թիւնից: Հէնց այս նպատակով էլ կառոյցն ամբողջութեամբ բարձրացուել է 55 սմ-ով: Այս միջոցառումների իրականացումը միտուած է նրան, որ յետագայում, ինչպէս Հին Վեհարանի հարաւային հատուածի վերին յարկի, այնպէս էլ Ղազարապատի առաստաղները բարձրացնելով հասցուեն 7.680 մ նիշին եւ հաւասարեցուեն վանատան տանիքի քիւին ու ստեղծեն միասնական բարձրութեամբ ուրուագիծ: Վերակառուցուած համալիրը ձեւաւորուած է տեսողական գունային կողաւորմամբ: Ընդհանուր կառոյցը իրականացուել է դարչնագոյն քարից, սակայն հայոց կաթողիկոսների թանգարանային ու հիւրանոցային յարկերը ընդգծուել են իրենց բաց երանգով: Համակառոյցի մուտքերը առանձնացուել են, ընդ որում, թանգարանային մասը լուծուած է որպէս 6 յաջորդական բացուածքներով կամարակապ, իսկ հիւրատան հատուածը՝ վերեւից քէոչկային ելուստով շքամուտքի ձեւով: Երկու շէնքերի ճակատները իրար հետ համադրուել են միաոճ լուսամուտներով: Դրանց միջեւ ներդաշնակութիւն ստեղծելու համար կարեւորութիւն է տրուել բացուածքների միասնականութեանը եւ յարկերի վերելով անցնող քիւերի նոյնական լուծումներին: Դէֆեկտային ակտերի հիման վրայ վերափոխուել են արտաքին պատերի վնասուած քարերը, ցեմենտ-աւազային շաղախով վերասուաղուել են բաց երանգի ճակատային հատուածները եւ ներկուել էքստերիերային ներկով, ամրացուել է պատերի միջուկը, նորովի կղմինդրապատումով լուծուել են տանիքի անձրեւաջրերի հեռացման խնդիրները եւ այլն: Ինժեներական կոմունիկացիաները եւ սարքերը տեղադրուել են տանիքում իրականացուած երկաթբետոնէ հարթակի վրայ:

Հին Վեհարանի շէնքի կրող կոնստրուկցիաները անհրաժեշտ հատուածներում վերաամրացուել են երկաթբետոնէ շապիկով: Ամրանաւորուել են նաեւ նկուղային յարկի առաստաղը եւ մուտքերի շրջանակները: Առհասարակ, հին տեսքով ու կերպարով պահպանուել է նկուղային յարկի թաղակապ առաստաղը: Նոյն ձեւով, շէնքի որոշ մասերում բնագրային վիճակով պահպանուել է պատերի աղիւսեայ շարուածքը: Սա ինտերիերային իւրայատուկ տեսք ու մշակոյթ է հաղորդում սենեակների տարածութեան կերտմանը:

Հին Վեհարանի հարաւային մասը վերակառուցուել է որպէս կաթողիկոսական բնակարան: Գոյութիւն ունեցող պահեստները եւ օժանդակ սենեակները վերայատակադնուել են որպէս ցուցասրահներ եւ սպասարկման սենեակներ: Չնայած ցուցասրահների տարբեր նիշերին, շէնքի ենթամասերը ապահովուած են ներքին տարածքների փոխադարձ կապով ու էվակուացիոն լուծումներով:

Կարեւոր է նշել, որ Հին Վեհարանի վերաշինութեան աշխատանքների ընթացքում նկուղային յարկում ի յայտ են եկել աղիւսի արտադրամաս եւ հնոց, որոնք վերակառուցման ընթացքում ամբողջութեամբ կոնսերուացուել են ու թանգարանացուել: Շէնքի շրջապատը բարեկարգուել է որպէս վեհարանային բակի շարունակութիւն:

ԱԼԷՔ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԳԱՆՁԱՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԹԻՒՆԸ

1982 թ. հոկտեմբերին բացուած Ալէք եւ Մարի Մանուկեանների անունը կրող Գանձատունը իրադարձութիւն էր Մայր Աթոռի կեանքում: Ճարտարապետ Բաղդասար Արզումանեանի նախագծով իրականացուած կառոյցն իր ռճական առանձնայատկութեամբ նոր երանգ աւելացրեց Մայր Աթոռի համալիրին: Կարմրաւուն տուֆով երեսպատուած 19,35 x 62,0 մ չափերով շէնքը անասելի պերճանք ունի, որ ստեղծագործաբար շարունակում է յարակից շէնքերի ճարտարապետութիւնը: Չնայած մշտական խնամքին եւ հոգածութեանը, այնուամենայնիւ, արտաքին կամարասրահներում արդէն առաջացել էր յատակի վերանորոգման անհրաժեշտութիւն: Ներքին տարածքները՝ պատերով, առաստաղով եւ յատակով, կարիք ունէին մաքրման ու նորացման: Թանգարանային ֆօնդերի հարստացումը ստիպում էր փնտրել նոր տարածութիւններ, ինչպէս նաեւ ջեռուցման եւ օդափոխութեան սարքերի արդիականացում: Այս նկատառումներով ձեռնարկուեցին շէնքի վերանորոգման աշխատանքները: Շէնքում տեղադրուած ջե-



Ալէք եւ Մարի Մանուկեան Գանձատունը
վերանորոգումից յետոյ

ուուցման սարքերը ընտրուեցին ուղղահայեաց համաչափութեամբ եւ սիւների լայնութեանը հաւասար, այնպէս որ դրանք մասշտաբային համահնչութիւն ստեղծեն ներսում՝ առանց աղաւաղելու զանձատան ցուցադրութեան միասնականութիւնը:

ԵՐԵՄԵԱՆ ԽՑԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԹԻՒՆԸ

Երեմեան խցերի հիմքերի ուսումնասիրութիւնը ցոյց տուեց, որ դրանց որմաձքի կրաշաղախը հողմնահարուած է: Այս եւ գրունտային ջրերի առկայութեան պատճառով առաջացած ներքին տարածքների խոնաւութիւնը, կառոյցի ստորին մասի կարանների եւ քարերի քայքայուածութիւնը եւ այլն, շէնքի վերակառուցման անհրաժեշտութիւն առաջացրին, որն իրականացում է ճարտարապետ Աշոտ Մանասեանի նախագծով: 1889 թ. կառուցուած երկյարկ կացարանը ունէր 9 բաժանմունքներից բաղկացած կառուցուածք: Ընդ որում, ամէն մի բաժանմունքում տեղաբաշխուել են 2-ական բնակարան ամէն մի յարկի վրայ: Բնակարանների ընդհանուր թիւը շէնքում 18-ն է: Առաջին յարկի կացարանների մուտքերը արեւմտեան կողմից են, իսկ երկրորդ յարկում՝ արեւելեան: Ամէն մի բաժանմունքի յատկագծային չափերը 6.4 x 12.5 մ է, իսկ բարձրութիւնը՝ 4.2 մ: Շէնքը նկուղային յարկ չունի:

Շէնքի վերակառուցումը կատարուում է երեք հիմնական փուլերով: Սկզբում իրականացում են քանդման եւ մաքրման աշխատանքները: Երկրորդ փուլում ստեղծուում է 1.2 մ խորութեամբ նկուղային յարկ: Այն փորուում է դռների բացուածքներով՝ առաջին յարկի յատակը հասցնելով 120 սմ մակարդակի: Կրող պատերի յարակցութեամբ դէպի տանիք բարձրացում են 20 սմ տրամագծով օղափոխութեան խողովակներ: Առաջին յարկի յատակը նորովի իրականացում է երկաթբետոնէ եւ այլ շերտերով: Այսպիսով, հնարաւոր է դառնում շէնքի գրունտը մեկուսացնել խոնաւութիւնից: Երրորդ փուլում իրականացում են յարկերի ներքին տարածքների եւ այլ մասերի վերափոխման ու արտաքին ճակատների ամրացման ու վերականգման աշխատանքները:

Շէնքի առաջին յարկի մի կողմի կացարանները վերածուում են գրասենեակների, իսկ երկրորդ յարկը՝ հիւրատան: Եղած ինը կացարաններից ութը վերածուում են հիւրատների, դրանցից մէկը յատկացուում է հիւրերի սպասարկման ծառայութիւններին: Հիւրատան ամէն մի միաւոր առաջին յարկում ունի նախամուտք, պահարանախորշ եւ ներքին աստիճանավանդակ, իսկ երկրորդ յարկում՝ նախասրահ, լողասենեակ, զգեստասենեակ, նախասրահ-ընդունարան, ննջասենեակ եւ պատշգամբ:

Վերակառուցման աշխատանքների ընթացքում կատարուում է հիմքերի, պատերի, միջյարկային ծածկերի, տանիքների, բացուածքների առողջացում: Հիմքերի եւ կրող պատերի ուժեղացման հետ, առաջին եւ երկրորդ յարկերի փայտեայ փտած ծածկերը փոխարինուում են երկաթբետոնով՝ ներառեալ աստիճանները: Մետաղական հեծանների օգնութեամբ ուժեղացուում են նաեւ երկրորդ յարկի եւ ծպեղնա-յարկի փայտեայ ծածկերը: Հիմնովին վերափոխուում են ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, էլեկտրաֆիկացման ցանցերը: Շէնքի արդիականացումը կատարուում է ժամանակակից շինանիւթերի օգտագործմամբ, այնպէս որ անփոփոխ մնայ Երեմեան խցերի պատմական տեսքը, իսկ ներսը ամբողջութեամբ վերածուի յարմարաւէտ ու ձեւաւորման արդի պահանջներին համապատասխանող տարածքի:

ՆՈՐ ՎԵՀԱՐԱՆԻ ՆՈՐՈՓՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲԱՐԵՋԱՐՈՒՄԸ

Նոր Վեհարանի վերանորոգումով ու բարեկարգումով նշանաւորուում է Մայր Աթոռի տարածքում նորագոյն ճարտարապետական միջոցառումների մուտքը: Ի դէպ, այս շէնքի կառուցումը վերջերս բոլորեց իր հարիւրամեակը: Այն կառուցուել է 1910 թ. Պօղոս Զոհրաբեանի նախագծով եւ անուանի բարերար Ալեքսանդր Մանթաշեանի նուիրատուութեամբ: Առաջին աշխարհամարտի պատճառով շինարարութիւնը անաւարտ է մնացել, եւ շէնքը նախ ապաստարան է ծառայել Եղեռնից փրկուած գաղթականների համար, իսկ խորհրդային կարգե-



Նոր Վեհարանի վերակառուցման նախագծի ինտերիերների պատկերներ



Նոր Վեհարանի վերակառուցման ճախագծի ինտերիերների պատկերներ

րի օրօք օգտագործուել է բանակի կարիքների համար¹: 1956 թ. կառույցը վերադարձուեց Մայր Աթոռին, ապա Վազգէն Ա Կաթողիկոսի նախաձեռնութեամբ եւ ճարտարապետ Ա. Գալիկեանի նախագծով հիմնովին վերակառուցուել է եւ բարեզարդուել: Այս ընթացքում յատկապէս գեղեցիկ ձեւակերտում են ստացել նախասրահն ու գլխաւոր սանդուղքները, մեծ դահլիճը, գահասրահը, Կաթողիկոսի ընդունարանը, սեղանատունը եւ այլն²: Շէնքի վերակառուցման աւարտից յետոյ, ճարտարապետ Էդուարդ Ութուղեանի նախագծով 1962 թ. ձեռնարկուել է Վեհարանի բակի բարեկարգումը, աւարտին է հասցուել տարածքի պարսպապատումը եւ բակի հիւսիս-արեւմտեան անկիւնում թողնուել է լրացուցիչ մուտք³:

Գարեգին Բ Կաթողիկոսի օրօք, Վեհարանի արեւմտեան կողմում աւելացող նոր հանդիսութիւնների դահլիճի կապակցութեամբ, Նոր Վեհարանի յետնամասում՝ երկրորդ յարկում, կառուցուում են դէպի հանդիսութիւնների մասնաշէնքը տանող կողային տաք անցումներ: Զեռնարկուել են ներքին տարածքների շինարարական բարձրակարգ ձեւաւորման աշխատանքներ: Նոր Վեհարանի շէնքի վերանորոգման նախագիծը 2005 թ. յանձնարարուել է ճարտարապետ Հրաչեայ Պողոսեանին: Մինչ այդ Երեւանի ճարտարապետութեան եւ շինարարութեան պետական համալսարանի գիտահետազոտական լաբորատորիայում պատրաստուեց շէնքի տեխնիկական եզրակացութիւնը: Հետեւութիւնն այն էր, որ կառույցի ինտերիերի արդիականացման եւ ֆունկցիոնալ փոփոխութիւնների անհրաժեշտութիւն կար՝ պայմանաւորուած Վեհարանի բակում աւելացած նորակառուցներով: Փաստօրէն, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնութեամբ արդէն իսկ կառուցուել է նոր Դիւանատունը, կառուցուում է հանդիսութիւնների դահլիճը՝ 750 տեղով, կատարուել է հին Դիւանատան ընդարձակումը, նորովի օգտագործմամբ վերանորոգուել է Հին Վեհարանը եւ այլն: Այս ամէնի հետ անյետաձգելի անհրաժեշտութիւն է

¹ Տե՛ս Վ. Յարութիւնեան, Եկայք շինեսցուք, էջ 43:

² Տե՛ս անդ, էջ 44:

³ Տե՛ս անդ, էջ 49:

Վեհարանի գրունտը խոնաւութիւնից գերծ պահելու համար օդափոխութեան յարկի ստեղծումը:

Նոր Վեհարանի ֆունկցիոնալ փոփոխութիւնների թւում են սանհանգոյցների տեղափոխումը՝ ի մէջ առեալ հաշմանդամների համար մասի յաւելումը, ինչպէս նաեւ գոյութիւն ունեցող սանհանգոյցների տեղում 2 վերելակների տեղադրումը: Երկրորդ յարկի ձախակողմեան թեւում եղած ցուցասրահը տեղափոխուում է առաջին յարկի աջակողմեան թեւ՝ Կաթողիկոսի աշխատանքային սենեակների հարեւանութեամբ, այնպէս որ այն բոլոր այցելուների համար մատչելի է դառնում նաեւ դրսից: Ցուցասրահի տեղում կառուցւում են պատուաւոր հիւրերի համար բնակելի յարմարաւէտ երեք տարածքներ՝ համապատասխան հիւրասենեակով, ննջարանով եւ այլ յարմարութիւններով: Եղած երկու ընդունարանների թիւն աւելանում է եւս մէկով: Յատակագծային որոշ վերափոխումներ են իրականացւում նաեւ Նոր Վեհարանի աջ թեւում եղած գրասենեակների կազմում: Դրանց թիւը նուազեցւում է, իսկ փոխարէնը աւելացւում է մի նոր ժողովասենեակ:

Նոր Վեհարանի աշխատանքային գծագրերը իրականացուել են 2008-2009 թթ: Բացի վերեւում նշուած շինարարական վերափոխման աշխատանքները, գծագրերի փաթեթում ընդգրկուած են նաեւ ողջ տարածքի ինժեներական ցանցերի արդիականացումը, այդ թւում՝ օդափոխութիւնը, օդորակումը, ջեռուցման, ջրամատակարարման ու կոյուղու, էներգասնուցման եւ էլեկտրալուսաւորութեան, հակահրդեհային ազդանշանային ցանցերն ու համակարգերը, հեռախօսի, հեռուստատեսային եւ համացանցային կապերի ապահովումը: Այս ամէնն իրականացնելու համար անհրաժեշտութիւն առաջացաւ իջեցնել Վեհարանի նկուղային յարկի կենտրոնական մասի մակարդակը:

Վերակառուցման նման լայնամասշտաբ գործում մեծ կարեւորութիւն է տրւում շէնքի բաղկացուցիչ սենեակների ներքին յարդարմանը: Այս նկատառումներով, բացի նոր կառուցուող տարածքները, քանդուում եւ վերակառուցւում են կենտրոնական մուտքն ու նախասրահը, թեւերի նախասրահները, Կաթողիկոսի աշխատասենեակները, պաշտօնական ճաշասրահը, խոհանոցը եւ կաթողիկոսական բնակա-

րանը, գահասրահի նախասրահը, ընդունարաններն ու դրանց նախասրահները: Վերջիններում նախատեսվում են բուխարիներ, պատերը 1 մ բարձրությամբ ծածկվում են փայտեայ ձեւաւոր պանելներով, փոխւում են յատակը, առաստաղների եւ քիւլերի ձեւաւորումը, բոլոր դռներն ու լուսամուտները: Փոխւում եւ նորացւում է գահասրահի սալայատակը, պատերը երեսպատւում են նոր նիւթերով, իսկ առաստաղը յարդարւում է փայտեայ եւ գիպսէ դէտալներով:

Ներկայացուած աշխատանքների ամբողջութեան մէջ մեծ կարեւորութիւն ունի նաեւ Վեհարանի շէնքի արտաքին նորացումը: Այդ կապակցութեամբ բարձր ճնշման տակ մղուող ջրով լուացւում են բոլոր ճակատները, նորացւում են պատշգամբները, փոխւում է տանիքի ծածկոյթը եւ այլն:

2011 թ. դրութեամբ Նոր Վեհարանի շինարարական աշխատանքները դեռեւս ընթացքի մէջ են:

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ԿԻՆ ԴԻԻԱՆԱՏԱՆ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ

2011 թ. որոշում ընդունուեց Վեհարանի բակի հիւսիս-արեւմտեան կողմում գտնուող վարչատնտեսական շէնքը վերափոխել եւ յատկացնել Մայր Աթոռի միջկեղեցական յարաբերութիւնների բաժնին: Այդ նկատառումով գոյութիւն ունեցող շէնքը 19 մ չափով ընդարձակուեց դէպի հիւսիս եւ համալրուեց նախորդ մասի շարունակութիւնը կազմող միջանցքի երկու կողմերում տեղաբաշխուած 8 գրասենեակներով (նախագծի հեղինակ՝ Արամ Սահակեան): Նորկառոյց մասը յատկացնելով «Կլոր սեղանին», նրա հարաւային սկզբնամասում բացուեց նոր մուտք, որն ունի իր նախասրահը եւ սանհանգոյցը: Շէնքի բարձրութիւնն ու միառժամութիւնը նոյնակերպ պահպանուեցին: Քանի որ կառոյցը Վեհարանի բակի կողմից մուտք չունէր, աւելացած մասի հիւսիսային կողմում ստեղծուեց դարպաս, որը բացւում է անմիջապէս գրասենեակային շէնքի առաջ:



Հին տնտեսաֆինանսական շենքի ընդարձակումը (վերելում) եւ
ատամնաբուժարանի վերակառուցուած տեսքը

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆԻ ԾԵՆՔԸ

Ատամնաբուժարանը գտնվում է Արարատեան փողոցի արեւելեան կողմում, Մայր Աթոռի պարիսպներից դուրս՝ երաժշտական դպրոցի հարաւում: Շէնքը տեղում եղած առողջապահական կառույցի վերակառուցումն է՝ որպէս ատամնաբուժարան: Ծարտարապետն է Լեւոն Վարդանեանը, կառուցուել է 2004 թ. Ֆրանսիական «Բարձրունք 5165» մարդասիրական կազմակերպութեան մեկենասութեամբ: Տեղում գոյութիւն ունեցող շէնքը մինչեւ տանիքը 7 մ բարձրութեամբ՝ պատային համակարգով միայարկ կառույց է: Այն 13 x 32 մ ընդհանուր չափերով, երեք բլոկներից կազմուած ուղղանկիւն յատակագիծ ունի: Հիւսիսային եւ հարաւային 9 x 13 մ չափերով բլոկներից իւրաքանչիւրը կրող պատերով բաժանուել է երեք սեկցիաների: Կենտրոնական բլոկը 13 մ կողմով քառակուսի է, որի արեւելեան եւ արեւմտեան կողային տարածքները 3 մ չափով կրող պատերից դուրս են: Փաստօրէն, ստացւում է, որ կենտրոնական սրահը 13 x 7 մ չափերով դահլիճ է: Վերակառուցման միջոցով կենտրոնական բլոկի արեւելեան եւ արեւմտեան կողային հատուածները 3 մ չափով դէպի դուրս երկարելով՝ վերածուել են 6 x 13 մ չափերով տարածքների: Շէնքի մնացեալ բոլոր մասերը թողնուել են նոյնութեամբ եւ երեսպատուել գորշ գոյնի տուֆով: Ծակատները բերուել են միատարրութեան, այսինքն՝ նորակառույց մասերը իրենց բացուածքներով կրկնում են նախկինում գոյութիւն ունեցող ճարտարապետական մանրամասները: Շէնքի վերափոխումը չափազանց դիպուկ է, այն իր խաչաձեւ յատակագծային լուծմամբ նախնական դասական կառույցի տպաւորութիւն է թողնում: Տանիքը խաչաձեւ քառալանջ լուծում ունի, որ ամբողջութեամբ վերածածկուել է, ինչպէս նաեւ կրող կանգնակներով ու ծպեղնային կոնստրուկցիաներով վերափոխուել: Ամբողջապէս երկաթ-բետոնով նորովի վերաշինուել է ողջ ծածկը: Շէնքի գլխաւոր առանցքը հիւսիս-հարաւ ուղղութիւնն է, յօրինուածքի կենտրոնը 78 քմ մակերեսով ընդարձակ սպասասարահն է: Գլխաւոր մուտքը հիւսիսային կողմից է: Նախասրահ

Հի երկու կողմերում երեխաների եւ գրանցումային սենեակներն են: Սպասասրահի երկու կողմերում վարչական եւ վիրաբուժական 4-ական սենեակներն են: Վերջինների հանդիպակաց բլոկում տեղաբաշխուել են այլ օժանդակ սենեակներ:

Վերակառուցման արդիւնքում շէնքին աւելացուել են բոլոր հնարաւոր յարմարութիւնները, ինտերիերները արդիականացուել են ժամանակակից բոլոր պահանջներով, նորացուել են կահոյքն ու ինժեներական ցանցերը:

ՏՊԱՐԱՆԻ ՄԵՐՁԱԿԱՅ ՊԱՏՄԱԿԱՆ ՁԵՆՔԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ ԱՅՑԵՆՈՒՆԵՐԻ ՍԵՂԱՆԱՏԱՆ

Տպարանի հարաւ-արեւելեան կողմում գտնուող այս ընդարձակ շէնքը եռանաւ, 9 մ բարձրութեամբ բազիլիկ կառոյց է, որ բոլոր ուղղութիւններով ծածկուած է կամարակապ թաղերով: Կամարները գագաթում սրածայր են: Կողային լուսամուտները, պայմանաւորուած պատի հաստութեամբ, բաւականին խորն են: 15 x36 մ չափերի հասնող այս շէնքը խորհրդային տարիներին օգտագործուել է որպէս յուշանուէրների ու արտարժոյթով վաճառուող ապրանքների խանութ: Հէնց այդ նկատառումներով կառոյցի արեւմտեան կողմը յարմարեցուած է ապրանքների ընդունման, բեռնաթափման ու պահեստաւորման համար: Շէնքի այս հատուածը վերածուել է սեղանատան խոհանոցի՝ իր լուացարանով ու սանհանգոյցով: Ներսը արդիականացուել է ինժեներական բոլոր կոմունիկացիաների հետ: Սեղանատան արեւելեան առաջնամասում ստեղծուել է հայկական ժողովրդական տան մօտիվներով մտայղացուած փայտաշէն հովանի, որ գծային շարունակութիւնն է Երեմեան խցերի ու տպարանի առաջ գտնուող կանաչապատ տարածքների ցանկապատի:

ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԹԻՒՆՆԵՐ Ս. ԳԱՅԻԱՆԷ ՎԱՆՔՈՒՄ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ

Վերջին տարիներին իրականացուած ընդարձակման արդիւնքում Ս. Գայիանէ վանքը գրեթէ ընդգրկուեց Մայր Աթոռի տարածքում: Այն միանգամայն ներգրաւուեց ուսումնական գօտու հեռանկարում, եւ յետագայ ծրագրերում երկու համալիրների զարգացումը կկատարուի միասնաբար:


Դեռեւս եզր Կաթողիկոսի գահակալութեան տարիներին՝ 630-641 թթ. կառուցուած վանքը հիմնադրուել է Ս. Գայիանէի նահատակութեան վայրում: Վանքի շինարարութեան մասին վաղ եւ զարգացած միջնադարից մեզ հասած տեղեկութիւնները սուղ են: Հիմնական շինարարական տեղեկութիւնները ուշ միջնադարից են:

Ըստ Առաքէլ Դաւրիթեցու եւ եկեղեցու հարաւ-արեւմտեան պատի վիմական արձանագրութեան՝ 1602 թ Փիլիպպոս Կաթողիկոսը վերականուցել է աւերուած տաճարը¹, 1688 թ. Եղիազար Կաթողիկոսը եկեղեցուն աւելացրել է կամարակապ գաւիթը, 1872 թ. Վահան վարդապետ Բաստամեանցի վանահայրութեան օրօք նորոգուել է վանքը, ամբողջապէս բարեկարգուել է տարածքը եւ կառուցուել է մոնումենտալ դարպասը: Վանքում մեծ աշխատանքներ են կատարուել Վազգէն Ա Կաթողիկոսի գահակալութեան տարիներին: 1958-1980 թթ. իրականացուել է տաճարի ու նրա կտուրի վերականգնումը, վանքի ցանկապատի կառուցումը (ճարտարապետ՝ Ա. Գալիկեան), ամբողջապէս մաքրուել են եկեղեցու ներքին մակերեւոյթն ու սալայատակը, կառուցուել են վանատան աղբիւրն ու մատաղատունը (ճարտ.՝ Ռ. Իսրայէլեան), երիցատունը եւ այլ շէնքեր²:

Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալութեան տարիներին Ս. Գայիանէ վանքի տարածքում նոյնպէս ձեռնարկուեցին ընդարձակ շի-

¹ Հմմտ. Վ. Յարութիւնեան, Եկայք շինեսցուք, էջ 83:

² Տես անդ, էջ 84-88:



Վերափոխումներ Ս.Գայիանէ վանքի եւ շրջակայ տարածքում



Բարեկարգումներ Ս. Գայիանե վանքի եւ շրջակայ տարածքում

նարարական աշխատանքներ: Ս. Գայիանէ վանքը բաղկացած է ցանկապատուած տարածքի կենտրոնում տեղադրուած նարտէքս-եկեղեցի համակառոյցից, նրանցից հարաւ-արեւմուտք տեղադրուած երիցատնից ու մատաղատնից, դէպի արեւմուտք՝ կենտրոնական քանդակազարդ կամարածեւ շքամուտքից եւ նրա երկու կողմերում գտնուող միաբանական նոր շէնքից, վանքի արեւելեան կողմի միաբանական մենախցերից ու հիւսիս-արեւելեան հատուածի նախկին վանատնից: Վերականգնուեցին միաբանական շէնքը, սեղանատունն ու մառանը, վերանորոգուեց եկեղեցու սալայատակը:

Աւարտուել է երիցատան վերակառուցման նախագծային գործընթացը, կատարուած են վանքի բակի, այդ թւում եւ գերեզմանատան տարածքի բարեկարգման, ինչպէս նաեւ՝ 1960 թ. կառուցուած քարոզչական կենտրոնը մանկատան վերափոխելու աշխատանքները:

Ա. ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ

Ս. Գայիանէ վանքի տարածքն ընդգրկում էր 4 գերեզմանոցային անբարեկարգ հատուածներ, որոնց բարեկարգման աշխատանքները ձեռնարկուեցին 2006 թ.: 1-ին, 2-րդ եւ 3-րդ գերեզմանոցները գտնուում են վանքի արեւմտեան հատուածում: Ընդ որում, 1-ին եւ 2-րդ գերեզմանոցները նախկինում տրամադրուել են աշխարհիկ բնակչութեանը, իսկ 3-րդ եւ եկեղեցու հիւսիսային կողմում գտնուող 4-րդ գերեզմանատները հիմնականում հոգեւորականների համար են: Նշուած գերեզմանոցների տարածքները մաքրուեցին աւելորդ քարերից, խախտուած տապանաքարերը ամրացուեցին, տարածքում անցկացուեցին ծառուղիներ, ինչպէս նաեւ ոռոգման ջրի եւ արտաքին լուսաւորութեան համակարգեր: Վերանորոգուեցին միջվանքային տարածքի ճանապարհների բետոնէ սալերը:

Բ. Ս. ԳԱՅԻԱՆԷ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ՅԱՐԱԿԻՑ ԾԵՆՔԵՐԻ ՎՐԱՅ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԱՃԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գարեգին Բ Կաթողիկոսն իր գահակալութեան տարիներին ձեռնարկեց եկեղեցու, գաւթի, միաբանութեան շէնքի եւ օժանդակ կառույցների վերանորոգումը, որը կատարուեց շէնքերի տեխնիկական զննման եւ չափազրական աշխատանքներից յետոյ: Նոր վանատունը կամ միաբանութեան շէնքը տուֆակերտ միայարկ նկուղային յարկաբաժնով կառույց է: 1979 թ. նորոգութիւնների ընթացքում նրա միջարկային փայտէ ծածկը փոխարինուել էր բետոնով, իսկ հողակերտ տանիքը՝ ծպեղնայարկով: Տասնամեակների ընթացքում շէնքի յարդարանքը եւ դռների ու լուսամուտների փեղկերը խոնացել էին, պատերի ստորին հատուածները խոնակութիւնից քայքայուել ու յատակները տեղ-տեղ մաշուել էին: Մանաւանդ անօգտագործելի էին դարձել խոհանոցն ու սանհանգոյցը: Այս բոլորը վերայատակագծուեցին եւ բնակութեան համար ստեղծուեցին յարմարաւէտ պայմաններ: Հարակային մասնաշէնքը յատկացուեց գրասենեակային նպատակների՝ համապատասխան ընդունարանով ու աշխատանքային սենեակով, ննջարանով, իսկ նկուղային յարկում տեղադրուեցին խոհանոցն ու սեղանատունը: Հիւսիսային մասնաշէնքում տեղաբաշխուեցին վանականների ընդհանուր սենեակը, 4 ննջարանները, իսկ նկուղային յարկում տեղադրուեցին ցնցուղները, լուացքատունն ու պահեստային սենեակները: Կառույցի երկու մասնաշէնքերը համալրուեցին ջեռուցման համակարգով, փոխուեց յատակը, ջրամեկուսացուեցին հիմքերը: Նկուղի օդափոխութիւնն ապահովելու նպատակով, առաջին յարկի լուսամուտների առանցքներով բացուեցին 60 x 60 սմ չափերի նոր լուսամուտներ:

1979 թ. վերանորոգումից յետոյ Ս. Գայիանէ եկեղեցու հիւսիսային կողմի ծածկասալերը թուլացել էին, որի հետեւանքով թրջոււմ էր ծածկի թաղերի մակերեւոյթը: Պատերի շաղախը տարիների ընթացքում դատարկուել էր՝ առաջացնելով որմնանցքեր: Ձեռնարկուած վերականգման աշխատանքներով վերացուեցին նաեւ այդ թերութիւնները: Անյետաձգելի վերանորոգման կարիք ունէին նաեւ գաւթի արեւելեան

հատուածի աղիւսէ գմբէթարդները: Քանի որ դրանք շարուած էին գաջէ լիցքով, խոնաւանում եւ հետզհետէ քանդուում էին, որի հետեւանքով քայքայուում էին նաեւ եկեղեցու ճակատի որմնանկարները: Այս թերութիւնները վերացուեցին ստեղծուած պատային կարանների միջոցով: Վերացուեցին նաեւ 1979 թ. կառուցուած եւ 2002 թ. նորոգութեան ենթարկուած մատաղատան թերութիւնները: Այստեղ կառուցուեց նոր յարմարութիւններով խոհանոց, պատերի վրայ կուտակուած աղերից մաքրուեց ու արդիականացուեց ճաշասրահի ներսը, շէնքն ապահովուեց մշտական խմելու ջրով: Նորոգուեց եկեղեցու հարաւարեւմտեան կողմի ստորգետնեայ մառանի տանիքն ու ջրամեկուսացուեցին խոնաւացող պատերը: Արդիականացուեցին աշխատողների՝ արեւմտեան կողմում գտնուող հանգստի սենեակները, ճարտարապետական նոր յարմարեցման նախագծով կեանքի կոչուեց հին վանատունը եւ այլն:

Գ. Ս. ԳԱՅԻԱՆԷ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԻՅԱՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Ս. Գայիանէ եկեղեցու հիւսիս-արեւելեան կողմում գտնուող այս կառոյցը, միաբանական մասնաշէնքի կառուցումից յետոյ լքուել էր: Արտաքինից 19.5x12.8 մ չափերով ուղղանկիւն շէնքը ընդլայնական՝ կրող երկու պատերի միջոցով բաժանուել է երեք ենթամասերի, կենտրոնական մասի յետնապատին տեղադրուել է փայտաշէն աստիճանավանդակը: Շէնքի տանիքը հարթ է: Լ. Թորգոմեանի 2005 թ. նախագծով շէնքը վերածուել է երիցատան: Պահպանուել են շէնքի հիմնական տարրերը: Կենտրոնական մասը վերածուել է նախասրահի, որի յետին պատի փայտաշէն աստիճանները նորացուել են: Սրահի երկու կողմերում երեք հիւրասենեակներ են, որոնք ունեն մէկսենեականոց բնակարանի յարմարութիւններ, ընդ որում, դրանց համար նախատեսուած ընդհանուր խոհանոցը զետեղուել է հարաւ-արեւելեան անկիւնում: Երկրորդ յարկում նոյն դասաւորութեամբ կայ երեք բնակարան

եւս, որոնցից երկուսը զգալիօրէն մեծ են, քան առաջին յարկում եղածները: Շէնքի յարկերի բարձրութիւնը 3.6 մ է: Ճակատները զուսպ են եւ իրենց ընդհանուր յատկանիշներով նման են միաբանական շէնքի կերպարին: Առանձնապէս ուշագրաւ է արեւմտեան ճակատի երկսլաք եւ կլոր կամարներով համադրուած շքամուտքը, որի բացուածքային մասը մշակուել է ապակէ գեղեցիկ վիտրաժով: Դռան սիմետրիայով տեղադրուել են մէկ զոյգ լուսամուտ, չորսական լուսամուտ կայ նաեւ ճակատի կողային մասերում: Այս նոյն մօտեցումներով ու առանձնա-յատկութիւններով է կառուցուած նաեւ արեւելեան ճակատը: Հիւսիսային ճակատի վրայ՝ երկրորդ յարկում, տեղադրուել է հայկական ժողովրդական ճարտարապետութեան մոտիւններով փայտաշէն մի պատշգամբ: Շէնքի ճարտարապետութիւնը դասականի եւ ժողովրդականի միահիւսմամբ ստեղծուած էկլեկտիկա է:

Դ. ՔԱՐՈՋՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ ՄԱՆԿԱՏԱՆ

Ս. Գայիանէ վանքի տարածքում գտնուող քարոզչական կենտրոնը, Մայր Աթոռին ենթակայ «Շողակաթ» հեռուստաընկերութեան նոր շէնքի շահագործումից յետոյ, Գարեգին Բ Կաթողիկոսի նախաձեռնութեամբ վերածուեց մանկատան: Երկյարկանի կառույցը տեղադրուած է վանքի հիւսիս-արեւմտեան կողմի այգեպատ տարածքում: Շէնքը նախկինում վանական կառույց չլինելով՝ առանձնացուած մուտք է ունեցել եւ յետագայում միացուել Ս. Գայիանէ վանքին: Այն 22.5 x 14 մ չափերով երկյարկանի ուղղանկիւն քարակերտ շինութիւն է՝ աւանդական երկթէք տանիքով: Յարկերի յատակագծային լուծման համաձայն՝ սենեակները բաշխուել են արեւելքից արեւմուտք երկարող կենտրոնական միջանցքի շուրջ, ընդ որում, աստիճանավանդակը տեղադրուած է հարաւային կողմի կենտրոնական հատուածում: Առաջին յարկում կան ցնցուղներ, իսկ առընթեր՝ ընդհանուր սանհանգոյցն է: Ցնցուղներից վերեւ՝ երկրորդ յարկում նոյնպէս սանհանգոյցներ են: Ամէն մի յարկում կան ուսուցչի եւ հերթապահի սենեակներ: Ի տար-

բերութիւն երկրորդ յարկի, ուր հիմնականում մանուկների ննջասենեակներն են, առաջին յարկում մի քանի ննջարանների հետ կայ նաեւ ընդարձակ խաղասենեակ, ինչպէս նաեւ բժշկի, վարչական, պահեստի եւ այլ սենեակներ: Մինչ վերանորոգումը, շէնքի շուրջ անցկացուել է օդափոխութեան ցանց եւ կատարուել է գոյութիւն ունեցող կրող պատերի ամրացում:

Ե. ԷՋՄԻԱԾՆԻ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՎԵՐԱԾՈՒՄԸ ՀԱՅՈՐԴԵԱՑ ՏԱՆ

Խորհրդային տարիների Պիոներական պալատը բովանդակութեամբ նման է մերօրեայ Հայորդեաց տանը, որ նոր անուանումով տարածում ստացաւ Գարեգին Բ Կաթողիկոսի նախաձեռնութեամբ: Այս օգտակար միջոցառումը ոչ միայն ծառայում է պատանիների հայեցի ու քրիստոնէական դաստիարակութեանը, այլ նաեւ խորհրդահայ հասարակարգին բնորոշ շէնքի տեսակի պահպանման ու նորովի օգտագործման լաւագոյն օրինակ դարձաւ: Էջմիածնի Հայորդեաց տունը գտնուում է Ս. Գայիանէ վանքի համալիրից ոչ հեռու, անմիջապէս «Իսի-լե-մուլինո» փողոցի վանքին առընթեր մասում: Համակառոյցը Խորհրդային Հայաստանի պիոներ պալատների յաջողուած օրինակներից է, որ կառուցուել էր 1971-1979 թթ. (ճարտարապետ՝ Երուանդ Մելիքեան): 1991 թ. յետոյ, տնտեսական անբարենպաստ պայմանների պատճառով շէնքը չջեռուցուելու, միջնուորտային տեղումները հարթ տանիքներից չհեռացնելու հետեւանքով քայքայուել էր: Համալիրը կազմուած է 5 մասնաշէնքից եւ այլ օժանդակ կառոյցներից: Այն բնութագրուում է բաց եւ կառուցապատուած տարածութիւնների հետաքրքիր համադրութեամբ: Այստեղ, յօրինուածքի կենտրոնի դեր կատարող բաց աստիճանավանդակի շուրջ տեղադրուած են աստղադիտարանը, բացօթեայ դահլիճը, լսարանային եռայարկ մասնաշէնքը եւ նրան յարակից մարզական ու հանդիսութիւնների դահլիճների մասնաշէնքը՝ իր առանձնացուած բացօթեայ մարզադաշտով: Ըստ կազմուած առաջադրանքի, պահպանելով



Տեսարաններ էջմիածնի Հայորդեաց տան

բաղկացուցիչ շէնքերի կոնստրուկտիւ համակարգը, նշուած շէնքերը վերայատակագծուել եւ նորովի են վերակառուցուել:

Լսարանային եռայարկ մասնաշէնքի առաջին յարկի նախասրահը յարակից մի քանի սենեակներով վերածուել է 60-80 տեղանոց բազործական ճաշարանի՝ համապատասխան խոհանոցային եւ պահեստային մասերով: Նախկինում գոյութիւն ունեցող հանդերձարանը տրամադրուել է պահակային եւ սպասարկող անձնակազմին: Հայորդեաց տան ու ճաշարանային հատուածի վարչական սենեակները զբաղեցնում են ճաշարանի արեւելեան կողմը՝ նրանից անջատուելով հիւսիս-հարաւ ձգուող երկար միջանցքով: Հայորդեաց տան մուտքը հիւսիսային կողմից է: Մինչեւ նախամուտքը կանաչապատ տարածք է: Նախամուտքը ապակեպատ ընդարձակ տարածութիւն է, որտեղ տեղաբաշխուել են նաեւ ներքին աստիճանավանդակն ու սանհանգոյցները:

Նախասրահի հիւսիսային կողմից անցում է կատարուում նաեւ դէպի մարզական ու հանդիսութիւնների դահլիճները: Խմբակային դասասենեակները հիմնականում տեղաբաշխուել են երկրորդ եւ երրորդ յարկերում՝ հիւսիս-հարաւ միջանցքի երկու կողմերում: Լսարանների առջեւ ընդարձակ պատշգամբն է, որ ծառայում է նաեւ համադպրոցական միջոցառումների եւ դասամիջոցների համար: Բոլոր լսարանները վերայատակագծուել եւ վերածուել են տարբեր պրոֆիլի խմբակային դասասենեակների: Այդ թւում՝ պարարուեստի, գորգագործութեան, ասեղնագործութեան, ձեռքի աշխատանքների, երաժշտութեան զանազան բնագաւառների, փայտի գեղարուեստական մշակման, համակարգչային տեխնիկայի ուսուցման, քանդակագործութեան եւ կալագործութեան, գեղանկարչութեան եւ մանրանկարչութեան, օտար լեզուի, կրօնի դասաւանդման եւ այլն: Շէնքը օժտուած է ժամանակակից ինժեներական բոլոր ծառայութիւններով: Ամէն մի դասարան, ըստ պրոֆիլի, ունի համապատասխան ինֆրաստրուկտուրա: Հաշուի առնելով, որ շէնքերի հիմնական վնասուածութեան պատճառը տանիքի հարթ լուծումն է, այն վերակառուցման ընթացքում փոխուել է՝ դառնալով քառալանջ:

Ուսումնական կառույցի արեւմտեան կողմում գտնուող միայարկ շէնքը վերածուել է ցուցասրահի: Այն կենտրոնական հատուածում ունի ջրաւազան եւ ծաղկանոցներ: Ցուցասրահի հիւսիսային կողմում տնտեսական գծով փոխտնօրէնի աշխատասենեակն է եւ համակառույցի հանդերձարանը: Մասնաշէնքի տարածքը միջանցիկ է, որ տանում է դէպի դահլիճներ: Հանդիսութիւնների դահլիճի նստատեղերի քանակը շուրջ 50 տեղով աւելացնելու համար, մուտքային մասը եռանկիւնաձեւ մակերեսից վերածուել է ուղղանկիւնու, ինչպէս նաեւ էվակուացիոն նպատակներով աւելացուել է դէպի բակ բացուող մուտքերի թիւը: Ամբողջապէս վերանորոգուել է բեմական մասը ու լրացուել համապատասխան բեմական զրպաններով, վերափոխուել են հանդիսութիւնների դահլիճի յատակն ու կախովի առաստաղը: Նոյն կարգի ուղղումներ կատարուել են նաեւ բասկետբոլի ու վոլեյբոլի, շէյփինգի ու ազգազրական համոյթների դահլիճներում, նորոգուել են ծածկերն ու օդափոխութեան համակարգը: Դահլիճային մասը լրացնում է հարաւային կողմում գտնուող 60 տեղանոց բացօթեայ սրահը, որը կահաւորուել է ամրացուած նստատեղերով: Բնականաբար տուեալ համալիրի գեղարուեստականութիւնը լրացնում են թուարկուած շէնքերի միջեւ տարածուող կիսածածկ հարթակներն՝ իրենց գազօններով եւ հայելային մակերեսներով: Վերակառուցման ընթացքում հանդիսութիւնների մասնաշէնքի տանիքը ամբողջապէս ջրամեկուսացուել է:

Հայորդեաց տան արդիականացումը կատարուել է ըստ անհրաժեշտութեան կառուցուած նոր միջնորմներով, նորովի կառուցուել են տանիքները, դռներն ու պատուհանները: Ամբողջապէս վերականգնուել են էլեկտրական սնուցման, օդափոխութեան, կոյուղու եւ ջրամատակարարման, ջեռուցման ցանցերը եւ այլն:

* * *

Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալութեան տարիները կարելի է բնութագրել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառուցապատման համակարգուած զարգացմամբ: Վազգէն Ա Կաթողիկոսի ժամանակ օպտիմալ

կառուցապատմամբ ամրագրուած Մայր Աթոռի տարածքը Գարեգին Բ Հայրապետի ջանքերով աննախադէպ ընդարձակուեց՝ ի հաշիւ խորհրդային տարիներին օտարուած տարածքների վերադարձման: Վազգէնեան շրջանի ցանկապատը իրացուեց, եւ անցկացուող նոր ցանկապատի համար այդ տարածքը յօրինուածքային կորիզ դարձաւ: Մայր Աթոռը ընդարձակուեց այնքան, որ այն յարակից դարձաւ մի կողմից Վաղարշապատ քաղաքի Կոմիտասի անուան հրապարակին, իսկ միւս կողմով ընդհուպ մօտեցաւ Ս. Գայիանէ վանքի տարածքին:

Գարեգին Բ Հայրապետի բանիմացութեամբ Մայր Աթոռի տարածքի ընդարձակումը կատարուում է օգտապաշտօրէն եւ ստեղծագործաբար՝ դրանով իսկ ամրագրելով դեռեւս ընթացող կառուցապատման օրինաչափութիւնը: Ըստ անհրաժեշտութեան յստակօրէն շեշտուեցին Մայր Աթոռի առանցքային ուղղութիւնները՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի դարպասից դէպի Մայր Տաճար ու Նոր Վեհարան, ինչպէս նաեւ Վազգէնեան դարպասից դէպի Ս. Գայիանէ վանք: Սահմանելով դարպասների տեղերը, Մայր Աթոռի տարածքը յստակօրէն բաժանուեց 5՝ Մայր Տաճարի բակի, վեհարանային, կրթամշակութային, միաբանական եւ տնտեսական գօտիների: Կառուցապատման մէջ յստակեցուեցին հետիոտնի եւ մեքենաների շարժման ուղղութիւնները, Ս. Գրիգոր Լուսաւորչի դարպասից դէպի Մայր Տաճար ձեւաւորուեց ուսումնամշակութային բովանդակութեամբ հետիոտն անցուղարձի հրապարակ, իսկ արտագրական համակառոյցի ուղղութեամբ՝ մեքենաների շարժման գօտին եւ հրապարակը: Մայրավանքի ընդհանուր տարածքը մտայղացուել է որպէս թանգարան բաց երկնքի տակ: Ընդ որում, կառուցապատման զարգացումը կատարուում է համալիր եղանակով, ժառանգուած բոլոր շէնքերը (Մայր Տաճարը, Հին եւ Նոր Վեհարանները, Խրիմեան թանգարանը, վարչական շէնքը, Ղազարապատը եւ յարակից շէնքերը, վանատունը, տպարանը, Երեմեան խցերը, հին մատենադարանը) առանց բացառութեան, նորոգուելով արդիականացուել են: Կառուցապատումը օրինաչափօրէն խտանում է ստորեւ ուսումնասիրուող նորակառոյց բազմաթիւ շէնքերով, որոնք այսօր նոր երանգ եւ շունչ են հաղորդում Մայր Աթոռի համալիրին:



Բ. ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՉԷՆՔԵՐԸ



Մայր Աթոռի տարածքում նոր շէնքերի յակելումը ընթանում է ռացիոնալ մտածողութեամբ: Ստորեւ ուսումնասիրուող նորակառոյց եկեղեցական, հոգեւոր, ուսումնական, մշակութային եւ արտադրական շէնքերը ուղղուածութիւն են տալիս Մայր Աթոռի բովանդակութեանը եւ, հետեւաբար, նրա ապագայ գործունէութեանը:

1. ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Նոր եկեղեցիների կառուցումը եկեղեցաշինական տիպերի հետաքրքրութիւն մտցրեց Մայր Աթոռի կառուցապատման մէջ: Մայր Տաճարի կողքին երեւան եկան Բաց խորանի, մկրտարանի եւ ուսումնական եկեղեցու օրինակներ, որոնք ոչ միայն եկեղեցական մասշտաբ աւելացրեցին համալիրին, այլ նաեւ արդիականութեան եւ նորարարութեան ոգի մտցրեցին Մայր Աթոռում:

ԲԱՑ ԽՈՐԱՆ

Համակառոյցը բարձր գեղարուեստականութեամբ մտայղացում է, որը կառուցուելով Հայաստանում քրիստոնէութեան պաշտօնական կրօն հռչակման 1700-ամեակի շրջագծում՝ նուիրուած է Ս. Տրդատ Գ արքային: Բաց խորանը, որպէս Ս. Գրիգոր Լուսաւորչի դարպասի եւ բացօթեայ եկեղեցու համադրութիւն, աննախադէպ կառոյց է, որում վարպետօրէն մեկնաբանուել է քրիստոնէութեան մուտքը Հայաստան: Համալիրը տեղադրուած է Մայր Տաճարի առանցքով դէպի Արարատեան փողոցի կողմը՝ Գէորգեան ճեմարանի հարաւային կողմում: Այն դէպի Մայր Տաճար տանող հանդիսաւոր փողոցի սկզբում զետեղուած տետրապիլօն դարպաս է, հարաւային կողմում բացօթեայ արարողու-



Տեսարաններ Բաց խորանից



Հատուած Բաց խորանից

Թիւնների համար յատկացուած խորանի առջեւ ծաւալուող ուղղանկիր հրապարակով: Համակառոյցը ստեղծագործական բարձր թուիչք ունի, որտեղ յորինուածքի կենտրոնը բացօթեայ հարթակն ու յարակից փողոցն են, իսկ յորինուածքի գլխաւոր տարրը միասնաբար խորանն ու դարպասն են: Դրանք միաձոյլ են եւ միաժամանակ գործնականօրէն անջատ: Ստեղծագործական խումբը՝ ճարտարապետներ Ջիմ Թորասեանն ու Ռոմէօ Ջուլիակեանը, քանդակագործ Երուանդ Քոջաբաշեանը եւ շինարար Գագիկ Գալստեանը մեծ եռանդ են ներդրել համալիրի կայացման գործում, որի բացումը տեղի ունեցաւ 2001 թ. օգոստոսի 2-ին: Մեկենասն է Նիւեօրքաբնակ Լուիզ Սիմոն Մանուկեանը:

Ծաւալատարածական կառուցուածքով Բաց խորանը ուշ անտիկ ժամանակների մեմորիալի ու վաղ քրիստոնէական խորանի կամ օրատորիայի վերացականացուած մեկնաբանութիւն է, որ յաւերժացնում է քրիստոնէութեան պաշտօնական ընդունումը Հայաստանում դեռեւս 4-րդ դարի առաջին տարիներին: Փաստօրէն, տետրապիլօնը իր պլաստիկայով չորս օրդերների իմպոստային մասում ձեւագոյացնում է շրջադարձ դէպի եկեղեցու գմբէթատակ կամարները, որոնք առաստաղային մասում վերածուում են դէպի երկինք ու երկնայինը ուղղուած քառակուսի բացուածքի: Տետրապիլօնի սիւները 14 մ առանցքային թուիչքով հոսթիոլ յենարաններ են, դրանցից երկու արեւմտեանները օրդերի վզիկի մասում մեկնաբանուել են որպէս աստիճանաձեւ պտտուող պրոպիլեոս, իսկ խոյակի հատուածում կրում են Հայաստանում քրիստոնէութիւնը տարածող Ս. Թադէոս եւ Ս. Բարդուղիմէոս առաքեալների հարթաքանդակները: Տետրապիլօնի արեւելեան յենարանները խոյակի մասում պարզակաձեւ առաջ կարկառուելով՝ գոյացնում են վերեւում խաչով պսակուած մուտքը, որտեղ խաչի երկու կողմերում բացարձակ մեծութեամբ ընդգծուած պարզակների վրայ Ս. Տրդատ Գ թագաւորի եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի հարթաքանդակներն են:

Եթէ տետրապիլօնի ծաւալատարածական լուծումներում, քանդակային կատարումներում եւ տարբեր մասերում եղած վիմական մակագրութիւններով հաստատագրուած է քրիստոնէութեան մուտքը

Հայաստան, ապա Բաց խորանի ենթամասում եղած յաջորդական կիսաշրջաններով մեկնաբանւում է քրիստոնէութեան զարգացումը՝ հիմքից դէպի կամարող բարձունքը: Խորանը լուծուած է միանգամայն ակուստիկական առանձնայատկութիւններով, այն յատակագծում դէպի յետնապատը նեղացող սեղանաձեւ տարածութիւն է, որ առաջնամասում 14 մ է, իսկ յետնամասում 4 մ: 2.3 մ լայնութեամբ յետնապատը իր առանցքային ձգուած լուսամուտով խորհրդանշում է Քրիստոսի լոյսը, մինչդեռ նրա երկու կողմերում եղած՝ ստորին մասում խորշաւոր եւ վերելում վեցական կիսակամարներով ջլատումները խորհրդանշում են առաքեալներին: Խորանի ընդհանուր խորութիւնը կազմում է 9 մ: Նկարագրուած ծաւալատարածական լուծումը փակ եւ բաց տարածութիւնների համադրութեամբ ստեղծուած միաշունչ դիսիմետրիա է, որտեղ տետրապիլոնը միջանցիկ տարածութիւն է, իսկ խորանային հատուածը՝ պատուանդանով բեմ: Երկու ծաւալների միջեւ ստեղծուած ճակատային առանցքում խտացուած է համակառոյցի մտայղացումը, որ իրենից ներկայացնում է կամարի եւ լուսաւոր խաչի համադրութեամբ կազմուած ինտերվալ: Այս առանցքով զարգանում է յօրինուածքի յատակագծային տարածական կառուցուածքը, որտեղ տուեալ առանցքից դէպի հիւսիս՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի դարպասից սկիզբ առնող պողոտան է, որ հեռապատկերում ունենալով Մայր Տաճարը՝ անընդհատ երկարում է դէպի արեւմուտք: Նոյն առանցքից դէպի հարաւ, շրջապատից մէկ աստիճանի չափով բարձրացուած խորանի առջեւ տարածուող բացօթեայ հրապարակն է: Այն կազմուած է երկու մասերից՝ խորանի հարաւ-արեւմտեան անկիւնում եղած 8 մ կողմով քառակուսի հարթակից, որ կարող է ծառայել երգչախմբի կամ պատուաւոր հիւրերի համար, ինչպէս նաեւ հիմնական հարթակից՝ 15 x 65 մ չափերով: Յետնաբեմի հատուածում՝ վէմքարի կամ սեղանի ետեւում եղած աստիճանները 2.7 մ բարձրութեամբ իջնելով՝ խորանի տակ ստեղծում են օժանդակ կրիպտորիան: Երկու ենթակառոյցների միջեւ եղած ճակատային առանցքի ընդգծումը ինչպէս արեւմտեան ճակատում, այնպէս էլ արեւելեանում կատարուել է միանգամայն արտայայտիչ ծաւալներով, որոնք միասնաբար ստեղծում են կանոնա-

ւոր երկրաչափական ուրուագիծ եւ տարածականութեամբ շնչող ծաւալային պլաստիկա:

Առանձնապէս ուշագրաւ է տետրապիլօնի եւ խորանի իրարից զանազանուող լոյս-ստուերային արտայայտչականութիւնը, որն ընտրուած ծաւալատարածական ձեւերի սկզբունքային տարբերութեան արդիւնք է: Որքան էլ երկու ենթածաւալներում Ֆակտուրալ կամ կապտաւուն բազալտի նիւթն ու գոյնը նոյնական է, այնուամենայնիւ, նրանք հնչում են իրար լրացնող հակադրութայնութեան միասնակա-նութեամբ: Նոյնը պէտք է ասել նշուած ծաւալների մասնահատման օրինաչափութիւնների կապակցութեամբ: Փաստօրէն, տետրապիլօնը մտայղացուած է մակերեւութային տարրերի մասնահատման սկզբունքով, իսկ խորանը՝ ուղղահայեաց կիսակամարների առաջագնաց շարքով: Համալիրը 14 մ ընդհանուր բարձրութեամբ միջավայրում դիտուում է միանգամայն մոնումենտալ եւ ինքնատիպ, որը Մայր Աթոռի տոհմիկ ճարտարապետութեանը արդիականութեան նոր երանգ է յաւելում:

Ս. ՎԱՐԴԱՆ ԵՒ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԱՐԱՆԸ

Անուանում է երկու անուններով, որովհետեւ բովանդակում է երկու մկրտարաններ, մանուկներինը՝ Ս. Յովհաննէս Մկրտիչ, իսկ մեծահասակներինը՝ Ս. Վարդան Զօրավար: Համակառոյցը տեղադրուած է Մայր Տաճարի բակում, հիւսիսային կողմում եղած խաչքարերի ցուցադրման խուլ կամարաշարի կենտրոնական մասում՝ Հին մատենադարանից արեւմուտք: Շէնքի ճարտարապետներն են Զ. Թորոսեանը եւ Ռ. Զուլհակեանը, շինարարական իրականացումը՝ Գ. Գալստեանի: Մկրտարանի օծումը կատարուեց՝ 2008 թ., մեկենասն է լոնգոնաբնակ Արմէն Սարգսեանը:

Համակառոյցը բաղկացած է մուտքային նարտէքսից, մեծ եւ փոքր մկրտարաններից, ինչպէս նաեւ մեծ մկրտարանի նախամուտքի երկու

կողմերում եղած օժանդակ սենեակներից: Նախասրահը տեղաբաշխուած է խաչքարային կամարաշարի առաջնամասում, օժանդակ սենեակները կամարաշարի անմիջական շարունակութիւնն են կազմում, մինչդեռ երկու մկրտարանները գտնուում են կամարաշարի ետին մասում տարածուող այգու տարածքում: Առանձին կանգնած մկրտարանի մտայղացումը եզակի երեւոյթ է հայկական ճարտարապետութեան մէջ, այն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնած եւ վերեւում նշուած հեղինակային խմբի իրականացրած նորարարութիւնն է, որը ոչ միայն նոր շինութիւն է, այլեւ հայկական իրականութեան մէջ ճարտարապետական նոր տիպ եւ պաշտամունքային ճարտարապետութեան զարգացման նոր փուլի վառ վկայութիւն¹: Համակառոյցի յօրինուածքի կենտրոնն ու գլխաւոր տարրը Ս. Վարդան մկրտարանն ու իր գմբէթն է: Առանցքային լուծումը միահիւսուած է երկու դիտողականութիւն, մէկը՝ Երեմեան խցերի եւ տպարանի միջեւ անցնող փողոցի ուղղութեամբ է, որ կազմակերպուել է երկու մկրտարանների կանթեղների տարածական դասաւորութեամբ, իսկ միւսը՝ Մայր Տաճարի դարպասի եւ հիւսիսային դռան ուղղութեամբ է, որ կազմակերպուել է նարտէքսին յաջորդող նախասրահի եւ Ս. Վարդան մկրտարանի կանթեղների դասաւորութեամբ: Երկու առանցքներն էլ Մայր Տաճարի բակին դրամատիզմ են հաղորդում: Առհասարակ մկրտարանի ծաւալատարածական լուծումը գտնուած է վարպետութեամբ, այն ենթարկուելով շրջակայ կառուցապատմանը՝ միաժամանակ ենթակայ է Մայր Տաճարի մասշտաբին, բայց ֆորմայով մնում է միանգամայն ուշագրաւ:

Ս. Յովհաննէս Մկրտիչ եւ Ս. Վարդան մկրտարանի նարտէքսը ինքնատիպ յօրինուածք է, այն աստիճանական անցում է բակից դէպի շէնքի ներսը: Ընկատի երկու կամարների միջին հատուածում փորագրուած խաչերի կոմպոզիցիան մասշտաբով կրկնում է իրենից առաջ գտնուող 1915 թ. յուշակոթողի խաչերի չափերը: Մկրտարանի մուտքը բետօնէ ուղղանկիւն շրջանակին արտագծուած կամար է, որ փեղկերի

¹ Տե՛ս Անուշ Տեր-Մինասեան, Սկրտարանի շէնքը՝ որպէս հայկական պաշտամունքային ճարտարապետութեան նոր տիպ, «Ճարտարապետութիւն. Շինարարութիւն», յունուար, 2010, էջ 20:



Տեսարաններ Ար. Վարդան և Ար. Յովհաննես Սկրտիչ մկրտարանից



Աբ. Վարդան եւ Աբ. Յովհաննէս Սկրտիչ մկրտարանի ներքին տեսքը

մասում խաչաձև յարդարանք ունի: Այն յստակօրէն ընթերցւում է նարտէքսի ապակեայ ծածկից մաղուող լոյսի օգնութեամբ, ինչը թոյլ է տալիս յստակ կարգալ նաեւ դէպի աջ գտնուող եւ Գարեգին Բ Հայրապետի խօսքերով փորագրուած նուիրական վիմագրական արձանագրութիւնը (տե՛ս արձանագրութիւն Թ՝ 9):

Ս. Վարդան կամ մեծ մկրտարանը ռոմբաձև դասաւորութեամբ շարունակում է նարտէքսի երկու կամարների եւ մուտքի առանցքը: Այն 13.6մ x 13.6 մ չափերով քառակուսի է, որ մուտքային հատուածում ունի ուղղանկիւն նախասրահ: Նախամուտքի կենտրոնում մկրտարանի հարաւային անկեան սիւնն է: Նրանից մինչեւ նարտէքսը նախասրահի շարունակութիւնն է, որ միացնում է նաեւ օժանդակ սենեակներով կազմուած թեկերը: Ս. Վարդան մկրտարանի յօրինուածքը Սանահինի վանքի գրատան ստեղծագործաբար զուգահեռն է, որ սերում է ժողովրդական բնակելի տան ակունքներից: Դահլիճի ծաւալատարածական կերտուածքն ուղղանկիւն յատակագծից անցում է դէպի գմբէթային ութանիստը, որը գագաթում կրում է ութասիւն կանթեղը: Կանթեղի լոյսի ներքոյ, անմիջապէս ուղղանկիւն դահլիճի կենտրոնում մկրտութեան խաչաձև ավազանն է: Տարբեր կողմերից ճառագայթող լուսային խրճերը խանդաղատանք են հաղորդում սրահի մթնոլորտին: Սրահի քառակուսու անկիւնների վրայ 4 մ բարձրութեամբ, 4.25 մ շառավղով բոլորող տրոմպները 2.25 մ խորութիւն ունեն, որոնք միասնաբար ստեղծում են 8.5 մ կողմով ուղղանկեան կոլիցիա: Այստեղից վերեւ 1.3 բարձրութեամբ պրիզմաձև թմբուկն է եւ 3.4 մ բարձրութեամբ բրգաձև երգիկը: Կանթեղի բացուածքը 2.5 մ է, իսկ բարձրութիւնը 4.3 մ: Գմբէթի վեղարի մակերեւոյթներով եւ աշխարհի կողմերին ուղղուած նիստերի առանցքներով տեղաբաշխուել են 4 մեծ խաչաձև լուսամուտ, որոնք իրենց թեք տեղադրութեամբ ներսում երկնայինի խորհրդաւորութիւն են ստեղծում: Դահլիճի արեւելեան խորշում խորանն է, իսկ արեւմտեան կողմում մոմավառութեան հարթակներն են, որոնց միջով անցում է կատարւում դէպի Ս. Յովհաննէս Մրկտիչ մկրտարան:

Ս. Յովհաննէս Մրկտիչ փոքր մկրտարանը, յօրինուածքով կրկնում է նախորդին, լինելով նրա քառորդ տարողութեամբ: Այն տեղադրուած

է Ս. Վարդան մկրտարանի արեւմտեան կողմում՝ 45° թեքութեամբ: Դահլիճը 6.4 մ x 6.4 մ չափերի ուղղանկյունի է, օրին 45° տակ ներգծուած կոլիցիոն քառակուսու կողը 5.0 մ է: Տրոմպների շառաւիղը 3.7 մ է, իսկ խորութիւնը 2.5 մ: Մկրտարանի վեղարը ուղղանկյուն կանոնաւոր բուրգ է՝ կենտրոնում համապատասխան քառակուսի բացուածք ունեցող եւ 4.0 մ բարձրութեամբ կանթեղով: Մկրտութեան աւազանը նոյնպէս տեղադրուած է դահլիճի կենտրոնում: Մկրտարանի ծաւալների տարածական դասաւորութիւնը եռանկիւնաձեւ ուրուագծով է, որ նրան առանձնացնում է Մայր Տաճարի բակի միւս շէնքերից: Սակայն բաղկացուցիչ մակերեւոյթների համաչափական մշակմամբ, շինանիւթով եւ տեքստուրալ լուծումներով միանգամայն նոյնական է շրջապատի հետ: Նոյնը պէտք է ասել լոյս ու ստուերային, մասշտաբային եւ գունային լուծումների մասին: Փաստօրէն համակառոյցի իւրայատկութիւնը ծաւալային մասնահատումներն են, որոնք նման լինելով Մայր Տաճարի բազմազմբէթ ուրուագծին՝ փոքր ու մեծ ծաւալների տարածական կրկնութիւն են ստեղծում: Այս բոլորը մեղեդայնութիւն են հաղորդում մկրտարանի յօրինուածքին, որում օգտագործուած վիմագրական եւ մի քանի զարդամոտիվները միանգամայն գործնական ելակէտեր ունեն: Ս. Վարդան եւ Ս. Յովհաննէս Մկրտիչ մկրտարանն իր ոճով խորհրդանշանային ու արտայայտչապաշտ սկզբունքները միահիւսող արդի ռացիոնալիզմ է:


ՍՐԲՈՑ ՀՐԵՏԱԿԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Ս. Հրեշտակապետաց եկեղեցու հիմնարկէքը կատարուել է 2007 թուականին: Եկեղեցու կառուցման մեկենասն է՝ երեւանաբնակ Գագիկ Գալստեանը: Ս. Հրեշտակապետաց եկեղեցին կառուցուած է Գէորգեան ճեմանարանի տարածքում՝ ամբողջացնելով ուսումնական համալիրը: Այն իւրայատուկ դամբարան եկեղեցի է, որտեղ անցումը դէպի մեմորիալ մաս կատարւում է եօթ խաչերի ուղեկցութեամբ ոլորապտոյտ իջնող աստիճանների միջոցով: Բնականաբար, սա միջինաց-

նում է կրիպտորիա ունեցող եկեղեցու տիպը երկյարկ դամբարան եկեղեցիների հետ: Վերջիններում տապանատան եւ եկեղեցու մուտքերը առանձնացուած են, ինչպէս օրինակ՝ Կապուտանի Ս. Մինաս, Եղուարդի Ս. Աստուածածին եւ Նորավանքի Բուրթլաչէն Ս. Աստուածածին եկեղեցիներում, մինչ կրիպտաւոր եկեղեցիների տապանատան մուտքերը աւանդատներից են, ինչպէս Ս. Գայիանէ, Ս. Հռիփսիմէ, Օշականի, Շուշիի եկեղեցիներում: Տուեալ մտայղացումը կարելի է համեմատել նաեւ արդի ճարտարապետութեան օրինակների հետ, ինչպէս օրինակ՝ Ռ. Իսրայէլեանի կողմից նախագծուած Երեւանի Յաղթանակի յուշարձանն է:

Ս. Հրեշտակապետաց եկեղեցին կառուցուել է Մայր Աթոռի Աթարբէկեան փողոցին յարակից այգու առանցքով եւ Գէորգեան ճեմարանի բակի հիւսիս-արեւմտեան կողմում, այնպէս որ այն բոլոր կողմերից լրացնում է Էջմիածնի համալիրի ուրուագիծը: Շէնքի ճարտարապետն է Ջ. Թորոսեանը, կոնստրուկտորը՝ Յովհաննէս Մեյրոյեանը, իսկ կառույցը իրականացնող շինարար ճարտարագէտը՝ Գագիկ Գալստեանը, քանդակագործը՝ Երուանդ Քոջաբաշեանը: Ինչպէս նշուում է նախագծի բացատրագրում՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից յանձնարարուել էր կառուցել մի եկեղեցի՝ ի նշանաւորումն հայ եկեղեցական շինարարութեան վերածննդի: Ընդամէնը 25 մ տրամագծով այս կլոր եկեղեցին կառուցուել է որպէս կապող օղակ հոգեւոր մայրաքաղաքի Կոմիտասի հրապարակի եւ Մայր Աթոռի համալիրի միջեւ: Եկեղեցին ստեղծագործաբար շարունակում է հայ ճարտարապետութեան բազմախորան եկեղեցիների յօրինուածքը, ինչպէս Խժկոնքի համալիրի յուշարձաններն են, Անիի Ս. Փրկիչ եկեղեցին եւ այլն:

Ս. Հրեշտակապետաց եկեղեցին կենտրոնագմբէթ, յատակագծում շրջանաձեւ յօրինուածք է: Այն մինչեւ 12.5 մ նիշը կազմուած է 3 մ մուտուլային բացուածքով ելուստաւոր 15 նիստերից եւ 6 մ լայնութեամբ արեւելեան ուղղանկիւն խորանից: Եկեղեցու մուտքերը երկուսն են՝ գլխաւորը գտնուում է արեւմտեան, իսկ միւսը՝ արեւելեան կողմում:




Աբ. Ջրեշտակապետաց եկեղեցին յարակից կառույցներով



Հատուածներ Աբ. Հրեշտակապետաց եկեղեցուց



Աբ. Հրեշտակապետաց եկեղեցու ներքին հատուած



Ս. Հրեշտակապետաց եկեղեցու խորանը



Ս. Հրեշտակապետաց եկեղեցու ներքին տեսքը



Ս. Հրեշտակապետաց եկեղեցու գմբեթի ներքին տեսքը

Աղօթասրահի որմնախորշերի կողերից վերեւ տեղադրուած սկուիւնչները կազմում են 1.5 մ բարձրութեամբ գմբէթատակ օղակը: Թմբուկը լուծուած է 3.7 մ բարձրութիւն ունեցող յաջորդական 30 խաչերի շարքից, որ խորանի վերեւում շարունակուած է երեք խաչի լայնութիւն ունեցող ուղղանկիւն բացուածքով: Այստեղ, առանցքային կարգով կախուած 4 զանգակները բացուածքը բաժանում են երեք մասերի: Այս եզակի ստեղծագործական քանդակագարդ լուծումը խորհրդանշում է Քրիստոսի 33-ամեայ երկրաւոր կեանքը, ընդգծում վերջին երեք տարիները, որից յետոյ Փրկիչը համբարձուեց երկինք:

Այս տրամաբանութեամբ է, փաստօրէն, Ս. Հրեշտակապետաց եկեղեցու կրիպտորիայից եւ աղօթասրահից կազմուած կառուցուածքը: Եկեղեցու գմբէթը ծաւալատարածական ձեւերով արեւի պատկերագրութիւնն է: Այն կենտրոնում ընդգրկում է 7.30 մ շառակով իշխող չափերով վեղարի սֆերան, որի շուրջ ճառագայթաձեւ դասաւորուած են լոյսի խորքով նկարուող խաչերը: Թմբուկը 5.2 մ բարձրութեամբ է, իսկ վեղարի բարձրութիւնը մինչեւ խաչի խնձորակը կազմում է 6 մ: Վեղարը ծալքաւոր է՝ կազմուած 1.4 մ բարձրութեամբ 16 ճակտօններից: Թմբուկ-վեղար համաչափութիւնը ոսկեհատման յարաբերութեան սահմաններում է:

Ս. Հրեշտակապետաց եկեղեցու աղօթասրահը մինիմալիստական կերտուածք ունի: Եկեղեցու ներքին մակերեւոյթը միասնական է, որի վրայ վերեւից ներքեւ յաջորդաբար զետեղուած են թմբուկի խաչերը, որմնախորշերի առանցքով կախուած կանթեղները, վեղարի տակ քանդակուած որմնագիր արձանագրութիւնը՝ «Դու ես ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք մեր», ինքնատիպ լուծումով խորանն ու գաւազանասիւնները, հիւսիսային կողմում առանձին կանգնած մկրտութեան ակազանը:

Խորանի 60 սմ բարձրութեամբ բեմը դէպի դահլիճ առաջացած ուղղանկիւն հարթակ է, նրա առաջնաբեմի երկու անկիւններում իւրայատուկ մասշտաբով մեկնաբանուած գաւազանասիւններն են: Յետնաբեմը յատակագծում ուղղանկիւն եւ վերեւից կամարակապ խորանային խորշ է, որի առանցքով տեղադրուած լուսային խաչը երկու կողմերից

նուազողական պրոգրեսիայով արծուաթեւի նկարուածքով սահում է դէպի որմնախորշի կողերը եւ կազմում եռանկիւնաձեւ յետնապատ: Այստեղ տեղադրուած մեծ ու փոքր խաչքարերի ու աղաւնու հարթաքանդակներով կոմպոզիցիան նստում է խորանի առջեւ տեղադրուած լայնակի համաչափութեամբ վէմ քարի վրայ: Բնական լոյսի ընտրուած ուժգնութիւնը մեղմ է ու մաղուող, ինչը եկեղեցու ներքին տարածքին հաղորդում է աղերսի ու հոգեւոր խաղաղութեան մթնոլորտ:

Խորանի հիւսիսային կողմի կամարակապ եւ եօթ խաչաքանդակ վահանների շարքը մատնանշում է կողային պտուտակաձեւ աստիճանները, որոնք ոլորապտոյտ տանում են դէպի մեմորիալ սրահը: Այն շուրջանակի 8 սիւներով իրականացուած պարագծային միջանցքով եւ կենտրոնական սրահով համադրուած տարածութիւն է: Սրահի խորանային մասի յետնապատի կիզակէտում մի մեծ խաչ է, որը վերցնում է ողջ ինտերիերը: Այստեղ՝ առաստաղի, յատակի հարթութիւնների վրայ. ամենուրեք խաչերի հարթաքանդակներ են, իսկ արեւմտեան կողմում տեղադրուած է յաւերժութեան խորհրդանիշը պատկերող շրջանաձեւ մեծ բարձրաքանդակ:

Տպաւորիչ է եւ խորհրդաւոր Ս. Հրեշտակապետաց եկեղեցու ներքին յարդարանքը: Նոյնքան տպաւորիչ են նրա արտաքին լուծումները: Տաճարի ծաւալատարածական լուծումը կանոնաւոր երկրաչափական ձեւ ունի: Աղօթասրահն ու գմբէթը աւանդական արմատ 2-ի յարաբերութեամբ են: Դրանք բաժանող կամարակապը հարաւարեւելեան կողմից վերեւից եզերուած է վիմագիր արձանագրութեամբ՝ «Եւ նստաւ տապանն եօթներորդում ամսեանն ի քսան եւ եօթն ամսոյն ի լերինս Արարատայ, եւ օրհնեաց Աստուած զՆոյ եւ զորդիս նորա եւ ասէ ցնոսա՝ աճեցէք եւ բազմացարուք եւ լցէք զերկիր եւ տիրեցէք դմա»: Թմբուկի լուսամուտների խաչերը վերեւից նոյնպէս կամարակապ են՝ գազաթային մասում ունենալով առանցքային վարդեակներ: Առհասարակ, եկեղեցու վեհութիւնն ընդգծելու համար նրա ենթածաւալների համամասնութիւնը դէպի վերեւ նուազողական օրինաչափութեամբ է: Չորս ճակատների առանցքներն ու ճանաչողական տարրերը ընդգծուել են հարթաքանդակային լուծումներով, ինչպիսիք են դէ-

պի քաղաքային հրապարակի կողմն ուղղուած ճակատի քանդակը, որ պատկերում է Ս. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքով Մայր Տաճարի արարումն ու յիշատակագրութիւնը՝ «էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա» եւ «Ի վերայ Աջոյն եւ Սրբոյ էջմիածնի ամենայն ազգս հայոց կապեալ կայ»: Արեւելեան ճակատի առանցքային ընդգծումը կատարուել է խորանի խաչաձեւ լուսամուտով, հարաւային ճակատում երկրորդական մուտքով եւ արեւային ժամացոյցով կազմուած կոմպոզիցիան է, իսկ արեւմտեան կողմում եկեղեցու շքամուտքը՝ իր քանդակազարդ բարաւորով:

2. ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ՎԱՐՉԱՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՇԷՆՔԵՐԸ

Վանքապատկան նոր կառոյցները ներկայացւում են նորաշէն եկեղեցիներին առանձնացուած: Ուսումնասիրութեան մէջ ընդգրկուել են եկեղեցական, կրթական, նաեւ՝ վարչական եւ հասարակական սպասարկման նորակառոյցները, որոնք կներկայացուեն առանձնացուած խմբերով:

ԳԵՈՐԳԵԱՆ ՀՈԳԵԼՈՐ ԾԵՄԱՐԱՆԻ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԾՈՒՄՆ ՈՒ ՆՐԱ ՆՈՐԱԿԱՌՈՅՑՆԵՐԸ

Գէորգեան հոգեւոր ճեմարանը Մայր Աթոռի սկզբունքային կառոյցներին է: Այն խորհրդանշում է Ս. էջմիածնի ունեցած առաջնորդող դերը ազգային-հոգեւոր կրթութեան մէջ: Գէորգ Դ Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի ջանքերով կառուցուած 19-րդ դարի շէնքը խորհրդային տարիներին ծառայել է որպէս Վաղարշապատի թիւ 1 միջնակարգ դպրոց: Երկրորդ աշխարհամարտի տարիներին այն շահագործուել է որպէս գինուորական հիւանդանոց: Պատերազմից յետոյ

կրկին ծառայելով որպէս դպրոց՝ վերանուանուել է նաեւ Անաստաս Միկոյեանի անուամբ: Վազգէն Ա Կաթողիկոսի դիմումով 1959 թ. վերադարձուելով Մայր Աթոռին՝ մինչեւ 1994 թ. եղել է թանգարան: Գարեգին Ա Հայրապետի օրօք՝ 1996-97 թթ. ուսանողական նորակառույց հանրակացարանի հետ վերաբացուել է որպէս հոգեւոր ճեմարան: Գարեգին Բ Ամենայն Կաթողիկոսի նախաձեռնութեամբ 2003 թ. Գէորգեան հոգեւոր ճեմարանը ստացել է բարձրագոյն հաստատութեան՝ Աստուածաբանական համալսարանի կարգավիճակ: Այս նոյն ժամանակ իրականացուեցին շէնքի վերանորոգման ու ընդարձակման աշխատանքները՝ որպէս Մայր Աթոռի կառուցապատման հիւսիսարեւելեան կողմը աւարտող տարածք: Ընդհանուր համալիրը վերածուեց ճեմարանի շէնքի եւ նորակառույց Ս. Հրեշտակապետաց եկեղեցու միջեւ տարածուող բականման տարածութեան, որտեղ Արարատեան փողոցին զուգահեռ տեղադրուեց մի նոր մասնաշէնք եւ բռնադատուած հոգեւորականներին նուիրուած յուշակոթող: Համալիրը հարաւային կողմում յարում է Ս. Գրիգոր Լուսաւորչի դարպասի ու Բաց խորանի առջեւ տարածուող հրապարակին, իսկ արեւմտեան կողմում՝ գոյութիւն ունեցող այգուն եւ ճեմարանի սաների հանրակացարանին: Գէորգեան ճեմարանի ներկայացուող համալիրը ունի բարձր գեղարուեստականութիւն եւ ստեղծագործական մտքի թռիչք:

Ա. ԳԵՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆԸ

Վերեւում նկարագրուած համալիրի կազմում Գէորգեան ճեմարանի վերանորոգութիւնը հիմնականում կատարուեց ներքին տարածութեան մասշտաբով: Շէնքի արտաքին ծաւալը, որպէս յուշարձան, թողնուեց նոյնութեամբ: Գէորգեան ճեմարանի շէնքը ի սկզբանէ կառուցուել է դասական սխեմայով: 59×17 մ ուղղանկիւն երկյարկ կառույցը կենտրոնական մասում լուծուած է 15 մ տրամագծի ութանիստ գմբէթով: Երկայնական առանցքով անցնող 4 մ լայնութեամբ միջանցքը շէնքը բաժանում է 7.2 մ խորութեամբ հարաւային եւ հիւսիսային



Գեորգեան Հոգեւոր ճեմարանը վերջին վերանորոգումից յետոյ

սենեակաշարքերի: Երկար միջանցքի կողային հատուածներում 9 x 6 մ մոտաքային հանգոյցներ են: Իսկ կենտրոնական հատուածը հարաւային մասում գմբէթաւոր է, իսկ հիւսիսայինում աւարտում է լանջաւոր տանիքով: Վերջինները առաջին յարկում միասնաբար միջանցիկ են, ընդ որում, գմբէթատակ հատուածում հերթապահ սենեակներն են, իսկ հիւսիսային կողմում՝ եռաշարք հանդիսաւոր աստիճանավանդակը, որի տակով կարելի է անցում կատարել դէպի նորաստեղծ ուսումնական բակը: Բացի գլխաւոր աստիճանավանդակը՝ շէնքի արեւելեան եւ արեւմտեան ծայրամասերում կան երկրորդական աստիճանավանդակներ եւ սանհանգոյցներ: Մնացեալ տարածքները լսարաններ եւ վարչական սենեակներ են: Երկրորդ յարկում գմբէթաւոր հատուածը ութանիստ օրատորիա է, որ լուծուած է ակուստիկ նկատառումներով ու գմբէթի գագաթին՝ կանթեղով:

Երկրորդ յարկի դահլիճի առաջնամասում, տուեալ նորոգութեան ժամանակ կառուցուած փայտաշէն աստիճանները սիմետրիկ դասաւորութեամբ տանում են դէպի ընթերցումների ամբիոն ծառայող պատշգամբները: Մնացեալ մասերում նոյնպէս ուսումնական լսարաններն են: Շէնքը վերանորոգուել է ուսումնական միջավայրին հարիւր լուծումներով: Ողջ յատակը սպիտակամոխրագոյն բժաւոր մարմարից է, իսկ սենեակներում բաց ծիրանագոյն մանրայատակ է: Գարեգին Բ Վեհափառի նախաձեռնութեամբ իրականացուած 2003 թ. բարենորոգութեան մեկենասն են Գէորգ եւ Սիրվարդ Յովնանեանները (տե՛ս Թ. 6 վիմական արձանագրութիւնը):

Գէորգեան ճեմարանի ճակատները հանդիսաւոր են՝ 19-րդ դարի ուսումնական հաստատութիւններին բնորոշ նոր դասականութեան լուծումներով: Լուսամուտների դասաւորութիւնը մետրական է, որոնց քայլն ու լայնութիւնը օգտագործուել է նոր կառուցուող դահլիճային մասնաշէնքի ճակատային լուծումներում: Բակի կողմից Գէորգեան ճեմարանի մոտաքային մասը լուծուած է որպէս չորս սիւնանի պորտիկ, որի սիմետրիայի առանցքով, ատտիկայի տակ ունի բարակ շրջանակով երիզուած, հիմնադրութեան կապակցութեամբ կատարուած վիմական արձանագրութիւն:

Բ. ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ԴԱՅԼԻՃՆԵՐԻ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ

Գտնւում է Գէորգեան ճեմարանի հիւսիսարեւելեան կողմում, ուսումնական բակի՝ Արարատեան փողոցին յարող մասում: Շէնքը հարաւային կողմից անցումներով կապուած է Գէորգեան ճեմարանի արեւելեան աստիճանավանդակի հետ, որի հարեւանութեամբ նոր շէնքում տեղադրուած է զգեստափոխման յարմարութիւններով սենեակը: Շէնքի ճարտարապետն է Զ. Թորոսեանը: Շէնքը երկյարկ է. առաջին յարկը 3 մ բարձրութեամբ նկուղային է, իսկ երկրորդ յարկի յատակը գտնւում է 3.5 մ նիշի վրայ: Շէնքի ընդհանուր բարձրութիւնը 10.5 մ է: Արարատեան փողոցի՝ անկեան տակ ընթացող թեքութեանը յարմարուելու համար, հանդիսութիւնների դահլիճը մտայղացուել է որպէս երկու՝ փոքր եւ մեծ եռանկիւնիների համադրութիւն: Հարաւային եռանկիւնին եռայարկ է, որն ունի անցումային նշանակութիւն: Ընդ որում 3.5 մ նիշի վրայ 300 տեղանոց դահլիճի անցումն է, զրոյական նիշի մակարդակում դէպի մարզադահլիճի դիտահարթակը տանող անցումն է, իսկ 3 մ նիշի մակարդակով անցում է կատարւում դէպի մարզադահլիճը: Հարթակների նոյն օրինաչափութեամբ է յաջորդ եռանկեան հարաւային հատուածը, որը գործնական նկատառումով աստիճանների համակարգի ու դէպի դահլիճը տանող նախասրահների համադրութիւն է: Հիւսիսային եռանկիւնին 45 մ հիմքով եւ 17 մ բարձրութեամբ տարածք է, որը հիւսիսային կողմում ընդամենը 3.7 մ երկարութիւն ունի եւ ծառայում է որպէս համակառոցի երկրորդ մուտք՝ իր փոքր նախասրահով եւ աստիճանավանդակով: Դիտահալիճի առաստաղը 3.8 մ քայլով կողաւոր սալեր են, բեմական մասի հայելային հարթութեան վերին գօտին լուծուել է 1 մ բարձրութեամբ ֆերմայով: Ինչպէս ընկալւում է՝ ճարտարապետին վարպետօրէն յաջողուել է բարդ տարածքի վրայ ստեղծել զեղարուեստական լուծում: Նոյնքան վարպետօրէն են կատարուած դահլիճային մասնաշէնքի ճակատային լուծումները: Այն արեւմտեան կողմում լուծուել է 12 ձգուած համաչափութեամբ երկյարկ կամարակապ լուսամուտներով,



Գեորգեան Հոգեւոր Ճեմարանին կից նորակառոյցներ.
վերելում՝ ուսումնական դահլիճները, ներքեւում՝ 20-րդ դարուն բռնադատուած
հայ եկեղեցականների յուշակոթողը

իսկ հարաւային կողմում աւարտուում է կամարակապ մուտքով, որից վերեւ տեղադրուած է քանդակազարդ լուսամուտային բացուածքը: Աներկբայելի է, որ մասնաշէնքի յօրինուածքի կենտրոնը նախասարահային մասն է, հետեւաբար եւ՝ տուեալ ճակատի համար նոյն դերն ունի մուտքի կամարը: Հետաքրքիր յօրինուածքային անցում է կատարուել դիտադասչիճնների մետրական կամարաշարից դէպի համալիրի հիւսիսային՝ վերջում տեղադրուած կոթողը, որն իր ենթատեքստում կրկնում է մուտքի կամարի կիսաշրջան համաչափութիւնը: Ներկայացուած ճակատը՝ ուրուագծով, կամարների պլաստիկայով եւ լոյս ու ստուերով վարպետօրէն գտնուած խորք է Ս. Հրեշտակապետաց եկեղեցու գլանաձեւ ծաւալի համար:

Անդրադառնանք դիտադասչիճային մասնաշէնքի արեւելեան ճակատին. այն հիւսիսային ծայրում շրջադարձային կարգով ներառում է յուշակոթողի 4-3-2 համադրութեամբ յօրինուած թափանցիկ յուշակոթողը, որից յետոյ դէպի հարաւ ճակատը երկխօսութիւն է ստեղծում Արարատեան փողոցի կառուցապատման հետ: Ծակատը հորիզոնական ընդգծումներով խուլ պատ է, որի վրայ մինիմալիստական սկզբունքով նկարուած են առաջին յարկի քառակուսի լուսամուտների մետրիկ շարքը եւ ոսկեհատման յարաբերութեամբ տեղաբաշխուած առանցքով բարձրաքանդակային ձեւաւորումը:

Գ. ԲՈՆԱԴԱՏՈՒԱԾ ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՅՈՒՅԱԿՈԹՈՂԸ

Բռնադատուած հոգեւորականների յուշակոթողը քարէ պատի հարթութեան թեմատիկ մշակման ստեղծագործական երկունք է: Այն քանդակի եւ ճարտարապետութեան սինթէզի մորֆոլոգիական մտածողութեան վարպետ դրսեւորում է: Յուշակոթողը, դասչիճների շէնքի որմնախորշերի շարքի հետ կապուելով արտակենտրոն տրոմպի միջոցով, 10 մ երկարութիւն ունեցող հորիզոնական մասնահատումներով սահում է քաղաքային հրապարակի կողմը: Այն հրապարակին նայող



մասում եռաստիճան օրինաչափութեամբ է: Աստիճաններից իւրաքանչիւրը 3.5 մ բարձրութեամբ է եւ ամէն մի աստիճանի վրայ կրում է մէկական 3 մետրանոց խաչքար: Ստալինեան ռեժիմին զոհ դարձած բռնադատուած հոգեւորականների յուշակոթողը ինքնին երեք մակարդակների վրայ լուծուած 2.2 մ շառավղով կամարների կոմպոզիցիոն համանուագ է: Առաջին յարկում կամարները չորսն են, երկրորդ յարկում՝ երեքը, իսկ երրորդում՝ երկուսը: Կամարները վերին երկու յարկերում թափանցիկ են եւ կենտրոնական առանցքի նկատմամբ սիմետրիկ դասակարգութեամբ: Ընդ որում, ամէն մի կամար իր կենտրոնով անցնող հորիզոնական տրամագծի կենտրոնում ունի պատուանդան, որի վրայ դասակարգուած են տարբեր չափերի խաչքարեր: Առաջին յարկի կամարները երկրաչափական կադրատուրային լուծում ունեն, որտեղ կենտրոնական քառակուսիների վրայ նախատեսուում են քանդակազարդ արձանագրութիւններ եւ այլն: Պէտք է նկատել, որ ստալինեան բռնակարգի զոհերին նուիրուած նման բազմաբովանդակ ստեղծագործութիւն դեռեւս չէր իրականացուել:

ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Գարեգին Ա կրթական կենտրոնի շինարարութիւնը սկսուել է 2011 թ. յունիսին:

Ճարտարապետն է Ա. Նազարէթեանը, շէնքի կառուցման մեկենասներն են՝ Լոնդոնաբնակ Հայկ եւ Էլզա Տիտիգեանները: Համակառոյցը գտնուում է նախկին միայարկ հիւանդանոցի տեղում, Մայր Աթոռի տնտեսական համակառոյցի արեւմտեան կողմում, միաբանական կացարաններից հարաւ:

Գիտական կենտրոնը երկյարկ բակաւոր յօրինուածք է, որի հիւսիսային կողմը 19-րդ դարում կառուցուած եւ 1962 թ. վերանորոգուած միայարկ հիւանդանոցային շէնքն է: Այն ռելիեֆով բակից բարձր է 2.7 մ չափով: Կառոյցը ընդհանուր չափերով 54x54 մ է: Բակը շուրջ 26x26 մ տարածք է, որի արեւմտեան եւ հարաւային կողմերով անց-



Գարեգին Ա կրթական կենտրոնի համակառուցը

նում է 3 մ լայնութեամբ երկյարկ կամարասրահը, որն առաստաղում թաղակապ է: Հին շէնքի առջեւում եւս անցկացուել է 3 մ լայնութեամբ հովանի, որը կազմում է երկրորդ յարկի կամարասրահի անմիջական շարունակութիւնը: Արեւելեան թեւը կամարասրահ չունի, այն միասնական ծաւալով երկյարկ ուսումնական ու վարչական տարածք է, որն իր շարունակութիւնն ունի նաեւ հարաւային կողմի առաջին յարկում: Տուեալ տարածքում կան 6 լսարաններ, 3 վարչական սենեակ, դահլիճ, թէյարան, տնտեսական մաս: Շէնքի բակի այս հատուածը երկու յարկով էլ սպակեպատ է: Շէնքի մնացեալ տարածքում ընդգրկուած են 30 մէկսենեականոց եւ 8 երկուսենեականոց բնակարաններ, որոնք տեղաբաշխուած են խմբաւորուած կարգով: Իւրաքանչիւր խմբում ընդգրկուած են 4 բնակարան եւ մուտքային սպասասրահ:

Շէնքն իր յօրինուածքով աստուածաբանական դպրոցի ընդունուած լուծում է, անկիւնային մասերում (բացի հիւսիսարեւմտեանից) եռայարկ աշտարակներ են, որոնք ճակատներում լուծուած են երեքնուկատիպ դասաւորութեամբ բացուածքներով:

Արեւելեան ճակատի կենտրոնական մասում երկյարկ շքամուտքն է, նրա երկու կողմերում երկյարկ դասաւորուած են 6-ական լուսամուտ: Դէպի բակը տանող աղեղնաձեւ բացուածքով մի անցուղի գտնուած է նախորդի հիւսիսային կողմում եղած աշտարակի ստորին յարկում: Շէնքի հարաւային ճակատին կայ ուղղանկիւն բացուածքով երկու մուտք, մէկը՝ կենտրոնական հատուածում, իսկ միւսը՝ հարաւարեւմտեան աստիճանավանդակի յարակցութեամբ: Մնացեալ բացուածքները զոյգ լուսամուտների շարք են, որոնք վերեւից ունեն աղեղնաձեւ երեսկալներ: Գարեգին Ա կրթական կենտրոնը ռադիկալ էկլեկտիզմի եւ որոշ հատուածներում մոդեռնիստական լուծումներով համադրուած ամբողջութիւն է:

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՌՈՅՑԸ ԿԱՄ ՎԱՆԱԿԱՆ ԿԱՑԱՐԱՆՆԵՐԸ

Միաբանական կացարանների շէնքը ռացիոնալ եւ վարպետ ըմբռնողութեամբ կատարուած յաւելում է Մայր Աթոռի ընդհանուր կառուցուածքում: Այն ոչ միայն միառճութեամբ լրացնում է Մայր Աթոռի գլխաւոր յատակագիծը, այլ նաեւ ծաւալատարածական միաշնչութեամբ է արարուած միաբանական, Ղազարապատի, Հին Վեհարանի ու այլ շէնքերի հետ, որոնք ձգուում են Մայր Տաճարի բակի հարաւային եւ արեւմտեան կողմերով: Միաբանական կացարանների յաւելմամբ, Մայր Տաճարի հարաւային կառուցապատումը վերածուեց չորս բակերով կազմուած համակառոյցի, որը տարբեր կողմերում ունի զանազան թաղակապ անցումներ: Կացարանները իրար են կապուել բակերի պարագծով ձգուող 3 մ լայնութեամբ երկար միջանցքներով: Կացարանների կիսանկողային յարկերը յատկացուել են սեղանատան եւ այլ օժանդակ տարածքների համար: Միաբանական կացարանները յատակագծում հինգ նմանատիպ ուղղանկիւն՝ 12x 36 մ չափերի շէնքեր են, որոնք անկիւնային հատուածներում համապասխան լուծումով միացուել են իրար: Կացարանների հարաւային ճակատի երկարութիւնը 150 մ է, իսկ կողային իւրաքանչիւր մասում՝ շուրջ 50 մ: Ամէն մի մասնաշէնք լուծուած է սիմետրիկ:

Բակի կողմից կենտրոնական տեղադրութեամբ մուտքի առջեւ աստիճանավանդակն է, որի երկու կողմերում երկարող 2 մ լայնութեամբ միջանցքները յարկը բաժանում են արտաքին՝ 6 մ լայնութեամբ երկու սենեականոց բնակարանների: Շէնքի անկիւնային հատուածներում, երկու յարկերում էլ կան ընդունարաններ: Շէնքը առհասարակ երկաթբետոնէ կարկաս է, որ արտաքինից երեսպատուել է կարմիր քարով: Յատակը մարմարակերտ է: Բնակարանները յարմարաւէտ են եւ լաւ կահաւորուած: Շէնքը ամբողջութեամբ լուծուել է հարթ տանիքով: Շէնքի արտայայտչականութեանը բնորոշ է երկրաչափական լակոնիկութիւնը: Այն տարածական մետրիկ բաժանումներով ստեղծուած զուսպ կերպար ունի:



Գարեգին Ա կրթական կենտրոնի համակառույցը



Գարեգին Ա կրթական կենտրոնի համակառույցը

ՆՈՐ ԴԻՒԱՆԱՏԱՆ ԶԵՆՔԸ

Դիւանատան շէնքը կառուցուել է 2005-2006 թթ., ճարտարապետներն են՝ Ն. Աւագեանը եւ Ա. Փափազեանը: Մեկենասն է նիւեօրքահայ յայտնի բարերար Նազար Նազարեանն ու ընտանիքը: Շէնքը տեղադրուած է Վեհարանի հիւսիսարեւմտեան կողմում՝ որպէս նրա վարչական մաս: Այն Վեհարանի եւ Ալէք ու Մարի Մանուկեան Գանձատան շէնքերի հետ կազմում է Վեհարանի բակի արեւմտեան պարագիծը՝ անսամբլային համահնչութեան մէջ լինելով նրանց հետ: Վեհարանի բակի հիւսիս-հարաւ առանցքային անցուղու հիւսիսային վերջաւորութեան վրայ սալայատակուած ճանապարհը արեւմտեան կողմով մօտենում է Դիւանատան առաջնամասում եղած քառասին թաղակապ մուտքին: Կառոյցը երկյարկ է, ունի նկուղային յարկ եւ ձեղնայարկ: Շէնքի երկարութիւնը 46.6 մ է, լայնութիւնը՝ 22.4 մ, երկու յարկերի բարձրութիւնը միասնաբար կազմում է 11 մ: Շէնքի ծաւալատարածական-յատակագծային լուծումը դասական սխեմայով է՝ կենտրոնական եւ կողային զուգահեռ առանցքներով դասաւորուած սեկցիաներ, որոնք իրար են միացուել փոխողղահայեաց առանցքի երկարութեամբ ձգուող միջանցքի երկու կողմերում տեղակայուած սենեակներով:

Արեւելեան եւ արեւմտեան ճակատների կենտրոնական հատուածն ու կողային ճակատները վերին մասում լուծուած են սիմետրիկ ճակտօններով: Առաջին յարկում կենտրոնական սեկցիան կազմուած է նախասրահից եւ եռամարչ գրանիտեայ աստիճանավանդակից: Դրանց միջեւ երկարող 2.8 մ լայնութեամբ միջանցքի երկու կողմերում լուսաւոր գրասենեակներ են: Շէնքի արեւմտեան կէսի կողային սեկցիաները առաջնայինների նկատմամբ շեղուած են դէպի ներս, դրանցում ընդգրկուած են երկրորդական աստիճանավանդակներն ու սանհանգոյցները, ինչպէս նաեւ՝ հարաւային կողմում մէկ վերելակ: Երկրորդ յարկը, կրկնելով ներկայացուած յօրինուածքը, նախասրահի եւ մուտքային հանգոյցի վրայ լուծուած է որպէս ընդունարան-ժողովասենեակ: Զեղնայարկն ու տանիքը ունեն համապատասխան լանջաւոր

դասական լուծում: Նկուղային յարկը յատկացուած է պահեստների, արխիւնների եւ ինժեներական սարքաւորումների համար, ընդ որում, նկուղի հարաւային կողմում կայ մի սրահ եւ ղէպի Վեհարան տանող գետնուղի:

Դիւանատան արեւելեան եւ արեւմտեան ճակատները, յօրինուած-քային նոյն տեկտօնիկան եւ կերպարը ունենալով, առաջադրում են երկու մակարդակների վրայ մետրական դասաւորութեամբ կամարա-կապ բացուածքների տարբեր համադրութիւններ: Ընդ որում, կենտրո-նական սեկցիայի սիմետրիայի առանցքի վրայ գտնուող բացուածքները լայնութեամբ ընդգծուած են եւ արտաքին պարագծով մէկ անգամ եւս կամարակալուած են երկյարկ քիւլային գօտիով: Ծակատների ու-րուագծային, հարթութեան մշակման եւ այլ արտայայտչամիջոցները հետեւում են հայկական միջնադարեան ճարտարապետութեան մոտիւ-ներին: Շէնքը ամբողջութեամբ երեսպատուած է Արմաւիրի կարմիր տուֆով: Շէնքի ստորին երեք տողերը շարուած են կապոյտ բազալ-տից: Շէնքը կառուցուած է շինարարական բժախնդրութեամբ:

ՎԱՉԷ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՌՅՅՈՒ

Վաղուց անհրաժեշտութիւն կար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարած-քում կառուցել ժամանակակից պահանջներին համապատասխանող գրադարան-մատենադարան: Մայր Աթոռի պատմական մատենադա-րանի ժառանգութիւնը խորհրդային տարիներին տեղափոխուել է Երեւան, որի հիման վրայ ստեղծուել է Ս. Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերի ուսումնասիրութեան ինստիտուտը: Դարասկզբին՝ 1910 թ. ճարտարապետ Զոհրաբեանի նախագծով Ս. Էջմիածնում կա-ռուցուած մատենադարանի շէնքը ծառայել է տարբեր նպատակների: Սակայն հարիւրաւոր տարիների ընթացքում հաւաքուած ձեռագիր եւ տպագիր գրադարանային հարստութիւնը առաջնահերթ էր դարձնում նոր մատենադարանի կառուցումը, որը անյապաղ ձեռնարկեց Գարե-գին Բ Կաթողիկոսը:



Տեսարաններ միաբանական համակառուցից



Տեսարաններ միաբանական համակառուցից



Տեսարաններ Նոր Դիւանատան շէնքից

Նոր մատենադարանի կառուցման մեկենասն է լոնդոնաբնակ յայտնի բարերար Վաչէ Մանուկեանը: Ճարտարապետն է Արտակ Ղուկեանը: Նախատեսուած է շէնքի կառուցումը աւարտել 2011 թ.: Նոր մատենադարանը տեղադրուած է երբեմնի աստղադիտարանի շէնքի տեղում՝ Բաց խորանի հրապարակի հարաւային կողմում: Այն մտայղացմամբ եւ կերպարով յօրինուածքային անմիջական կապի մէջ է շրջակայ շէնքերի հետ:

Համակառոյցը երկու ծաւալային ակցենտների միջեւ ձգուող կամարակապ յօրինուածք է: Յօրինուածքի կենտրոնը հինգ երկար աստիճաններով կազմուած պատուանդանի վրայ բարձրացած կամարասրահն ու դրա առջեւի հրապարակն է, որն ընդգրկում է ճեմուղիներով համադրուած ջրային ու կանաչապատ մակերեսներ: Հիերարխիան շէնքի արեւմտեան եւ արեւելեան վերջաւորութիւններում եղած երդիկաւոր սրահներն են: Շէնքի առանցքային համակարգը միահիւսում է արեւելք-արեւմուտք ուղղուածութեամբ երկարաւուն կամարակապ ծաւալն ու նրան փոխուղղահայեաց մուտքային ու ընթերցասրահային թեւերը:

Նոր մատենադարանի յատակագծային լուծումը անկիւնաձեւ դասաւորութիւն ունի: Երկար կողմը արեւելք-արեւմուտք ուղղուածութեամբ է, իսկ կարճը՝ հիւսիս-հարաւ: Մատենադարանի հիմնական մուտքը հիւսիս-արեւմտեան կողմում է: Մէկ այլ՝ երկրորդական մուտք տեղաբաշխուած է շէնքի արեւելեան նեղ ճակատի կողմում: Այստեղից ոչ հեռու՝ հիւսիսային ճակատի արեւելեան վերջաւորութեան վրայ է նկուղային՝ գրապահոցների յատուկ մուտքը: Ամէն մի յարկ սիմետրիայի առանցքով անցնող միջանցքով բաժանուած է հարաւային եւ հիւսիսային սենեակաշարքերի, որոնց սկզբում եւ վերջում դահլիճների խմբերն են, ինչպէս նաեւ նրանց յարակից աստիճանավանդակներն ու վերելակները: Համակառոյցն իր տեսադաշտով մի կողմից Ս. Գայիանէ տաճարի ուղղութեամբ բացուած է դէպի Արարատ լեռան համայնապատկերը, իսկ միւսով՝ Բաց խորանի պողոտան եւ Գէորգեան ճեմարանը: Շէնքը երկյարկ է եւ ունի նկուղային ենթամաս:



Նկուղային յարկը օգտագործելի է արեւելեան կէսի սահմաններում, միւս կողմում այն դեռեւս չի իրացուել: Նկուղում տեղադրուած են օժանդակ տարածքները: Առաջին յարկը կազմուած է մուտքային սրահից, նրա արեւմտեան կողմում տեղաբաշխուած դահլիճից եւ դէպի արեւելք երկարող միջանցքի երկու կողմերում դասաւորուած գրադարանային մասնագիտացուած սենեակներից, որոնք աւարտուում են գլխաւոր ընթերցասրահներով: Շէնքը ունի արտաքին եւ ներքին միջանցքներ: Արտաքին միջանցքը կամարասրահի ետեւով անցնող երկ-յարկ բարձրութեամբ երկար արահետ է, որն ի տարբերութիւն ներքին միջանցքների, դրսից կապ է հաստատում մուտքային եւ ընթերցողական դահլիճների խմբերի միջեւ:

Մատենադարանի նախասրահը հանդիսաւոր եռաշարք աստիճանավանդակ է: Սրահի կենտրոնում 4 սիւներով լուսաւոր բարձր տարածութիւն է՝ լայնութիւնը 8.4 մ է, իսկ խորութիւնը կամ հիւսիս-հարաւ ուղղութեամբ չափը՝ 14 մ:

Կոնֆերանսի 120 տեղանոց դահլիճը, ըստ էութեան, բաղկացած է երկու յարակից մասերից՝ դահլիճից եւ կողային երկյարկ օժանդակ կամարակապ սրահից: Դահլիճը միասնական երկյարկ բարձրութեամբ լուսաւոր թաղակապ սրահ է, որը շուրջ 9 մ թռիչքով եւ 16 մ խորութեամբ կրկնում է նախասրահի համաչափութիւնը եւ վերջում ունի 7.9x 3.5 մ չափերով պարզագոյն բեմ: Փաստօրէն, այն 2.8 մ չափով դուրս է ցցուած շէնքի հարաւային ճակատից: Կողային օժանդակ սրահները կամարակապ բացւում են դէպի դահլիճը, որոնց սիւնային յենարանները միաժամանակ դահլիճի թաղակապը կրող մոյթերն են: Մուտքային սրահից արեւելք ընթացող միջանցքի լայնութիւնը 2.4 մ է, սենեակների խորութիւնը՝ 5.4 մ: Սենեակների արեւելեան վերջաւորութեան հարաւային կէսում տեղաբաշխուած է գրքերի սպասարկման մասը, որ համապատասխանաբար ունի բեռնատար հարթակ: Մատենադարանի արեւելեան թեւը վերեւում նշուած սենեակների հետ կապւում է աստիճանավանդակի առջեւով անցնող միջանցքով, որտեղ առաջին եւ երկրորդ յարկերում տեղադրուած են խաչաձեւ դահլիճներ: Դրա առաջին յարկում ընթերցասրահներ են, իսկ երկրորդում՝ հե-

տաքրքիր ներքին յարդարանքով երզիկաւոր ցուցասրահներ: Հարաւային խաչաձեւ դահլիճները 10.2x 14.4 մ չափերով են, իսկ հիւսիսայինները՝ 18.5x 11.10 մ: Առաջին կամ հարաւային խաչաձեւ սրահները երկու յարկի մակարդակով անմիջապէս բացւում են ներքին միջանցքի արեւելեան վերջաւորութեան վրայ: Դրանց խաչաթեւերը արեւելք-արեւմուտք ուղղուածութիւն ունեն: Խաչաթեւերի արեւմտեան կողմի անմիջական շարունակութիւնն են կազմում ներքին միջանցքի հարաւային սենեակները, որոնք երկրորդ յարկում տուեալ ընթերցասրահի բաղկացուցիչ մասն են կազմում: Երկրորդ կամ հիւսիսային խաչաձեւ սրահները առաջադրում են մէկ այլ դասաւորութիւն: Այստեղ արեւելեան կողմում եղած կենտրոնական 4 սիւներ իրենց վրայ են կրում կենտրոնական քառակուսին, որը երկրորդ յարկում պսակուած է լուսաւոր երզիկով: Խաչաձեւ դահլիճի թեւերը հիւսիս-հարաւ ուղղուածութեամբ են եւ իրենց հարաւային շարունակութեան վրայ ունեն երկրորդական նախասրահ: Սա արեւմտեան կողմից անմիջապէս բացւում է դէպի վերը նշուած արտաքին կամարասրահը, իսկ արեւելեան կողմում վերջաւորում է աստիճանավանդակով:

Վաչէ եւ Թամար Մանուկեան մատենադարանը ճակատային յօրինուածքի համանուագ է: Այն արտակարգ զգացական տակտով իրականացուած մակերեսների համադրութիւն ունի: Հիւսիսային եւ հարաւային ճակատների ենթատեքստերը տարբերուելով՝ իրար հետ կերպարային ներդաշնակութեան մէջ են: Հիւսիսային ճակատի ենթատեքստը կամարասրահային մետրական շարքն է, որը արեւելեան եւ արեւմտեան կողմերից ունի յօրինուածքային նուրբ մասնահատումներով իրականացուած սկիզբ եւ աւարտ: Դրանցից մուտքային սրահի ճակատային հատուածը ուշադրաւ է խաչելութեան քանդակագործ մշակումով, մինչդեռ ընթերցասրահի եւ ցուցասրահի ճակատային առանցքը կազմուած է ապակեպատ ութանիստ երզիկի տակ սիմետրիկ դասաւորուած եռակի լուսամուտներով ու կողային որմնախորշերով: Շէնքի ճակատային լուծումներում չափազանց շահեկան օգտագործուել է որմնախորշը, որը սիմետրիայի առանցքով ունի զարդաքանդակային միջամտութիւններ: Տուեալ դետալի տարբերակային կրկնու-



Վաչէ Է. Թամար Մանուկեան մատենադարանի
գլխավոր ճակատը և յատակագիծը



Տեսարաններ Վաչէ եւ Թամար Մանուկեան մատենադարանից



Հատուած Վաչէ եւ Թամար Մանուկեան մատենադարանի շքամուտքից



Տեսարան Վաչէ եւ Թամար Մանուկեան մատենադարանից

Թեամբ մշակուել են շէնքի հարաւային ճակատով անցնող որմնախորշերը: Մատենադարանի ճարտարապետութիւնը ռճականօրէն պատմական արտայայտչապաշտութիւն է կամ ազգային ժառանգորդութեամբ բնութագրուող ռոմանտիզմ: Առանձնապէս յաջողուած պէտք է համարել շէնքի բացուածքների, դեկորատիւ տարրերի, այդ թւում եւ զարդամշակումների յօրինուածքային կերտուածքը, որ գեղարուեստականօրէն հարստացնում է համակառոյցի կերպարը:

ՎԵՀԱՐԱՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻԻՆՆԵՐԻ ԴԱՀԼԻՃԸ

Հանդիսութիւնների դահլիճը գտնուում է անմիջապէս Վեհարանի ետեւում, նրանից 19 մ հեռաւորութեան վրայ: Դահլիճի շինարարութիւնը սկսուել է 2011 թ.: Ճարտարապետն է Հրաչեայ Պօղոսեանը, մեկենասը՝ ռուսաստանաբնակ Սամուէլ Կարապետեանը: Վեհարանին կից հանդիսութիւնների դահլիճ կառուցելու նպատակը Մայր Աթոռում միջազգային հանդիպումների ու կրօնական ժողովների կազմակերպումն է: Շէնքը արտաքինից քարէ երեսպատմամբ կարկասային համակարգ է: Այն եռայարկ է՝ կազմուած 3.3 նիշի վրայ գտնուող նկուղային յարկից, 6.6 մ բարձրութեամբ երկրորդ՝ փոքր դահլիճի յարկից, 9 մ բարձրութեամբ երրորդ՝ հիմնական դահլիճի յարկից: Համակառոյցը հիւսիսային եւ հարաւային կողմերից ունի 3 մ բարձրութեամբ եւ 3.75 մ լայնութեամբ հինգ թռիչքանի կամարակապ ուղիներ, որոնք, դուրս գալով Վեհարանի կենտրոնական մասի կողային հատուածներից, ստեղծում են 13.3x 19 մ չափերի գողտրիկ կանաչապատ բակ: Դահլիճային մասնաշէնքը 8x 6 կարկասային ցանցով խորանարդաձեւ ծաւալ է, որը բոլոր կողմերից ունի արտաքին կամարասրահ: Շէնքի միջսիւնային հեռաւորութիւնը 3.75 մ է: Հանդիսութիւնների դահլիճի ընդհանուր չափերը կազմում են՝ հիւսիսից-հարաւ 30 մ, արեւելքից-արեւմուտք 23 մ: Համակառոյցի յօրինուածքի կենտրոնը՝ Վեհարանի եւ դահլիճի միջեւ ծաւալուող բակն է: Հիերարխիան դահլիճների խորանարդաձեւ ծաւալն է, որն աւելի փոքր է քան Վե-



Հատուած Նոր Վեհարանի հանդիսութիւնների դահլիճից

Հարանը: Շէնքի առանցքը Վեհարանի արեւելք-արեւմուտք գլխաւոր առանցքի շարունակութիւնն է:

Վեհարանի հանդիսութիւնների մասնաշէնքը բոլոր յարկերում լուծուել է որպէս սիւնասարահներ, որոնք արեւմտեան վերջաւորութեան վրայ ունեն որպէս ուղղահայեաց կապ ծառայող կողային ծաւալներ՝ իրենց օժանդակ մակերեսներով:


Նկուղային յարկը կազմուած է հիւսիս-հարաւ առանցքով անցնող միջանցքի երկու կողմերում դասաւորուած պահեստներից եւ դրանց ծայրային մասերում տեղադրուած օղափոխութեան սարքաւորումների սենեակներից: Այստեղ կողային ծաւալների արեւմտեան անկիւնները զբաղեցնում են աստիճանավանդակն ու վերելակները, ինչպէս նաեւ տեխնիկական սենեակները: Առաջին յարկում տեղադրուած 6.6 մ բարձրութեամբ դահլիճի կողային ծաւալները երկյարկ են: Դրանք ընդգրկում են աստիճանավանդակն ու վերելակները, անձնակազմի սենեակները, օղափոխութեան, սանհանգոյցի մակերեսները, ինչպէս նաեւ դահլիճի կողմից ունեն նախամուտք: Փոքր դահլիճի միջեւ սիւնային հեռաւորութիւնը արեւելեան կողմում 7.5 մ է, իսկ արեւմտեանում՝ 3.75 մ: Վերին կամ հիմնական դահլիճը յատկացուած է հանդիսաւոր ընդունելութիւնների համար: Այն 50 սմ բարձրութեամբ աստիճանածեւ պատուանդանի վրայ բարձրացուած 34x20 մ տարածութիւն է, որ յետին կողմում ունի եւս 5 աստիճանների չափով բարձրացուած բեմ: Բեմի երկու կողմերում ութանիստ բնով սիւներ են, որոնք իրենց վրայ կրում են վարագոյրի ֆերման: Դահլիճը առաջնային եւ կողային կողմերում ունի երեքական աստղածեւ սիւներ, որոնք հեռանկարային հետաքրքրութիւն են հաղորդում մինչեւ աստիճանները ծաւալուող պարագծային տարածութեանը: Ինչպէս փոքր դահլիճում, այստեղ եւս բեմական մասի երկու կողմերում կան կողային ծաւալներ, որոնք ընդգրկում են աստիճանավանդակն ու վերելակները, ինչպէս նաեւ բեմական գրպաններ յիշեցնող օժանդակ մի քանի սենեակներ: Հանդիսութիւնների մասնաշէնքի տանիքը քառալանջ է, որ նստում է 3 մ բարձրութեամբ փոխադարձաբար խաչուող ֆերմաների վրայ: Շէնքի արտայայտչականութիւնն ու դետալները հայկական վանական

Համալիրների հետեւողութեամբ են: Ինչպէս հաւաստուում է հանդիսութիւնների դահլիճի բացատրագրում՝ շէնքը երեսպատուելու է վեհարանի նոյն տուֆ քարով: Համակառոյցում օգտագործուած սիւները հիմնականում գլանաձեւ են՝ համապատասխան եռամաս խոյակներով եւ պատուանդաններով:

Պատշգամբների ճաղերն ու շէնքի սալայատակները նոյնպէս նախատեսուում են բազալտից: Դահլիճները ներսի կողմից երեսապատուելու են գորշ գոյնի քարով: Աստիճաններն ու աստիճանավանդակը ամբողջութեամբ երեսպատուելու են մարմարով, իսկ բազրիքները իրականացուելու են կաղնու փայտից, որոնք իրար կմիանան ապակեայ շիթերով:

ԷՕՐՆԵԿԵԱՆ ԴՊՐՈՑԸ

Մայր Աթոռի կրթական նշանակութիւնն ու դերը բարձրացնող մի նոր հաստատութիւն է Էօրնեկեան դպրոցը: Փաստօրէն, Ս. Էջմիածնի տարածքում գործում են երեք եւ նախատեսուում է եւս մէկ ուսումնական հաստատութիւն: Գարեգին Բ Կաթողիկոսի նախաձեռնութեամբ վերջին տասնամեակում կեանքի կոչուեցին Էջմիածնի Հայորդեաց տունն ու Էօրնեկեան դպրոցը, որի նոր շէնքը կառուցման ընթացքում է: Էօրնեկեան դպրոցը կապող օղակ է Ս. Գայիանէ վանքի եւ Մայր Աթոռի միջեւ եւ ծառայելու է 500-700 աշակերտով տասներկուամեայ ընդհանուր կրթութեան նպատակին: Դպրոցը գտնուում է Էջմիածնի Հայորդեաց տան յարակից տարածքում, Իսի-լե-Մուլինո փողոցի առանցքին զուգահեռ: Այն տաք անցումով կապուել է Հայորդեաց տան հանդիսութիւնների դահլիճի եւ մարզասրահի հետ: Էօրնեկեան դպրոցը բաղկացած է նախասրահի երկու կողմերում տեղաբաշխուած երեք մասնաշէնքերից, որոնք յարկայնութեամբ իրարից տարբեր են: Նախասրահի մուտքերը հիւսիսային եւ հարաւային կողմերից են: Մուտքային դահլիճը խաչաձեւ է՝ կենտրոնում երկու սիւներով, տարածքի հիւսիսային կողմի երկու անկիւններում տեղադրուած են



Եօրնեկեան դպրոցի նախագիծը

աստիճանավանդակները, իսկ հարաւային կողմում՝ պահակասենեակները: Նախասրահի մասնաշէնքը եռայարկ է, ընդ որում, նրա արեւելեան եւ արեւմտեան կողմերի կենտրոններով անցնող 3 մ լայնութեամբ միջանցքները տանում են դէպի լսարանային մասնաշէնքերը: Արեւելեան կողմի ծայրագոյն մասնաշէնքը միայարկ է: Այն 21 x 21 մ չափերով քառակուսի տարածք է, որը միջանցքից հիւսիս ունի 6 x 6 մ չափերի ռիդիէացիոն սրահ: Վերջինիս շուրջ տեղաբաշխուել են 6 դասարաններ, սանհանգոյց եւ այլ սենեակներ: Յաջորդ մասնաշէնքը երկյարկ է: Այն 15 x 34.5 մ չափերով կառույց է, որը միջանցքային յօրինուածք ունի՝ համապատասխան 7 դասարաններով:

Երրորդ մասնաշէնքը 36 x 19.4 մ չափերով փոխուղղահայեաց տեղադրութեամբ գտնւում է նախասրահի արեւելեան կողմում: Այն եռայարկ է եւ նոյնպէս լուծուած է միջանցքի երկու կողմերում դասաւորուած դասարաններով: Մասնաշէնքի երրորդ յարկում հանդիսութիւնների դահլիճն ու դպրոցական գրադարանն են: Դպրոցի ճարտարապետական արտայայտչամիջոցները միջինացնում են Գարեգին Ա կրթական կենտրոնի եւ Հայորդեաց տան առանձնայատկութիւնները:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՌՈՅՑԸ ԿԱՄ ԱԻՏՕՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ, ՊԱՅԵՍՏՆԵՐԻ ԵՒ ՄՈՄԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ

Գտնւում է միաբանական կացարանների հարաւային կողմում՝ առանձին հողակտորի վրայ, նախկին հիւանդանոցից կամ Գարեգին Ա գիտական կենտրոնից արեւելք: Շէնքի ճարտարապետն է Անահիտ Թարխանեանը, կառուցուել է 2004 թ.: Կառույցը 72 x 79 մ չափերով միայարկ, երկբակ յօրինուածք է, ներքին բարձրութիւնը 3.9 մ է, արտաքին բարձրութիւնը մինչեւ տանիքի գագաթը՝ 6 մ: Համակառույցը, մէկ ամբողջութիւն լինելով, գործնականօրէն գօտեւորուած է երկու բակերի շուրջ: Արեւմտեան 11 x 34.8 մ չափերով բակը արտադրական եւ պահեստների նշանակութեան է, իսկ արեւելեան 13 x 42 մ չափերով բակը՝

աւտօտնտեսութեան համար: Երկու բակերի շուրջ 2 մ լայնութեամբ պտտուող միջանցքներ են: Արեւմտեան բակի 7.5 մ լայնութեամբ մուտքերը տեղաբաշխուած են կառոյցի արեւմտեան կողմի հիւսիսային եւ հարաւային վերջաւորութիւններում: Նոյնը սիմետրիկ դասաւորութեամբ կրկնուել է արեւելեան բակի արեւելեան կողմի վրայ:

Արեւմտեան բակի շուրջ հիւսիսից-հարաւ տեղաբաշխուել են հետեւեալ ենթատարածքները՝ սննդի, բարեգործական ապրանքների, եկեղեցական իրերի եւ գործուածքեղէնի պահեստները, ինչպէս նաեւ՝ դերձակատունը: Ընդ որում, վերջին երեքի մուտքերը նախատեսուել են ոչ թէ բակից, այլ հիւսիսային ճակատից: Բակի արեւելեան կողմում յաջորդաբար գտնուում են գրքի, թղթի, շինարարական, տնտեսական, հումքի, պատրաստի արտադրանքի պահեստները: Երկու վերջին պահեստները մետաղի, փայտի ու մոմարտադրութեան արհեստանոցների հետ մէկ ամբողջութիւն են կազմում եւ ունեն առանձնացուած մուտք բակի հարաւ-արեւելեան անկիւնից: Բակի երկու մուտքերի միջեւ վարչական գրասենեակներն են եւ սանհանգոյցը: Արեւելեան բակում ընդգրկուել են աւտոնորոգման, լուացման, պահեստամասերի տարածքներ, ինչպէս նաեւ վարորդների ու անձնակազմի սենեակներ ու 10-ից աւելի աւտօհանգրուաններ: Շէնքի արեւելեան ճակատի ծայրամասերում տեղաբաշխուել են դէպի բակ տանող երկու մուտքեր մեքենաների համար:

Արտադրական կառոյցը տիպաբանական հետաքրքիր լուծում ունի: Նրա արտաքին երեսպատումը կատարուել է կարմիր տուֆով եւ ստորին մասերում կապտաւուն բազալտով: Կառոյցի ծածկի կոնստրուկցիաները մետաղական ֆերմաներ են, որոնք տեղադրուած են առանձին կանգնած սիւների վրայ: Պատերը ինքնակրող են եւ շարուած են միգրիտ շարուածքով: Առաստաղները կախովի են: Շէնքը յօրինուածքային առումով պարզ լուծում ունի, այն ոճականօրէն 20-րդ դարի ռացիոնալիզմ է, պատմականութեան յատկանիշներ ունեցող բացուածքների շրջանակներով, որոնք թելադրուել են յարակից շինութիւնների հետ միատարրութիւն պահելու հանգամանքով:



Հատուածներ Աւտոտնտեսութեան համակարգից

3. ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՅՑՆԵՐԸ

Օրըստօր է Մայր Աթոռի տարածքը օպտիմիզացւում է ե՛լ շէնքերով, ե՛լ միջավայրի տարածական կազմակերպմամբ, ինչու՞մ իր մեծ դերն ունի Գարեգին Բ Կաթողիկոսը: Բազմազբաղ լինելով հանդերձ՝ Վեհափառի Հօր ուշադրութիւնից չի վրիպում Մայր Աթոռի ոչ մի անկիւն: Այս իրողութիւնը յատկապէս նկատելի է Մայր Աթոռի միջավայրի գեղեցկացման հարցերում, որ կատարւում է ըստ անհրաժեշտութեան: Ընդ որում, միջավայրի կազմակերպումը միայն կանաչապատումը եւ ինֆրաստրուկտուրալ հարստացման միջոցառումները չեն, այլ նաեւ՝ քանդակային կոթողների յաւելումը, որը Գարեգին Բ Հայրապետի գահակալութեան շրջանում նշանաւորուեց նախադէպը չունեցած՝ «Լուսաւորչի Աջը» կոթողի կառուցմամբ, Ներսիսեան լճի եւ նրա միջավայրի կազմակերպմամբ, մանկական խաղավայրի ստեղծմամբ եւ այլն:

ՎԱՆՔԱՊԱՏԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՅՐԱՊԱՐԱԿ

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարեշինական քաղաքականութեան մէջ մեծ հնչեղութիւն ունի մատաղ սերնդի դաստիարակութիւնն ու նրանց նկատմամբ հոգածութիւնը, որի վկայութիւնն է Մայր Աթոռի տարածքում մանկական խաղահրապարակի ստեղծումը: Ծրագրի գլխաւոր յատկագծի մշակման ճարտարապետն է Մարիամ Մովսիսեանը: Խաղասարքերի իրականացումը կատարուել է «Նոնգամ» ընկերութեան կողմից: Մայր Աթոռում կառուցուած խաղահրապարակը ուշադրաւ է իր մեծութեամբ եւ անտառապատ գեղատեսիլ վայրով:



Մայր Աթոռի տարածքի ֆանգարանացման տեսարաններ



Տեսարաններ Մայր Աթոռի մանկական խաղավայրից

Այն Ներսիսեան պուրակի բաղկացուցիչ մասն է եւ զբաղեցնում է Վեհարանի բակի արեւմտեան կողմում գտնուող 1300x1500 մ ուղղանկիւն հողատարածքը: Երկու փոխուղղահայեաց հետիոտն ճանապարհներ, իրար հետ հատուելով, տարածքը բաժանում են հիւսիսարեւմտեան եւ հարաւարեւելեան անկիւնագծային դասաւորութեամբ խաղահրապարակների: Ստեղծուած չորս հողատարածքները իրար են միացուել հրապարականման տարածութեան միջոցով, որը միաժամանակ մանկական պարզագոյն բացօթեայ թատրոնն է: Այն արեւմտեան կողմում ունի բեմական մասի նման առաջնամասով վարչական շէնք: Տեղում կազմակերպուած են հետիոտն ճեմուղիներ, սանհանգոյց, բացօթեայ սրճարան: Տարածքը ամբողջապէս ունի մանկական խաղերի համար անհրաժեշտ էլեկտրամատակարարում եւ այլ յարմարութիւններ: Խաղերը խմբակային բնոյթ ունեն, որոնց մոնտաժումը կատարուել է էլեկտրամեխանիկական յատուկ նախագծերով: Առանձնապէս ուշագրաւ է խաղերի տարածական եւ պատմողական մթնոլորտը, բաղկացուցիչ տարրերի մանկական երփներանգութիւնը, առինքնող համաչափութիւնները, սալայատակի եւ կանաչապատ պուրակների փոխդասաւորութիւնը: Իրօք, որ Մայր Աթոռի մանկական խաղերի գօտին միշտ յիշուող հեքիաթների շարք է:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՔՐ ԶԵՒԵՐ

Մայր Աթոռի տարածական կազմակերպումը ի սկզբանէ մտայղացուել է որպէս թանգարան բաց երկնքի տակ, որտեղ ներգրաւուել են բազմաթիւ ճարտարապետական փոքր ձեւեր: Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի գահակալութեան տարիներին իրականացուած նման գործերից են բռնադատուած հոգեւորականների մոնումենտալ կոթողը, որը ներկայացուել է Գէորգեան հոգեւոր ճեմարանի կազմում: Յուշարձաններից առանձնապէս ուշագրաւ են հետեւեալները.

**Ա. ԱԼԷՔ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆՆԵՐԻ ԴԱՄԲԱՐԱՆ-ՅՈՒՇԱԿՈՐՈՂԸ
ՎԵՅԱՐԱՆԻ ԲԱԿՈՒՄ**

Յուշակոթողը գտնուում է Վեհարանի հարաւարեւելեան կողմում եղած կանաչ հողակտորի վրայ: Այն կազմուած է դարչնագոյն քարից իրականացուած ուղղահայեաց կոթողից եւ կապտաւուն, հորիզոնական տեղադրութեամբ պատուանդանից, որը կրում է հետեւեալ արձանագրութիւնը.

ԱԼԷՔ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՅԿԵԱՆՍ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐ ԱԶԳԻՍ ԵՒ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ:

Կոթողը խորհրդանշական բովանդակութիւն ունի: Այն կողային տեղադրութեամբ երկու թագակիր արծուաքանդակների միջեւ պահուող կենաց ծառ-խաչ է, որ բոլոր կողմերից ամրացուած է յաւէրժութեան վարդակներով: Յուշակոթողը 3 մ բարձրութեամբ եւ 2 մ լայնութեամբ ուղղանկիւնաձեւ հարթաքանդակ է: Նախագծուել է ճարտարապետ Արտակ Ղուլեանի կողմից, իրականացումը պատկանում է Հորիզոն-95 ՍՊԸ-ին:

**Բ. ՎԱԶԳԷՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՐՁԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ
ՅԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ**

Երջանկայիշատակ Վազգէն Ա Հայրապետի՝ հետաքրքիր մասշտաբով մտայղացուած քանդակը 2.6 մ բարձրութիւն ունի: Պատուանդանի հետ այն կազմում է 3.35 մ: Քանդակի լայնութիւնը 95 սմ է: Կոթողը մեծարում ու ակնածանք է մեծ Հայրապետին եւ Հայ Եկեղեցուն: Քանդակի պատուիրատուն նշանաւոր քաղաքական գործիչ եւ հայ



Ալէք եւ Մարի Մանուկեանների յուշակոթողը Վեհարանի բակում



Վազգէն Ա Զայարպետի արձանը Մայր Աթոռի հիւսիսային դարպասի մօտ

ժողովրդի մեծ բարեկամ Ռուսաստանի վարչապետի պաշտօնը վարած Նիկոլայ Ռիժկովն է: Քանդակագործը ռուսաստանահայ Ֆ. Ս. Սողոմեանն է, իսկ պատուանդանի հեղինակը՝ Ա. Նազարէթեանը: Քանդակը տեղադրուած է Ս. էջմիածնի յարակից զբօսայգում՝ կանաչապատ տարածութեան մայթամերձ մասում: Գեղեցիկ է պատուանդանի մտայղացումը՝ կազմուած երկու մասերից՝ սալայատակից եւ պատուանդանից:

Վերջինը սալայատակի կենտրոնում տեղադրուած 150 սմ կողմով եւ 45 սմ բարձրութեամբ գրանիտէ խորանարդ է: Սալայատակը ընդամէնը 20 սմ բարձրութիւն ունի, որ անկիւնային հատուածներում 75 սմ քառակուսու չափով իջեցրած է: Այնպէս է ստացուում, որ պատուանդանը 3 մ կողմով քառակուսի է՝ կենտրոնական մասը խաչաձեւ կերտուածքով: Պատուանդանի հիւսիս եւ հարաւարեւելեան քառակուսիների վրայ հայերէն եւ ռուսերէն լեզուներով փորագրուած է.

ՎԱԶԳԷՆ ԱՌԱՋԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄԻՆ
ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐՈՎ:

Գ. ԱՅԼ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆԵՐ.

«ԼՈՒՍԱԻՈՐՉԻ ԱՋԸ» ԿՈԹՈՂԸ

Գարեգին Բ Վեհափառի օրօք իրականացուած աննախադէպ կոթող է «Լուսաւորչի Աջը»: Չափազանց զուսպ պատուանդանով եւ ձեւերով կոթողը տեղադրուած է Երեւան-Վաղարշապատ մայրուղու ճամփաբաժանում, որը մի կողմից ընթանում է դէպի Արմաւիր, իսկ միւսով՝ դէպի Ս. Հռիփսիմէ տաճար եւ վանքամերձ Կոմիտասի հրապարակ:

Քարի վրայ կերտուած ոլորապտոյտ, նուրբ հիւսուածքի խորքով պատկերազարդ ներկայացուել է հայոց պատմութեան մէջ քրիստոնէութեան մուտքի դերը, նրա բարերար եւ դարակերտ նշանակութիւնը: Քանդակի հեղինակն է անուանի նկարիչ Յակոբ Յակոբեանը:

«Լուսաւորչի Աջը» կանոնաւոր ձեւի յաջորդական ծաւալներով համադրուած պատուանդանով, համաչափութիւնների մի երաժշտութիւն է, որ ժամանոց այցելուներին աւետում է մօտալուտ քրիստոնէութեան կենտրոնի՝ Ս. Էջմիածնի մասին: Պարեկեֆային կոմպոզիցիան կազմուած է հայ ժողովրդի համար խորհրդանշական բառերից՝ ՀԱՅՐ ԱՍՏՈՒԱԾ - ՈՐԴԻ ԱՍՏՈՒԱԾ - ՍԲ. ՀՈԳԻ ԱՍՏՈՒԱԾ, Հաւատք-յոյս-սէր, ՆՈՅԵԱՆ Տապան-երկիր Նաիրի-Ուրարտու-Հայաստան եւ այլն: Կոթողը ամբողջութեամբ ճարտարապետութեան, քանդակի եւ նկարչութեան վարպետօրէն կատարուած սինթէզ է: Պատուանդանի հեղինակն է ճարտարապետ Գրիգոր Նալբանդեանը:

* * *

Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալութեան տարիներին Մայր Աթոռ Տաճարային բակ-վեհարան եւ օժանդակ շէնքերով համակառոյցից վերափոխուեց երեք տաճարներով համադրուած հինգ մասնագիտացուած գօտիներով համալիրի, հանգամանք, որը տարածական կազմակերպման նոր որակ ստեղծեց եւ տիպաբանական առումով հարուստ բովանդակութիւն: Եկեղեցական ճարտարապետութիւնը իր տեսակներով երանգաւորուեց ստեղծագործական որոնումներով: Մայր Տաճարի եւ Ս. Գայիանէ եկեղեցու կողքին կառուցուած Ս. Տրդատ Բաց խորանը, Ս. Վարդան եւ Յովհաննէս Մկրտիչ մկրտարանը եւ Ս. Հրեշտակապետաց ուսումնական եւ մեմորիալ եկեղեցին նոր որակ դրսեւորեցին ոչ միայն Մայր Աթոռի տարածքում, այլեւ՝ հայկական ճարտարապետութեան մէջ ընդհանրապէս: Դրանք նոր երանգ հաղորդեցին հայկական ճարտարապետութեան հեղինակութեանը միջազգային ասպարէզում: Կառուցուած հոգեւոր շէնքերը՝ Դիւանատունը, միաբանական կացարանը, Վաչէ եւ Թամար Մանուկեանների անուան մատենադարանը, ստեղծագործաբար շարունակեցին Բաղդասար Արզումանեանի իրականացրած կառոյցների ռճական առանձնայատկութիւնները եւ Մայր Աթոռի տարածքում ստեղծեցին ճարտարապետութեան ինքնատիպ դպրոց: Նշուած շէնքերը ե՛ւ հայկական ազգային տոհմիկ նկարագիր



«Լուսաւորչի Աջ» կոթողը Վաղարշապատ քաղաքի սահմանագլխին

ունեն, ե՛լ արդիական են: Նոյն ձեռով կարելի է բնութագրել Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնութեամբ կառուցուած կամ վերակառուցուած ուսումնական հաստատութիւնների ճարտարապետութիւնը, ինչպիսիք են՝ Գէորգեան ճեմարանի զարգացումը աստուածաբանական համալսարանի, Գարեգին Ա կրթական կենտրոնը, Էօրնեկեան դպրոցը, Հայորդեաց տունը: Նշուածների հետ նաեւ աւտօտնտեսութեան ու պահեստների շէնքը, Փրանսիական ատամնաբուժարանը, ինչպէս նաեւ Գէորգեան ճեմարանի դահլիճների մասնաշէնքը յարկայնութեամբ, մասշտաբով ու ծաւալատարածական ձեւերով միասնական խորք ստեղծեցին եկեղեցական շէնքերի համար: Ինչ վերաբերում է միջավայրի կազմակերպման խնդիրներին, պէտք է ընդգծել, որ տուեալ շրջանում միջավայրի կանաչապատման զարգացումները կատարուեցին միաշունչ եւ Մայր Աթոռի տարածքը վերածեցին թանգարանի բաց երկնքի տակ: Ծարտարապետական փոքր ձեւերը Գարեգին Բ Կաթողիկոսի շինարարական գործունէութեան մէջ նոր մասշտաբ ստացան: Եթէ Ալէք եւ Մարի Մանուկեանների յուշակոթողը շարունակում է նախկինում եղած յուշարձանների ոճական առանձնայատկութիւնները, ապա «Լուսաւորչի Աջը» քանդակային կոթողը ժամանակակից արուեստի եւ քանդակի նորարար լուծում է, Բռնադատուած հոգեւորականների յիշատակը յաւելրժացնող յուշակոթողը միջավայրային ճարտարապետութեան անկրկնելի օրինակ է: Ս. Գրիգոր Լուսաւորչի դարպասը կարելի է համարել տարածական ճարտարապետութեան եւ քանդակի սինթէզի միջազգային լաւագոյն նմուշներից: Մայր Աթոռի տարածքում մանկական խաղահրապարակի հիմնումը Գարեգին Բ Հայրապետի մարդասիրութեան եւ լաւատեսութեան արտայայտութիւնն է:

Գ. ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՀԱՄԱԼԻՐԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶՈՒԳԱՅԵՌՆԵՐՈՎ

Ինչպէս ցոյց տուեցին վերոնշեալ վերլուծութիւնները, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառուցապատման զարգացումը Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան տարիներին կատարուած է նորարար եւ նպատակային ծրագրով: Անկախ Հայաստանի պայմաններում հայութեան համար անհրաժեշտութիւն է կազմակերպուած եւ հզօր կաթողիկոսական կենտրոն ունենալը: Վեհափառ Հայրապետի նախաձեռնութեամբ ելակէտ է ընդունուել կաթողիկոսական կենտրոնի կառուցապատման հզօրացումը նորանոր շէնքերով, որոնցից իւրաքանչիւրն ունի անհրաժեշտ նշանակութիւն՝ հարիւր դարձնելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառուցուածութիւնը նրա համազգային եւ միջազգային նշանակութեան կրօնական կենտրոնի դերին: Ստորեւ կը իտարկուեն Ս. Էջմիածնի եւ միջազգային կրօնական նոյնատիպ կենտրոնների գոլգոհահեռները, այդ թւում՝ Վատիկանի Ս. Պետրոս տաճարի Պապական համալիրը, Մոսկուայի Պատրիարքութեան Ս. Երրորդութեան եւ Ս. Սերգիոս վանական ու Ս. Փրկիչ Մայր Տաճարի համալիրը, Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարքութեան Ս. Գէորգ Մայր տաճարի համալիրը Ֆանարում ու Հալքի սեմինարիան, Անգլիկան Եկեղեցու Լամբէթ պալատն ու Քենթրբերի Մայր տաճարը, Անտիոքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդանիստ համալիրները՝ Դամասկոսեան եւ Սայիդնայա կենտրոններով, Ղպտի Ուղղափառ Պատրիարքութեան համալիրները Կահիրէում եւ այլն:

ՎԱՏԻԿԱՆԻ Ս. ՊԵՏՐՈՍ ՏԱՃԱՐԻ ՊԱՊԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ


Վատիկանը կաթողիկ եկեղեցու պապական նստավայրն է՝ սկսած 1377 թ.: Մինչ այդ այն գտնւում էր Լաթերանում եւ յետոյ 1309-1377 թթ.՝ Աւինեօնում: 1929 թ. փետրուարի 11-ին Վատիկանը յայտարարուեց անկախ քաղաք-պետութիւն: Վատիկանը հիմնադրուել է Ներոն կայսեր օրօք նահատակուած Ս. Պետրոսի նշխարների վրայ, Կոնստանտին կայսեր կողմից կառուցուած բազիլիկայի տեղում: Այսօր Ս. Պետրոսի դամբարանը գտնւում է տաճարի գլխաւոր խորանի

կրիպտորիայում: Պապական Աթոռի Աւինեօնում գտնուելու տարիներին Կոնստանտինեան բազիլիկան մնացել է անխնամ, եւ Յուլիոս Բ Պապը (1503-1513) որոշել է վերակառուցել այն: Նախագիծը յանձնարարուեց Դոնատո Բրամանտէին: Նրա սկսած շէնքը ամբողջացաւ 176 տարուայ ընթացքում, որի կատարելագործմանը մասնակցեցին վերածննդի եւ բարոկկոյի ժամանակաշրջանի լաւագոյն ճարտարապետները՝ Ռաֆայէլը, Բալդասարէ Բերուցցին, Անտոնիօ դա Սանգալօ Կրտսերը, Միքելանջելօն, Կարլօ Մադերնօն, Լա-Պորտան եւ ուրիշներ: Ս. Պետրոս տաճարը ամբողջական համալիր դարձաւ Զիանլոուենզօ Բերնինիի կողմից նախագծուած օվալաձեւ շքեղ հրապարակով, որը պարագծով պարփակուած է երկու կողմերից 19 մ բարձրութեամբ տոսկանական օրդերներով եզերուած հանդիսաւոր ուղիով: Հրապարակն ու եկեղեցին իրար են միանում սեղանաձեւ հրապարակով: 1586 թ. Միքստուս է Պապի գահակալութեան տարիներին հրապարակի կենտրոնում տեղադրուեց մոնումենտալ օբելիսկը, որի ճարտարապետն է Դոմենիկօ Յօնտանան: Օբելիսկը գտնւում է հրապարակի օվալի՝ փոքր սիւների շարքով ընդգծուած շրջանակի կենտրոնում: Նրա երկու կողմերում կան շատրուաններ, աջակողմեանը տեղադրուել է 1613 թ. Կ. Մոդերնոյի, իսկ ձախակողմեանը՝ 1675 թ. Զ. Բերնինիի նախագծերով: Մինչդեռ օվալը կազմող կիսաշրջանների կենտրոններում տեղադրուած շատրուանները իրականացուել են աւելի ուշ՝ Յրանչեսկօ Բորոմինիի նախագծով: Ս. Պետրոսի բազիլիկան եւ նրա շուրջ եղած կառոյցները զբաղեցնում են Վատիկան պարսպապատ քաղաքի արեւելեան կէսը: Վատիկան քաղաքը Հռոմի անմիջական շարունակութիւնն է կազմում: Այն գտնւում է Դեյ Պոպոլօ հրապարակի արեւմտեան կողմով անցնող Տիբեր գետից արեւմուտք, Կաստել Սանտ Անջելօ անուը կրող Ադրիանոսի դամբարանից որոշ հեռաւորութեան վրայ եղած Կոնցիլիազիոնէ փողոցի շարունակութեան վրայ: Վատիկանի համալիրը բաղկացած է չորս ֆունկցիոնալ գօտիներից, որոնց հիմնական առանցքը, յօրինուածքի կենտրոնն ու դոմինանտը կազմում են Ս. Պետրոս տաճարն ու հրապարակը: Տաճարը յարակից շէնքերով զբաղեցնում է 500x 200 մ տարածութիւն: Ս. Պետրոս տաճարի

չուրջ եղած շէնքերից են հիւսիսային կողմում կառուցուած նշանաւոր Սիքստինեան մատուռը, Դամասո ու Պոնտիֆիկալ բակաւոր շէնքերը, ինչպէս նաեւ՝ տաճարի հարաւային հարեւանութեամբ տեղադրուած Սակրեստիան: Նշուած համակառոյցի հետ միաձոյլ է միւս՝ փոխուղղահայեաց առանցքը, որ հիւսիսային կողմում պարփակուած է թանգարանային գօտին, իսկ հարաւային կողմում պապական անձնակազմի օժանդակ կառոյցները: Վերջինի շարունակութիւնը կազմուած է հրապարակից հիւսիս եւ թանգարանային գօտուց արեւելք եղած ենթամասը: Թանգարաններից արեւմուտք պապական նստավայրն է, որը յարակից է Պոնտիֆիկալ պարտէզին, Գիտութիւնների ակադեմիային ու Արուեստի պատկերասրահին: Նշուածներից արեւմուտք՝ Վատիկանեան պարտէզների միջավայրում, ամֆիլադային դասաւորութեամբ հրապարակների շուրջ տեղադրուած են քաղաքի բազմազան՝ վարչական, հասարակական, տրանսպորտային, արտադրական եւ կրօնական շէնքերը:

Թանգարանային գօտին հիւսիս-հարաւ ձգուածութեամբ եւ երեք յաջորդական բակերից կազմուած շուրջ 400x100 մ չափերով համակառոյց է: Հիւսիսային եւ հարաւային բակերը յաջորդաբար Պիզնա եւ Բելուեդեր անունները կրող թանգարաններն են: Նրանց մէջտեղում եղած համեմատաբար փոքր բակը Առաքելական գրադարանն է: Թանգարանների մուտքը գտնուած է համալիրի հիւսիսային կողմում:

Օժանդակ գօտում ընդգրկուած են պապական ոստիկանութեան եւ շուէյցարական պահակների բնակելի տարածքները, Պապի ելքն ու մուտքը կազմակերպող անձնակազմի սենեակները, պապական Ս. Աննա եկեղեցին, աւտօտնտեսութիւնը, Տեւտօնական քօլէջը, հանդիսութիւնների դահլիճը եւ միջոցառումների այլ օժանդակ տարածքները, որոնք համատեղուած են բնակելի եւ պաշտամունքային զանազան շէնքերում: Տարածքում եղած արտադրական շէնքերի մէջ կարելի է նշել բազմազան ռեստաւրացիոն արուեստանոցները, տպարանը, վերանորոգման արուեստանոցները եւ այլն: Միւս շէնքերից են Մադիօ եւ քաղաքացիավարչական մասնաշէնքերը, Եթովպիական սեմինարիան, ռադիօկայանը, երկաթգծի կայարանը, արդարադատութեան պալատը



Վատիկանի Ս. Պետրոս տաճարի Պապական հանձակիրը



Վատիկանի Ս. Պետրոս տաճարի Պապական համալիրը

եւ այլն: Վատիկանի վանական տարածքը շուրջ 10 հա է: Քաղաքի մնացեալ մասը զբաղեցված է պատմական այգիներով, սպասարկման ու օժանդակ կառոյցներով:

ՄՈՍԿՈՒԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈՅ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ
Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ Ս. ՍԵՐԳԻՈՍԻ ՎԱՆԱԿԱՆ ՈՒ
Ս. ՔՐԻՍՏՈՍ ՓՐԿՉԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ



Մոսկուայի Պատրիարքութեան կենտրոնը մեծ հաստատութիւն է, որ կազմուած է հիմնական երեք ենթամասերից՝ Մոսկուայի կենտրոնում կառուցուած Ս. Փրկիչ Մայր տաճարի համակառոյցից, նրանից ոչ հեռու գտնուող Կրեմլեան տաճարային կոմպլեքսից եւ հիմնականում՝ Մոսկուայից դուրս գտնուող Ս. Երրորդութեան վանական համալիրից: Վերջինը Սերգիեւ Պոսադ շրջանի համանուն բնակավայրի մասն է կազմում:

Սերգիեւ Պոսադ բնակավայրը ձեւաւորուել է 14-րդ դարում, որի բնակավայրաստեղծ գործօնը հէնց Ս. Երրորդութեան վանական համալիրն է: Համալիրը խորհրդային տարիներին վերանուանուել է Սերգիեւ (1919 թ.), յետոյ՝ Զագորսկ (1930 թ.): Վանքը, որպէս Ռուս Ուղղափառ Եկեղեցու կենտրոն, «Տրոիցա Սերգիեւա Լավրա» անունով վերականգնուել է 1991 թ.:

Վանական համալիրը տարածւում է Սերգիեւ Պոսադ՝ 111.000 բնակչութիւն ունեցող քաղաքի արեւելեան կողմում, գտնւում է Մոսկուայից 50 կմ հեռաւորութեան վրայ՝ նրա հետ կապուած լինելով երկաթգծով եւ ակտօմայրուղով: Ս. Երրորդութեան վանական համալիրի տեղում սկզբում եղել է 1345 թ. հիմնադրուած մի եկեղեցի: 1355 թ. արդէն նրա շուրջ կառուցուել են մի քանի շէնքեր՝ տարածքը վերածելով վանական համալիրի: Այնուամենայնիւ, վանքի հիմնական ձեւաւորումը կատարուել է 15-րդ դարում, երբ նրա կազմում 1422 թ. կառուցուել է Ս. Երրորդութեան Մայր տաճարը: «Տրոիցա Սերգիեւա Լավրայի» հիմնական վերելքը տեղի է ունենում 16-րդ դարում՝ Իւան

Դ (Իւան Ահեղ) ցարի եւ յետոյ՝ Բորիս Գոդունովի իշխանութեան տարիներին: Այս տարիներին է, որ կատարուել է վանքի եկեղեցական կորիզի կազմաւորումը եւ պարսպապատումը, որը շարունակուելով 17-րդ դարում, աշխարհիկ շինութիւններով կատարելագործուել է 18-րդ դարում՝ Պետրոս Ա կայսեր օրօք: Վանական մի քանի շինութիւններ իրականացուել են նաեւ 19-րդ դարում: Ս. Երրորդութեան համալիրը առաւել կատարելագործուել է յետխորհրդային տարիներին:

Այժմ Ս. Երրորդութեան պատրիարքանիստ վանական համալիրը կազմուած է յօրինուածքի կենտրոն եւ դոմինանտ հանդիսացող եկեղեցական շէնքերով կազմուած կորիզից, նրա շուրջ ծաւալուած հոգեւոր եւ աշխարհիկ շէնքերից, վանական խցերով համադրուած պարսպապատ համակարգից: Եկեղեցական շէնքերը իրենց տարածական արժէքն են ստեղծում ոչ միայն հիմնաւորուած յատկազօային դասաւորութեամբ, այլ նաեւ երփներանգ գմբէթների ուրուագծով: Առանցքային լուծումները մեծ ու փոքր գմբէթների փոխդասաւորութեամբ են: Պարսպապատ տարածքի կենտրոնում տեղադրուած 15-րդ դարի եկեղեցիները վանքի կերպարն ստեղծող ակցենտներն են, թող թէ նրանք ժամանակագրական առումով համալիրի հնագոյն կառոյցները չեն: Խօսքը վերաբերում է Ս. Երրորդութեան տաճարին (1422-1423 թթ.) եւ Ս. Հոգու եկեղեցուն (1476-1477 թթ.): Այս երկու եկեղեցիները վանքի ծաւալատարածական ներդաշնակութեան գլխաւոր տարրերն են, որոնք եղանակաւորել են վանական համալիրի ճարտարապետական յետագայ զարգացումը: 1457 թ. կառուցուած յաջորդ երկու եկեղեցիները՝ Ս. Աստուածածնի Երեւման եւ Ս. Պարասկեւա Պիատնիցան, համալիրի պարիսպներից դուրս են եւ յօրինուածքային օժանդակ տարրեր են: 1559-1585 թթ. կառուցուած Ս. Աստուածածնի Վերափոխման տաճարը հետեւողաբար ամրացնում է Ս. Երրորդութեան եւ Ս. Հոգու եկեղեցիների հիերարխիան: Տուեալ հանգամանքը ստեղծագործաբար շարունակում են 17-18-րդ դարերում կառուցուած միւս եկեղեցիներն ու վանական շէնքերը, այդ թւում՝ վանքի մեծածաւալ սեղանատունը (1686-1692 թթ.), հարաւային դարպասին մերձակայ Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին (1693-1699 թթ.), Սմոլենսկի



Վերելում՝ Համայն Ռուսիոյ Պատրիարքութեան Մոսկովեան հոգեւոր կենտրոնի
Սբ.Փրկիչ տաճարը , ներքեւում՝ Ս. Երրորդութեան եւ Ս. Սերգիոս վանական համալիրի
ընդհանուր տեսքը



Համայն Ռուսիոյ Պատրիարքութեան Ա. Երրորդութեան եւ
 Ա. Սերգիոս վանական համալիրի գլխաւոր յատակագիծը Ջագորսկում

1. Ա. Երրորդութեան տաճար (1422-23 թթ.), 2. Ա. Հոգու եկ. (1476-77 թթ.), 3. Ա. Վերափոխման եկ. (1559-85 թթ.), 4. սեղանատուն (1686-92 թթ.), 5. զանգակատուն (1740-70 թթ.), 6. պարիսպներ (16-18-րդ դդ.), 7. Պիատնիցկայա աշտ. (1640 թ.), 8. Գեղեցիկ աշտ. եւ դարպասները (16-19-րդ դդ.), 9. Վերափոխման դարպասը (17-րդ դ.), վանքի եւ թանգարանի մուտքն է, 10. Ա. Յովհաննէս Սկրտիչ եկ. դարպասը (1639-99 թթ.), 11. Զորացման աշտ. (16-17-րդ դդ.), 12. Բաղերի դարպասը (17-րդ դ.), 13. Ջանգող աշտ. (16-17-րդ դդ.), 14. Ուխտի աշտ. եւ դարպասը (1758-78 թթ.), 15. Սնուլենսկի Ա. Աստուածածին եկ. (1745-53 թթ.), 16. Ատաղծագործի աշտ. (17-րդ դ.), 17. Գինու մառանների աշտ. (1642-1842 թթ.), 18. Գարեջրի աշտ. (16-17-րդ դդ.), 19 եւ 20. Ջրի աշտ. եւ դարպաս (16-17-րդ դդ.), 21. Սոխի աշտ. (16-17-րդ դդ.), 22. Ցարի պալատը (ուշ 17-րդ դ.), 23. Մախկին վանական հիւրատունը, 24. Աստուածածնի Երեւման եկ. (1547 թ.), 25. Պարասկեա Պիատնիցա եկ. (1547 թ.), 26. ախոռներ (1790 թ.), 27. քաղաքացիական շէնք (19-րդ դ.).

Ս. Աստուածածնի եկեղեցին (1740-1753 թթ.), վանական զանգաշտարակը (1740-1770 թթ.):

Ս. Երրորդութեան պատրիարքանիստ վանքի ճարտարապետական անսամբլի ծանրակշիռ մասն է կազմում 16-18-րդ դարերում կառուցուած պաշտպանական համակարգը: Այն կազմուած է եռայարկ կառույցներից, որոնք տարբեր կողմերում ունեն երկյարկ բարձրութեամբ 5 դարպասներ: Աշտարակները թուով 12 են, որոնք ծաւալատարածական լուծումներով իրար չեն կրկնում: Աշտարակները բնակեցուած են: Վանական խցերը գտնուում են վանքի հիւսիսային կողմում:

Վանքի աշխարհիկ շէնքերի թուում են՝ պարսպապատ տարածքի արեւելեան կողմում գտնուող պալատը (1690-ական թուականներ), հիւսիսային կողմում՝ պարիսպներից դուրս կառուցուած ձիերի ախոռները (1790 թ.), հարաւային կողմում գտնուող եւ որպէս հիւրատուն ծառայած վանքի դրսի տունը, աշխարհիկ շինութիւնը (19-րդ դ.), ինչպէս նաեւ՝ հարաւային դարպասից ոչ հեռու գտնուող թանգարանը: Վանքը առհասարակ թանգարանացուած է, մի շարք աշխարհիկ շէնքեր յարմարեցուած են որպէս հոգեւոր հիւրատուն, սեմինարիա: Պատրիարքի նստավայրը գտնուում է պալատի տարածքում: Վանքի արեւելեան, հիւսիսային եւ արեւմտեան կողմով անցնող գետը ոռոգում է շրջակայ անտառապատ գեղեցիկ տարածքը:

Սերգիեւ Լաւրա վանքի շէնքերը կրում են իրենց ժամանակի ոռոսական ճարտարապետութեան կնիքը: Մինչեւ 17-րդ դարի կէսերը կառուցուած շէնքերը ազգային ժառանգորդական բնութագիր ունեն: 17-րդ դարից մինչեւ 19-րդ դարը կառուցուած շէնքերը ոռոսական բարոկկոյի ճարտարապետութեան առանձնայատկութիւններով են: Աւելի ուշ կառուցուած շէնքերը սլաւոնաֆիլ ռացիոնալ կառույցներ են: Վանական համալիրը զբաղեցնում է շուրջ 3 հա տարածութիւն:


Կ. ՊՈԼՍԻ ՅՈՒՆԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Ս. ԳԷՈՐԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԱՄԱԼԻՐԸ ՖԱՆԱՐՈՒՄ

Գտնւում է Ստամբուլի Ֆեներ կամ Ֆանար թաղամասում, առափնեայ տարածքներից ոչ հեռու, միջնադարեան խիտ կառուցապատուած միջավայրում: Կ. Պոլսի յունական Պատրիարքութիւնը այստեղ տեղափոխուել է 1598-1602 թթ. Ս. Առաքելոց եւ Ս. Պամախրիստոս եկեղեցիներ ունեցող կենտրոններից յետոյ, նկատի ունենալով, որ թաղամասը ամբողջապէս բնակեցուած էր յոյներով: Պատրիարքարանի եկեղեցին սկզբում եղել է պարզ, նոյնիսկ անշուք կառոյց, իսկ տեղանքը պարսպապատ փոքր ամրոց, որը յետագայում վերածուել է մենաստանի: Երբ Պատրիարքութիւնը տեղափոխուել է այս տարածք, Ս. Գէորգ եկեղեցու շուրջ աւելացել են մի քանի վանական խցեր, իսկ 1614 թ. ընդարձակուել է նաեւ եկեղեցին: Յաջորդ տարիներին բռնկուած հրդեհի հետեւանքով այրուած եկեղեցու փոխարէն 1716-1726 թթ. կառուցուել է նորը, որ պահպանուել է մինչ օրս: Նոր եկեղեցու եւ վանական համալիրի առջեւ կազմակերպուել է հրապարակ, մոնումենտալացուել է մուտքը, ինչպէս նաեւ կառուցուել է Պատրիարքարանի շէնքը եւ այլն: Սակայն 1738 թ. բռնկուած մէկ այլ հրդեհի պատճառով որոշուել է Պատրիարքութեան կենտրոնի շէնքերը դարձնել քարակերտ: 1797-1798 թթ. վերականգնուել են համալիրի բոլոր կառոյցները: Դրանք 1835-1840 թթ. վերաշինութիւններով ամրացուել, իսկ 1878-1884 թթ. նաեւ արդիականացուել են: 1901-1902 թթ. Պատրիարքարանի կազմում աւելացուել է էօթենալիոն գրադարանը:

Այսպէս՝ 20-րդ դարի սկզբին եւ մինչ օրս Կ. Պոլսի յունական Պատրիարքութեան համալիրը ընդգրկում է 10 շինութիւն եւ մէկ եկեղեցի: Դրանք կառուցապատուած են որպէս մէկ միասնական պարսպապատ համալիր: Տարածքը հիւսիս-արեւմուտք եւ հարաւ-արեւելք երկարաւուն ուղղուածութեամբ, 150x40 մ անկանոն ուղղանկեանը մօտեցող պարագիծ ունի, որն ամբողջութեամբ կազմում է 0.75 հա մակերես:

Որքան էլ համալիրը հիմնադրութեան միասնական յատակագիծ չի ունեցել, այնուամենայնիւ, ներկայիս Պատրիարքարանի ձեւակերտումը շատ նման է Ֆեների բնակելի թաղամասերի կառուցապատմանը: Այն կազմուած է արեւելեան, հարաւային եւ արեւմտեան կողմերում հրապարակաձեւ դասաւորութեամբ տեղադրուած եռայարկ, երկյարկ ու միայարկ շէնքերից, որոնց առջեւում, դէպի հիւսիս գտնուում է բազիլիկ եկեղեցին: Պատրիարքարանի ողջ հիւսիսային կողմով անցնող պարսպի միջին մասերում հրապարակն է եւ հաստատութեան տարբեր մասերը տանող երեք մուտքերը: Կ. Պոլսի Պատրիարքարանի բոլոր շէնքերը բաժանուած են երեք խմբի՝ կենտրոնական եւ հիմնական խումբ, որ բովանդակում է չորս շէնք, արեւելեան խումբ, որ ընդգրկում է եւս չորս շէնք, ինչպէս նաեւ՝ արեւմտեան խումբ, որ կազմուած է երկու շէնքից: Բոլոր շէնքերն էլ տանիքային մասերում քառալանջ են եւ կղմինդրապատ, մի հանգամանք, որ կառուցապատումը դարձնում է միաշունչ, որքան էլ որ շէնքերի ճակատները իրարից տարբերուում են:

Ս. Գէորգ եկեղեցին 34x 15 մ չափերով եռանաւ բազիլիկա է, որ արեւմտեան կողմում ունի կանաչապատ բակ եւ նրան յաջորդող նարտէքս: Այստեղ՝ հիւսիսային կողմում տեղադրուած աստիճանները տանում են դէպի վերնատուն: Աղօթասրահը 7 գոյգ կորնթական սիւներով բաժանուել է 8 սրահների եւ արեւելեան վերջաւորութեան վրայ գտնուող դասի: Եկեղեցին եռախորան է՝ կենտրոնականը լայն, իսկ կողայինները՝ նեղ ու ցածր: Եկեղեցու ծածկը քառալանջ է, այսինքն՝ կենտրոնական նեֆի մասը աւելի բարձր եւ երկլանջ է, իսկ կողայինները՝ միալանջ: Ս. Գէորգի ինտերիերը գունագեղ է, յատկապէս ուշագրաւ է նրա ճոխ յարդարանքով ոսկեգոյն իկոնոստասը: Եկեղեցու արտաքին ծաւալները գուսպ են եւ շրջակայ շէնքերի հետ միաոճ: Կ. Պոլսի Պատրիարքարանի կենտրոնական խմբի հիւսիսից-հարաւ դասաւորուած շէնքերից առաջինը եւ գլխաւորը եռայարկ, 36x 12 մ չափերով Պատրիարքարանն է: Այն իր յօրինուածքով հետեւում է տարածքի ժողովրդական ճարտարապետութեան աւանդոյթներին, այսինքն՝ շէնքի շքեղագոյն մասը վերին յարկն է, որտեղ տեղադրուած



Կ. Պոլսի յունական Պատրիարքութեան Ս. Գեորգ Մայր տաճարի համալիրը
Ֆանարուն եւ Հալքիի սենինարիան



4. Պոլսի յունական Պատրիարքութեան
Ս. Գեորգ Մայր տաճարի համալիրը Ֆանարում:

է Պատրիարքարանի գահադահլիճը կամ Մեծ սինոդը: Ի տարբերութիւն դրան՝ երկրորդ յարկում գրասենեակների հետ գոյութիւն ունի Փոքր սինոդը կամ հանդիպումների դահլիճը: Այս յարկում կան այլ դահլիճներ եւս: Առաջին յարկում տեղադրուել են օժանդակ ծառայութիւնները: Կենտրոնական խմբի յաջորդ շէնքը պրոտոսինցելիան է: Նրա արեւելեան կողմում գտնուող միայարկ ու կենտրոնական տեղադրութեամբ 39x12 մ չափերով երկյարկ շէնքերը կացարանային նշանակութիւն ունեն:

Պատրիարքարանի արեւելեան կողմում եղած շէնքերի խումբը ընդգրկում է «Աշտարակ» անունը կրող եռայարկ կառոյցը, նրա երկու կողմերում գտնուող երկյարկ շէնքերը եւ մի փոքր հարաւ գտնուող այգետնակը: Աշտարակը վերեւից ներքեւ իւրաքանչիւր յարկում բովանդակում է Միրրհոֆիլակիոնը, արխիւներն ու գանձատունը: Յարակից երկյարկ շէնքերում տեղադրուած են խորհուրդների սենեակները, տպարանն ու պահեստները: Պատրիարքարանի արեւմտեան թեւում են «Կոնստանտինեան» անունը կրող պատրիարքական նստավայրը եւ նրանից հիւսիս՝ «Էօթենիոն» անուանուած ազգային գանձատունը:

ՔԵՆՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆ ՈՒ ԼԱՄԲԵԹ ՊԱԼԱՏԸ

Քենթրբերին Միացեալ Թագաւորութեան եկեղեցական հնագոյն հաստատութիւններից է՝ 602 թ. օգոստինեան հիմնադրութեամբ: Արքեպիսկոպոսութիւնը կազմուած է երկու կենտրոններից, եկեղեցական համալիրը գտնուում է Քենթրբերի քաղաքի կենտրոնական հատուածում, որը Լամբէթ պալատով իր մասնաճիւղն ունի Լոնդոնում: Քենթրբերին իր այժմեան կառոյցներով հիմնադրուել է 1070 թ. եւ շարունակաբար կառուցապատուել մինչեւ 1834 թ. մեծ վերաշինութիւնը: Այն տիպիկ ռոմանական հիմնադրութեամբ գոթական տաճարային համալիր է, որ բովանդակում է հիւսիսարեւմտեան կամարակապ բակը՝ կլոեստրը, ողջ հարաւային կողմով անցնող եւ 169 մ երկարութեամբ,

եռակի տրանսեպտով տաճարը: Այն կտրուածքում տրիֆորիումային կառուցուածք ունի: Տաճարի վերջում Ս. Երրորդութիւն մատուռն է: Եռանաւ աղօթասրահին յաջորդում են երգչախմբային մասը, պրեզբիտերն ու խորանը: Վերջինների ստորգետնեայ տարածքը ամբողջութեամբ կրիպտորիա է: Արքեպիսկոպոսութեան բնակելի, վարչական եւ տնտեսական միւս մասնաշէնքերը զբաղեցնում են համալիրի հիւսիսարեւելեան կողմում եղած երեք մասնաշէնքերը, այդ թւում՝ բակի հիւսիսարեւելեան արխիւր եւ նրա հարակային կողմում եղած հանդիպումների «Չեպթր հասուր», ինչպէս նաեւ՝ արխիւի հետ միջանցքով կապուած գրադարանը, նշխարանոցը եւ այլն:

Բացի նշուածները՝ Քենթրբերիի բնակավայրի հին քաղաքի մասում ունի նորակառոյց հիւրանոցային եւ կոնֆերանս դահլիճ ու այլ հանգստի յարմարութիւններ: Քենթրբերիի արքեպիսկոպոսութեան կենտրոնը բլոկացուած յօրինուածքով շուրջ 1 հա տարածութեամբ հաստատութիւն է: Այն հիմնադրուելով միջնադարում՝ շարունակաբար զարգացել է վերածննդի, բարոկկոյի, նորդասականութեան դարերին եւ հասել մինչեւ մեր օրերը:

ԱՆՏԻՈՔԻ ԱՍՈՐԻ ՈՒՂԱՓԱՌ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՃԱՄԱԼԻՐԸ

Անտիոքի Պատրիարքութիւնը գոյութիւն է ունեցել դեռեւս քրիստոնէութեան վաղ շրջանից: Հիմնադիրն է Պետրոս առաքեալը, որ 33 թ. հիմնադրել է Անտիոքի առաջին եկեղեցին: Նիկիայի տիեզերածոզովում, որպէս հեղինակաւոր Աթոռ, Երուսաղէմի հետ ճանաչուեցին Անտիոքը, Ալեքսանդրիան, Հռոմը եւ աւելի ուշ նաեւ՝ Կ. Պոլիսը: 518 թ. ասորական Պատրիարքութիւնը հեռացուելով Անտիոքից՝ անընդհատ տեղափոխուել է մի կենտրոնից միւսը, այդ թւում՝ Ալեքսանդրիա, Միջագետքի զանազան վանքեր: 13-րդ դարում հաստատուելով Մելիտինէի Դէյր էլ Զաֆարան վանքում, այնտեղ մնացել է մինչեւ 1933 թ: Երբ տարածքը անցել է Թուրքիայի տիրապետութեան



Քենթրբերիի Արքեպիսկոպոսութեան տաճարային
համալիրն ու Լոնդոնի Լամբեթ պալատը

տակ, Պատրիարքութիւնը տեղափոխուել է Սիրիայի Հոմա քաղաք եւ 1959 թ. վերջնականապէս հանգրուանել Դամասկոսում: Սկզբում Անտիոքի Պատրիարքարանը գտնուել է Դամասկոսի Բաբ-թումա թաղամասում, իսկ սեմինարիան՝ Լիբանանի տարածքում: 1996 թ. վերջնականապէս որոշում կայացուեց Պատրիարքարանի վանական եւ ուսումնական հաստատութիւնները կառուցապատել Դամասկոսից 25 կմ հիւսիս գտնուող Սեյրիդնայա բնակավայրի մօտ: Փաստօրէն, հին քրիստոնէական հաստատութեան կենտրոնն այսօր նորակառոյց Ս. Եփրեմ վանքն է:


Ս. Եփրեմի համալիրը տեղադրուած է շուրջ 7 հա եռանկիւնաձեւ տարածութեան վրայ, որտեղ Պատրիարքութեան կառոյցները զբաղեցնում են տեղանքի հիւսիսարեւմտեան եւ արեւմտեան պարագծի տարածքները: Մնացեալ մասերը կանաչապատ են: Հաստատութեան պաշտօնական մուտքը գտնուում է եռանկիւնու արեւելեան կողմի կենտրոնական մասում: Դարպասից ներս, ասֆալտապատ ճանապարհը ճիւղաւորուելով՝ մի կողմից ընթանում է դէպի հիւսիսային համալիրը, իսկ միւսով՝ արեւելեան կողմի երկու մասնաշէնքերը: Վանքի տարածքից դուրս կան առանձնացուած այլ համակառոյցներ եւս: Անտիոքի Պատրիարքութեան յօրինուածքի կենտրոնը նշուած երկու խմբերի միջեւ տարածուող կանաչապատ հողակտորն է, որտեղից սկզբնաւորուող ճանապարհները կանխորոշում են համալիրի առանցքային լուծումը: Վանքի դոմինանտը Աստուածաբանական սեմինարիան է՝ շուրջը եղած երեք կառոյցներով:

Շէնքերի հիւսիսային խմբի կազմի մէջ են մտնում՝ կենտրոնում սեմինարիայի շէնքը, արեւելեան կողմում՝ Ս. Պետրոս - Ս. Պօղոս տաճարը, արեւմտեան կողմում՝ կոնֆերանսների եւ հանդիսաւոր միջոցառումների դահլիճը եւ Սեմինարիայից հիւսիս գտնուող «Ագապ» անունը կրող երէց հոգեւորականների մասնաշէնքը:

Աստուածաբանական Սեմինարիայի շէնքը հինգյարկանի է: Առաջին յարկը կիսանկողային է եւ ներառում է սննդի եւ այլ օժանդակ տարածութիւններ: Երկրորդ յարկում ընդգրկուել են չորս տարուայ տեւողութեամբ ուսումնառութեան լսարանները, ուսանողական գրա-



Անտիոքի Ասորի Ուղղափառ Արքեպիսկոպոսութեան
համալիրը Դամասկոսի մերձակայ Սեյիդնայա բնակավայրի մօտ



Անտիոքի Ասորի Ուղղափառ Արքեպիսկոպոսութեան
համալիրի առանձին կառույցներ

դարանը, հանդիպումների դահլիճը, վարչական սենեակները, ընդունարանը, երկու դարմանատներն ու համակարգչային լսարանը: Երրորդ յարկում տեղաբաշխուել են եպիսկոպոսական, քահանաների եւ ժառանգաւորաց կացարանները: Չորրորդ յարկում Ս. Եփրեմ Ասորի՝ 200 տեղով եկեղեցին է: Նրան կից տեղաբաշխուել է պատրիարքական առանձնամասն ու զբաղարանը: Հինգերորդ յարկում տեղակայուած են կացարանները: Մասնաշէնքի ճարտարապետութիւնը եւրոպական ռացիոնալիզմի ոճով է:

Ս. Պետրոս - Ս. Պողոս տաճարը մոդեռնիստական ոճով երկաթբետոնէ շէնք է, որը տեղաւորուած է շուրջ 800 հաւատացեալ: Հետաքրքիր է լուծուած եկեղեցու ծաւալատարածական ձեւը՝ համադրուած 22 մ բարձրութեամբ զանգակատան հետ: Եկեղեցու տակ, համատարած 85 քմ տարածքով պատրիարքական կրիպտներն են, որ ժառանգորդական տարր է Ասորի Ուղղափառ եկեղեցիների յորինուածքային կազմում: Հանդիսութիւնների պատրիարքական մասնաշէնքը առանձին է: Այն մոդեռնիստական ոճով ժամանակակից կառոյց է: Այստեղ դահլիճները տեղադրուած են երկու մակարդակների վրայ: Գլխաւոր դահլիճը 800 տեղով է եւ ունի ժամանակակից սարքաւորումներով օժտուած միջին չափի բեմական մաս: Դահլիճը երկու յարկ բարձրութեամբ է: Առաջին յարկում տեղաբաշխուած են դիտադահլիճային շէնքի բոլոր օժանդակ սենեակները, ինչպէս նաեւ 115 եւ 130 տեղանոց հանդիպումների երկու սրահներ, որոնք տրանսֆորմացուելով կարող են միասնալ իրար:

Չորրորդ՝ «Ագապ» անունը կրող մասնաշէնքը յատկացուած է երէց հոգեւորականներին: Այն կազմուած է երկու շէնքից, որոնք միասնաբար տեղաւորուած են 21 բնակարանատիպ կացարաններ: Համակառոյցը կիսանկուղի հետ հինգ յարկ է: Վերջին յարկում տեղադրուած է 180 տեղանոց Ս. Մատթէոս եկեղեցին: Շէնքի ճարտարապետութիւնը համահունչ է աստուածաբանական մասնաշէնքի հետ: Վերեւում ներկայացուած կառոյցների ոճական նոյն առանձնայատկութիւններն ունեն արեւմտեան թեւի երկու շէնքերը: Դրանցից հիւսիսայինը կառուցուել է 1998 թ.: Այն քրիստոնէական ուսումնառութեան միջազգային

կենտրոն է, իսկ 1990 թ. կառուցուած հարաւային շէնքը կոյսերի անապատ է:

Անտիոքի Պատրիարքութեան կենտրոնը երկմաս է, ունի քաղաքային-գրասենեակային մաս եւ քաղաքից դուրս՝ վանական հաստատութիւն: Յօրինուածքով այն լուծուել է որպէս առանձին մասնաշէնքերից համադրուած համալիր:

ՂՊՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

Հիմնադրուել է 42 թ. Ս. Մարկոսի կողմից Ալեքսանդրիայում: Ղպտի Ուղղափառ Պատրիարքութիւնը հիմնադրուելով Ալեքսանդրիայում՝ արաբական շրջանում՝ 7-րդ դարում տեղափոխուել է Կահիրէ: Պատրիարքութիւնը ներառում է երկու կենտրոններ՝ մէկը Սբ. Մարկոս աւետարանչի Մայր տաճարի համալիրն է, իսկ միւսը քաղաքի երբեմնի պատմական դարպասի վրայ կառուցուած «Կախուած եկեղեցի» անունով յայտնի համակառոյցն է: Մասշտաբներով եւ շէնքերի թուով Ս. Մարկոսի Պատրիարքարանը անհամեմատ մեծ է «Կախուած եկեղեցու» կենտրոնից:

Ս. Մարկոսի Պատրիարքարանի համալիրը, 7.5 հա մակերեսով, գտնուում է Կահիրէի Իսմայիլիա շրջանի խիտ կառուցապատուած միջավայրում: Վայրը, մինչ Պատրիարքութեան կենտրոն դառնալը, 969 թուականից սկսած ղպտիների ազգային գերեզմանատունն էր, որտեղ եղել է նաեւ Անբա Ռուխ անունով մի եկեղեցի: Նոր համալիրը կառուցուել է 1968 թ.: Ճարտարապետն է Միշել Բախրումը: Եկեղեցու հիմքում տեղադրուել են Ս. Մարկոսի՝ Վատիկանի կողմից նուիրաբերուած նշխարները, որոնք 828 թ. Վենետիկ էին տարուել Եգիպտոսից: Ս. Մարկոսը Աֆրիկայի եւ Միջին Արեւելքի մեծագոյն տաճարն է՝ 100x40 մ չափերով: Պատրիարքարանի համալիրը նոյնպէս ընդարձակ է եւ բովանդակում է 10 մեծ կառոյց, որոնք խմբաւորուել են 4 բակերի շուրջ եւ ստեղծում են բաղկացուցիչ շէնքերի երեք խումբ: Վեր-

ջիւններս միասնաբար ձեւաւորում են Պատրիարքարանի մուտքային երկարաւուն հրապարակը: Համալիրի յօրինուածքի կենտրոնը հիւսիսարեւմտեան կողմում եղած մեծ բակն է: Նրա արեւելեան կողմում է համալիրի դոմինանտ Ս. Մարկոս տաճարը: Մեծ բակի՝ հիւսիս-հարաւ եւ արեւելք-արեւմուտք անցնող առանցքները եղանակաւորում են Պատրիարքարանի շէնքերի դասաւորութիւնը: Ս. Մարկոս եկեղեցին արդի ճարտարապետութեան երկաթբետոնէ նմուշ է, որ իր ծաւալային լուծումներով զպտական ճարտարապետութեան առանձնայատկութիւններն ունի, այդ թւում՝ թաղակապ դահլիճ, սֆերիկ գմբէթ, կողային կամարասրահներ, բարձր զանգաշտարակ եւ այլն: Եկեղեցին արտաքուստ եւ ներքուստ խաչաձեւ գմբէթաւոր բազիլիկա է, որը տեղադրուած է հանդիսաւոր աստիճանների խորքում: Այն առաջին յարկի մակարդակով ունի միայարկ օժանդակ կառոյցներ: Մուտքային հրապարակի՝ Ս. Մարկոս եկեղեցուն առընթեր, արեւմտեան կողմում են սեմինարիայի եւ Պատրիարքարանի շէնքերը: Սեմինարիան եռաթեւ յօրինուածք է, որ մուտքային սրահի հիւսիսային թեւի շարունակութեան վրայ ունի շուրջ 600 տեղով դահլիճ, իսկ արեւելեան եւ արեւմտեան թեւերի տարածքներում ընդգրկում է ուսումնական լսարաններ եւ այլ վարչական գրասենեակներ: Նշուած երկու կառոյցներն էլ ռացիոնալիստական են եւ ունեն համապատասխան կանոնաւոր ծաւալատարածական ձեւեր: Պատրիարքարանի արեւմտեան կողմում կառուցուել է ձմեռային ընդարձակ այգի: Սեմինարիայի հիւսիս-արեւմտեան կողմում է ությարկանի կացարանային շէնքը: Այստեղ կազմաւորուած հիւսիսային բակի շուրջ տեղաբաշխուել են աստիճանաւոր հիւրերի եւ տեղի կրօնաւորների կացարանային մասնաշէնքերը եւ մի թանգարան: Ս. Մարկոսի Պատրիարքարանի մեծ բակը յիշեցնում է գոթական տաճարների կլոբստրը եւ կանաչապատմամբ ամենաշքեղն է: Այն գտնուում է տաճարի հիւսիսային կողմում, որի արեւելեան հատուածում տեղակայուած է Պատրիարքի նստավայրը՝ համապատասխան դահլիճներով: Համալիրի տնտեսական, զանազան օժանդակ կառոյցները եւ մատուռները տեղադրուած են գլխաւոր դարպասի արեւելեան կողմում եղած ենթամասում:



Ղպտի Ուղղափառ Պատրիարքութեան համալիրները Կահիրեւում.
վերեւում՝ Սբ. Սարկոս անետարանչի Պատրիարքական կենտրոնի տաճարը,
ներքեւում՝ «Կախուած եկեղեցի» առաջնորդանիստ կենտրոնը

Պատրիարքանիստ երկրորդ կենտրոնը՝ «Կախուած եկեղեցու» համակառոյցը, տեղադրուած է ընդամենը 55x53 մ ուղղանկեան մօտեցող տարածքի վրայ: Այն ճարտարապետութեամբ աւելի ժառանգորդական է, քան Ս. Մարկոս եկեղեցին:

Տարածքը հիմնադրութեամբ Յրդ դարից է: Այն Ալեքսանդրիայի Պատրիարքութեան անմիջական իրաւայաջորդն է: Կենտրոնը 11-րդ դ. տեղափոխուել է Կահիրէ: Անունը սերում է տեղում եղած բաբելոնեան ամրոցից, որի դարպասի վրայ կառուցուել է 26 աստիճաններով բարձրացուած Ս. Աստուածածին եկեղեցին: Համակառոյցը բակաձեւ յօրինուածք ունի, որտեղ եկեղեցին եւ Պատրիարքարանը յարակցութեամբ զբաղեցնում են տարածքի արեւմտեան կողմը: Նրանց շուրջ, բակի միւս կողմերում գոյութիւն ունեն գծային ցածր կառուցապատմամբ զանազան այլ շէնքեր: Տաճարը մուտքային մասում երկաշտարակ լուծումով վաղ քրիստոնէական բազիլիկա է, որ բազմիցս վերակառուցուել է:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մինչև Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալութիւնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառուցապատման պատմութիւնը կարելի է պարբերացնել հինգ ժամանակաշրջանով: Առաջինը՝ Մայր Աթոռի անտիկ շրջանից ժառանգած կառուցապատումն ու Մայր Տաճարի հիմնադիր յօրինուածքն է (ըստ Գրիգոր Լուսաւորչի տեսիլքի), որ պահպանուել է մինչև 5-րդ դար՝ մինչև Հայրապետական Աթոռի տեղափոխութիւնը: Այս շրջանում Մայր Աթոռի համալիրը ունեցել է «տաճարը պարագծային կառուցապատման կենտրոնում» յօրինուածք: Ս. Էջմիածնի կառուցապատման երկրորդ շրջանը ընդգրկում է 5-րդ դարից մինչև 1441 թ., երբ Հայրապետական Աթոռը վերահաստատուեց Վաղարշապատում: Երրորդ ժամանակաշրջանն Ս. Էջմիածնի վերակառուցումն ու պատմական կազմաւորումն է մինչև 20-րդ դարը: Ստացուել է այնպէս, որ 1441 թ. յետոյ տարերայնօրէն կառուցապատուած Վաղարշապատի համար բնակավայրաստեղծ գործօն էր Ս. Էջմիածնի վանքի կորիզը, որն անհրաժեշտաբար պէտք է մեկուսացուէր շրջակայ կառոյցներից: Այս ժամանակաշրջանից սկսած հայոց շինարար կաթողիկոսների գործունէութեան մէջ նկատելի է վաղ միջնադարեան կառուցապատման սխեմայի իմացութեամբ քրիստոնէական ըմբռնումների կիրառութիւնը: 18-րդ դարում իրականացուել է 17-րդ դարի վանական բակի բնագրային վերականգնումը, դրա ընդարձակումն ու նոր պարիսպներով շրջապատումը՝ շնորհիւ Սիմէոն Երեւանցի Կաթողիկոսի ջանքերի: 18-րդ դարում կատարուած ընդարձակմամբ Ս. Էջմիածնի կառուցապատումը, ըստ էութեան, չի իրագործուել շէնքերի տեղափոխութեամբ: Նրա մուտքերը մնացել են նոյն ուղղութիւնների վրայ՝ առանց փոփոխութիւնների: Դէպի արեւմուտք՝ Տրդատայ դարպասի կողմում եղել է վանքի գլխաւոր մուտքը: Դպրանոցն ու Հայրապետարանը մնացել են Տրդատայ դռան հիւսիսային շարունակութեան վրայ, իսկ վանական օժանդակ միւս կառոյցները, այդ թւում՝ մկրտարանն ու սեղանատունը, եղել են հարաւային կողմի շէնքերի կազմում: Նկա-

տելի է, որ Ս. Էջմիածնի կառուցապատումն այս ընթացքում մասշտաբներով մեծացել է եւ աստիճանաբար բարեփոխուել՝ ստանալով հայկական վանական համալիրների յորինուածք: Այսպիսով, 17-րդ դարում Մայր Աթոռի շինարարական վերականգման միտումներն ու ջանքերը սկսուեցին աւերուած համալիրի մաքրման-բարեկարգման աշխատանքներով՝ վերադարձնելով նրան իր հնագոյն՝ «բնագրային» տեսքը: Նորից վերականգնուեց «տաճարը պարագծային կառուցապատման կենտրոնում» յորինուածքային սխեման՝ իր Հայրապետանոցով ու այլ օժանդակ կառույցներով: Մայր Տաճարի յորինուածքը համալրուեց զանգակատնով եւ անկիւնային կանթեղներով: Յօրինուածքային նշուած սխեման, յատկապէս Ղազար Ա Զահեցի Հայրապետի գործունէութեան շնորհիւ, շարունակուեց 18-րդ դարում՝ համալրուելով իր ժամանակին համահունչ նոր կառույցներով: Նոյն ոգով կառուցապատոււմը շարունակուեց 19-րդ դարի առաջին կէսին:

Մայր Աթոռի կառուցապատման զարգացման չորրորդ փուլն ընդգրկում է 19-րդ դարի երկրորդ կէսն ու 20-րդ դարը: 19-րդ դարի երկրորդ կէսին Գէորգ Դ Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսը կատարելագործեց Մայր Աթոռի ժառանգական կորիզը եւ պարիսպներից դուրս՝ արեւելեան կողմում, ստեղծեց ուսումնական բովանդակութեամբ նոր դօտի: Այս ժամանակաշրջանում, ինչպէս համաշխարհային ճարտարապետութեան մէջ, այնպէս եւ Հայաստանում Մայր Տաճարի օրինակով, յուշարձանների պահպանութիւնն ստացաւ գիտական հիմնաւորում: Գէորգ Դ Հայրապետի եւ նրա յաջորդներ Մկրտիչ Խրիմեան, Մատթէոս Բ Իզմիրլեան, Գէորգ Զ Չորէքեան, Վազգէն Ա Պալճեան Կաթողիկոսների գործունէութեամբ նշուած վանական կորիզի շուրջ ստեղծուեց եւս մի դօտի՝ Վեհարանի տարածքը, որը միացնում է Հին եւ Նոր Վեհարանները, վարչական շէնքն ու երկու թանգարանները: Այս ընթացքում վանական բակը, պահպանելով իր բնագիր յորինուածքը, կառուցապատմամբ խտանում եւ ընդգրկում է նոր կառույցներ, ինչպէս կաթողիկոսական գրասենեակները, տպարանն ու հրատարակչութիւնը, Երեմեան խցերը, Գէորգեան հոգեւոր ճեմարանը, աւելի ուշ՝ վանատունը, Գանձատունը, ժառանգաւորաց հանրակացարանը եւ այլն:

Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալութեան տարիները կարելի է բնութագրել Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի կառուցապատման համակարգուած զարգացմամբ: Վազգէն Ա Կաթողիկոսի օրօք օպտիմալ կառուցապատմամբ ամրագրուած Մայր Աթոռի տարածքը Գարեգին Բ Հայրապետի ջանքերով աննախադէպ ընդարձակուեց՝ ի հաշիւ խորհրդային տարիներին օտարուած հատուածների վերադարձի: Վազգէնեան շրջանի ցանկապատը վերացուեց, եւ անցկացուող նոր ցանկապատի համար գոյութիւն ունեցող տարածքը դարձաւ յօրինուածքային կորիզ: Մայր Աթոռը ընդարձակուեց այնքան, որ մի կողմից յարակից դարձաւ Վաղարշապատի Կոմիտասի անուան հրապարակին եւ միւս կողմով մօտեցաւ Ս. Գայիանէ վանքի տարածքին:

Գարեգին Բ Հայրապետի բանիմացութեամբ Մայր Աթոռի տարածքի ընդարձակումը կատարուում է ըմբռնողաբար եւ ստեղծագործաբար՝ ամրագրելով կառուցապատման գոյութիւն ունեցող օրինաչափութիւնը: Ըստ անհրաժեշտութեան՝ յստակօրէն շեշտուեցին Մայր Աթոռի առանցքային ուղղութիւնները՝ Գրիգոր Լուսաւորչի դարպասից դէպի Մայր Տաճար ու Նոր Վեհարան, ինչպէս նաեւ Վազգէնեան դարպասից դէպի Ս. Գայիանէ եկեղեցի: Սահմանուեցին նոր դարպասների տեղերը, տարածքը յստակօրէն բաժանուեց Մայր Տաճարի բակի, վեհարանային, կրթամշակութային, միաբանական եւ տնտեսական գօտիների: Կառուցապատման մէջ յստակեցուեցին ին հետիոտնի եւ մեքենաների շարժման ուղղութիւնները, Ս. Գրիգոր Լուսաւորչի դարպասից դէպի Մայր Տաճար ձեւաւորուեց ուսումնամշակութային բովանդակութեամբ հետիոտն հրապարակ, իսկ արտադրական համակառոյցի ուղղութեամբ ձեւաւորուեց մեքենաների շարժման գօտի եւ հրապարակ: Մայրավանքի ընդհանուր տարածքը մտայղացուեց որպէս բարեկարգ թանգարան բաց երկնքի տակ: Կառուցապատման զարգացումը կատարուում է կոմպլեքսային եղանակով՝ մի կողմից վերականգնում կամ արդիականացում են ժառանգուած բոլոր շէնքերը՝ Մայր Տաճարը, Հին եւ Նոր վեհարանները, Խրիմեան թանգարանը, վարչական շէնքը, Ղազարապատը եւ յարակից շէնքերը, վանատունը, տպարանը, Երեմեան խցերը, հին Մատենադարանը, միւս կողմից Մայր Աթոռի տարածքը օպտիմալացում է նորակառոյց շէնքերով: Բաղդասար Արզումանեանի նախա-

գծերով ստեղծագործաբար իրականացուած շէնքերը՝ Գանձատունն ու Հիւրատունը տրամաբանական ընթացք ստացան՝ աւտօտնտեսութեան համակառոյցի, նոր Դիւանատան, նոր Մատենադարանի, Գարեգին Ա կրթական կենտրոնի, Էօրնեկեան դպրոցի կառուցմամբ: Եթէ նշուածները ազգային երանգ աւելացրեցին, ապա նորակառոյց եկեղեցիները՝ Բաց խորանը, նոր Մկրտարանն ու Ս. Հրեշտակապետաց համալիրը իրենց ճարտարապետութեամբ Մայր Աթոռի նուաճումները ազգայինից բարձրացրեցին միջազգային մակարդակի՝ միանգամայն ճանաչողաբար թարմացնելով գոյութիւն ունեցող ժառանգութիւնը:

Ինչպէս ցոյց տուեց Մայր Աթոռի վերկառուցուած համալիրի ուսումնասիրութիւնը միջազգային զուգահեռներով, կրօնական ակթոռանիստ հաստատութիւնները՝ ունենալով բազմազան յատակագծային-տարածական դրսեւորումներ, շէնքերի բովանդակութեամբ նոյնական են: Աթոռանիստ կենտրոնները սովորաբար կազմուած են զանազան պաշտամունքային, հոգեւոր, մշակութային, ուսումնական, արտադրական շէնքերի համակցութիւնից: Պաշտամունքային շէնքերի կազմում կորիզը Մայր Տաճարն է, որը կարող է ընկերակցել յարակից այլ եկեղեցիների հետ: Ս. Էջմիածնում սկզբում միայն կառուցուել է Մայր Տաճարը, իսկ Գարեգին Բ Հայրապետի գահակալութեան տարիներին այստեղ կառուցուեցին նոր եկեղեցիներ: Մայր Աթոռի հոգեւոր-եկեղեցական եւ վարչական կառոյցների կազմում են Վեհարանը, Դիւանատունը, Ճեմարանը Միջեկեղեցական առաքելութեան մասնաշէնքը, միաբանների կացարանը: Մշակութային շէնքերից առանձնապէս կարեւորում են՝ նոր Մատենադարանը, թանգարանը, հանդիսութիւնների դահլիճը: Արտադրական շէնքերի կազմում են՝ տպարանը, աւտօտնտեսութիւնը, պահեստները, մոմի պատրաստման եւ այլ արտադրամասերը, զանազան վերականգման արուեստանոցները, արհեստանոցները, առողջապահական կառոյցը: Քաղաքացիական ուսումնական հաստատութիւնները միշտ չէ, որ ընդգրկուում են նշուած համալիրներում, սովորաբար դրանք ներգրաւուում են յատուկ ծրագրերով, ինչպէս օրինակ՝ Ս. Էջմիածնի նման ազգային ակթոռանիստ կենտրոնի կազմում: Բոլոր կրօնական կենտրոններն էլ հիմնականում մտայղացուել են բացօթեայ թանգարանի կամ թանգարանային շէնքերով համա-

դրուած գօտիների սկզբունքով: Ժամանակակից պայմաններում աթոռանիստ կենտրոնները հիմնականում երկմաս են: Դրանք ունեն քաղաքային ներկայացուցչական ենթամաս եւ հոգեւոր համալիր: Տուեալ առանձնայատկութիւնը Մայր Աթոռի կազմում աւելացաւ վերջերս՝ երեւանեան կաթողիկոսական նստավայրի կառուցմամբ: Վերոնշեալ փաստագրավերլուծական ուսումնասիրութիւնները ցոյց տուեցին, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նշուած բոլոր շէնքերը, շնորհիւ Գարեգին Բ Հայրապետի գործունէութեան, արտայայտուեցին ամենաընդգրկուն եւ բազմազան բովանդակութեամբ:

Կրօնական աթոռանիստ կենտրոնները, ըստ անհրաժեշտութեան, հանդիպում են փոքր՝ մինչեւ 1 հեկտար, միջին՝ մի քանի հեկտար եւ մեծ՝ 5 հեկտարից աւելի տարածքով: Տուեալ դասակարգման մէջ որոշիչ են նաեւ շէնքերի քանակը, որ փոքրամասշտաբ կենտրոններում ընդգրկում է նուազագոյն երեք ֆունկցիաները՝ տաճարը, վեհարանը եւ սեմինարիան: Միջին մեծութեան կրօնական կենտրոններում շէնքերի քանակը հասնում է մէկ տասնեակի, մինչդեռ մեծ համալիրներում այն հասնում է մինչեւ 2 տասնեակի եւ աւելի: Շէնքերի դասաւորութիւնը օժանդակ եւ եկեղեցական կառոյցների փոխկապակցութեան սկզբունքով է, ընդ որում, հիերարխիան պաշտամունքային շէնքն է, իսկ միւս կառոյցները կազմում են կառուցապատման խորքը կամ ենթատեքստը: Ենթատեքստ եւ պաշտամունքային շէնք փոխառնութիւնը ուսումնասիրուած միջազգային օրինակներում արտայայտուել է բլոկացուած, գծային, հրապարակաձեւ, բակաւոր, բեւեռացուած կամ բազմաբակ դասաւորութեամբ: Նշուածների համար ընդհանուր օրինաչափութիւն են գլխաւոր տաճարը յօրինուածքի կենտրոնում եւ համալիրի պարագծով դասաւորութիւնները: Հայկական համալիրների համար ժառանգորդական է «տաճարը կառուցապատման կենտրոնում» տարբերակը: Ռուսական պատրիարքական կենտրոններում տաճարային կորիզը օրինաչափօրէն շէնքերի խումբ է, մինչդեռ կաթողիկ համայնքի կենտրոնները անհրաժեշտաբար հրապարակաձեւ են: Արդի համալիրներում շատ դէպքերում նշուած օրինաչափութիւնները չեն կիրառուում եւ յօրինուածքը աւելի ազատ բնոյթ է կրում, ինչպէս օրինակ՝ Ղպտինների Ս. Մարկոսի համալիրը բազմաբակ է, Անտիո-

քի Պատրիարքութեան կենտրոնը անկիւնային դասաւորութիւն ունի, ԱՄՆ-ի հայկական Արեւմտեան թեմի կենտրոն՝ Բըրբենկի համալիրը գծային դասաւորութեամբ է եւ այլն:

Կրօնական աթոռանիստ համալիրների ժառանգորդական օրինակներում նկատելի է ճարտարապետական ոճերի բազմազան, բայց ներդաշնակ համակեցութիւնը, ինչպէս Քենթրբերին, Վատիկանը, Ս. Էջմիածինը, Ս. Սերգիեւ Լաւրան եւ այլն: Արեւելեան Ուղղափառ պատրիարքութիւններում նկատելիօրէն ստեղծուեցին միանգամայն նոր կառուցուած համալիրներ՝ Սեյրիզնայայում, Կահիրէի Ս. Մարկոսի համալիրում եւ այլն:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարածքային ընդարձակումը Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալութեան տարիներին կատարուեց եւ կատարում է ստեղծագործաբար: Համալիրի միջավայրային, տիպաբանական հասկացութիւնները օպտիմալացուեցին կատարելաբար: Այն յօրինուածքային առումով դարձաւ կռու եւ օրինաչափ: Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալութեան տարիների կառուցապատման զարգացումները Մայր Աթոռը վերածեցին համաշխարհային մասշտաբներով բնութագրուող համալիրի ե՛լ բովանդակային, ե՛լ գեղազիտական տեսանկիւնով: Ս. Էջմիածնի համալիրը փոքր երկրի հզօր հոգեւոր կենտրոնն է, որով փոքրատարածք Հայոց հայրենիքը եւ աշխարհասփիւռ հայութիւնը օժտուեցին հզօր բաբախող սրտով, որը մարմնաւորուեց որպէս համայն հայութեան կրօնաազգային մեծ կենտրոն: Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կառուցապատման ու ճարտարապետութեան նշանակալի մասշտաբ ունեցող համալիր է, որը խորհրդանշական բովանդակութիւնից վերածում է յանգաւորուած բոհեմի, որի տողերը ոչ միայն պատմական հայ ճարտարապետութեան մանրամասներն են, այլ նաեւ արդի ճարտարապետութեան ծաւալատարածական հետաքրքիր լուծումները: Այն մշակոյթով հզօր հայ ժողովրդի ինքնահաստատումն է՝ զօրացած Գարեգին Բ Շինարար Հայրապետի գործունէութեամբ:

CORPUS INSCRIPTUM

ԼՕՐԻՆԵՐ
Ի ՀԱՅՐԱԲԵՏՈՒԹՅԱՆ
ՏՏ ԳՐԱԳԻՆԻ Ի ԿԱՌԱՐԱԿԱՆՈՒՄԻ
ԼՄԵԼԵՅՆ ՀԱՅՈՑ Ի ԴՈՒՄԻՆ
ՀԱՅԿԱՂԱՅԻՆ ԹԵՎ ՅԻՄԻ
ՏԵՄԻՆ 2001 ԿԱՌԱՐԱՅԻՆ ԹՅՅ
Ի ՊԻՐԵՆ ՅԻՆԱՌՆ ԻՐԲԱՅՆ
ՏՐԻԱՏԵՅ Գ ԼՐԲԱՅՐ
ԲԱՐԵՒՐԱՌՈՒԹՅԱՆ ՏՐԻՆ
ԼՄԻՉ ԼՄԵԼԱԿԵԼՆ ԻՐԻՕՆԻ
Ի ԳԱՆՇԱՑՈՒՄԸ 1700 ԼՄԵՐԻ
ՀԱՂՎԱԿԱՆ Ի ՀԱՅՍ
ԲՐՈՍՈՒԹՅԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԲԵՒ
ՉԱՐՕՆԻ ԳԵՏԱԿԱՆ
ՏԵՐ ԼՄՏԱՌԵՎ ՆԱՐԿՈՒ
ԵՐԿԵԼՈՒԹՅԱՆ ԳԱՐԳԵԹԵՒՅՆ
ԲԱՐԵՒՐԻՆ ԵՒ ՉԵՄԿԱՅ
ԵՐԻՆ ԵՒ ԼՐԼՄՅՆ ԼՄԵՆԻ
ԼՄԻՆԵՐԵՆ ԳԱՌԱԿՐԱՆ ՉՆԱԳՈ
ԵՐԻՆ ԼՄԵՆ


Ուսումնասիրուած շէնքերի վրայ կան վիմագրական արձանագրութիւններ, որոնք փաստագրական եւ տեղեկատուական մեծ կարեւորութիւն ունեն: Վիմագրական արձանագրութիւնները կառուցուած շէնքերի իրադրող տուեալներն են եւ ստորեւ կներկայացուեն իրենց գտնուելու վայրով, արձանագրութիւնը կատարելու շարժառիթներով, թուագրական տուեալներով:

1. ԲԱՑ ԽՈՐԱՆ

Ի Չայրապետութեան Տ. Տ. Գարեգնի Բ Կաթողիկոսին Ամենայն Չայոց, ի թուին Չայկազեան ՌՆԾ, յամի Տեառն 2001, կառուցաւ Բաց խորանս յանուն Սրբոյն Տրդատայ Գ արքայի, բարերարութեամբ Տիկին Լուիզ Մանուկեան Սիմօնի, ի պանծացումն 1700 ամեկի հռչակմանն ի Չայս Քրիստոնէութեան իբրեւ զկրօնս պետականս:

Տէր Աստուած շնորհս երկնառաքս պարգեւեսցէ բարերարին եւ զաւակաց նորին եւ արասցէ արժանի լուսեղէն պսակին զծնողս նորին. ամէն:


2. ԲԱՑ ԽՈՐԱՆ Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԶԻ ԴԱՐՊԱՍ



Ի Հայրապետության Տ. Տ. Գարեգնի Բ Կաթողիկոսին Ամենայն Հայոց, ի թուին հայկազեան ՌՆԾ, յամի Տեառն 2001, կառուցաւ Բաց խորանս յանուն Սրբոյն Տրդատայ Գ Արքայի, բարերարութեամբն տիկին Լուիզ Մանուկեան Սիմօնի՝ նախագահուիւլոյն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, ի պանծացումն 1700-ամեկի հռչակմանն ի Հայս՝ քրիստոնէութեան իբրեւ զկրօնս պետականս:

Տէր Աստուած շնորհս երկնառաքս պարգեւեսցէ բարերարին եւ զաւակաց նորին. եւ արասցէ արժանի լուսեղէն պսակին զծնողս նորին. ամէն:

3. ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ



Քրիստոսաւանդ սէր եւ Հայրապետական օրհնութիւն մեր առ լուսահոգի տէր եւ տիկին Ալեք եւ Մարի Մանուկեանց, առ զաւակունս նոցին Ռիչարդ եւ Լուիզ, թոռունս եւ հետնորդս, որք ի յաւերժացունն յիշատակի գերդաստանին Մանուկեան հաստատմամբ իւրեանց հիմնադրամին փոյթ յանձին կալան զնորոգումն միածնաէջ տաճարիս՝ սկսեալ յամեն հայոց ՌևԾ եւ ի փրկչական թուին 2001, ի յաւէտ ժամանակս:

Տնօրհնութեամբ մերով ամ յամէ յաւուր մահուանն մեծի բարերարին Ալեքի Մանուկեան ի Սուրբ Աթոռս մատուցի Ս.Պատարագ եւ կատարեսցի Հոգեհանգիստ հանդիսաւոր առաջի Միածնաէջ սրբոյ սեղանոյս վասն հոգւոց հանգուցելոց գերդաստանին Մանուկեան:


Աջն Աստուծոյ հովանի եւ պահապան լիցի ի վերայ Մանուկեան գերդաստանին, ամէն:

Գարեգին Բ

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Սբ . Էջմիածին, 2001 թ.

4. ՎԱՋԳԵՆԵԱՆ ԴԱՐՊԱՍ



Ի Հայրապետության Տ. Տ. Գարեգնի Երկրորդի Կաթողիկոսին Ամենայն Հայոց ի փրկչական ամին 2002 եւ ի թուին հայոց ՌԵԾԱ, յընդարձակելն տարածից Մայր Աթոռոյն. հրամանաւն եւ օրհնութեամբն Սրբազան Հայրապետին եւ բարերարութեամբն անուլաց Վրէժի եւ Անահտի Մարկոսեան դարբասն արեւելեան Ս. Էջմիածնի վանից փոխադրեցաւ ի հիւսիսային կողմն վերանուանեալ որպէս զՎազգէնեան դարբաս Մայր Աթոռոյ:

Վարձս եւ շնորհս պարգեւեցտէ Տէրն բարերացս եւ օրհնեցտէ զհամայն գերդաստանն նոցուն. ամէն:

5. ԳԵՈՐԳԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆ



Հայրապետական օրհնութիւն եւ սէր ընծայեմք անլոց Գեորգ եւ Սիրվարդ Յովնանեան բնակելոց ի Միացեալ Նահանգս Ամերիկայի, որք հաստատմամբ մնայուն հիմնադրամի եղեն յաւերժ բարերարք Գեորգեան հոգեւոր ճեմարանիս: Յովնանեանց ընծայաբերութեամբ յերրորդ ամին գահակալութեան մերոյ, յամին փրկչական 2003 եւ թուին հայոց ՌՆԾԲ ի հիմանց նորոգեցաւ կրթօջախս:

Սանք ծաղկատիք ճեմարանիս երախտագիտութեամբ օրհնեն եւ հանապազօրեայ աղօթիւք յիշեն զբարերարս Գեորգ եւ Սիրվարդ Յովնանեան:

Երանի որք ունիցին յիշատակ ի Սուրբ Էջմիածնի: Վարձս բարեաց պարգեւեսցէ եւ օրհնեսցէ Տէրն զբարեպաշտ եւ զարժանապատիւ գերդաստանս Յովնանեան. ամէն:

Գարեգին Բ

Կաթողիկոս Ամենայն Հայոց

1 Սեպտեմբեր 2003


6. ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ



Այստեղ կառուցուելու է ատամնաբուժական դիսպանսեր՝ օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, հովանաւորութեամբ Ֆրանսիայի Բուշ դիւ Ռոն նահանգի վարչական խորհրդի նախագահ Ժան Նուլ Գերինիի եւ ազնիւ ջանիւք «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական կազմակերպութեան ի վայելումն ազգիս հայոց:

Ս. Էջմիածին Յունիս 2003թ

7. ԴԻԻԱՆԱՏՈՒՆ



ԳԻՐ ՕՐՅՆՈՒԹԵԱՆ

Երկնառաք օրհնութեամբն Ամենակարողին Աստուծոյ ի յեօթնե-
րորդուն ամին Հայրապետութեան մերոյ, ի թուին հայոց ՌՆԾԶ (1456),
ազնուասիրտ մեկենասութեամբ հարազատ զաւակաց Մայր Աթոռոյս՝
Նազարի եւ Արտեմիսի Նազարեան (Նիւ Ջրզի, ԱՄՆ), կառուցաւ Դիւա-
նատունս մերձ առ Նոր Վեհարանն:

Ջերմեռանդն աղօթս վերառաքեմբ առ Տուխչն պարզելաց վասն
նուիրեալ զաւակաց մերոց, արդեամբք որոց կառուցաւ ճահաւոր շինու-
թիւնս: Շնորհ աստուածային եւ օրհնութիւն առ սիրելի բարերար ամուլն
Նազարեան, որք հանապազ յիշեալ լիցին յաղօթս մեր եւ յերախտա-
պարտ միաբանից Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի:

Քրիստոս Աստուած, լուր զաղօթս եւ կատարեա զխնդրուածս սրտից
մերոց, եւ տարածեա զօրհնաբեր կենսատու Աջ Քո ի վերայ Նազարեան
աստուածասէր եւ եկեղեցանուէր ընտանեաց, եւ յեղ ամենատես ողոր-
մութիւն քո ի վերայ նոցա. ամէն:

Օրհնութեամբ՝

Գարեգին Բ

Կաթողիկոս Ամենայն Հայոց

8. Ս. ՎԱՐՂԱՆ ԵՒ Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՄԱՏՈՒՌ ՄԿՐՏԱՐԱՆ



ՁՅայրապետական օրհնութիւն եւ զգնահատանս մեր բերեմք ազգանուէր եւ եղեղեցասէր բարերարին՝ յարգարժան Արմէն Վարդանի Սարգսեան, հարազատ զաւակին Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի, որ բարեհաճ կամօքն Աստուծոյ Ամենակալին՝ ազնիւ արդեամբք իւրոյ կառուցաւ զսուրբ մատուռս մկրտութեան յանուն Սրբոյն Վարդանայ եւ Յովհաննու Մկրտչին ի թուին հայոց ՌՆԾԷ, զի յաւազանէ մկրտարանիս ծնցին մանկունք առաքելահաստատ Եկեղեցւոյս մերոյ՝ իբրեւ ժառանգորդք արքայութեան երկնից եւ տաճարք հոգւոյն սրբոյ, զօրացուցանել ազգիս հայկազեան հաւատով տէրունաշնորհ, արդիւնազարդեալ բարի վարուք եւ գործովք առաքինութեան: Ողորմութիւն Տեառն հանապազ եղիցի ի վերայ բարեպաշտ զաւակացս Եկեղեցւոյս մերոյ՝ մեծայարգ Արմէնի Սարգսեան եւ ընտանեաց նորա: Տէրն Ամենակալ երկնայեղ օրհնութեամբ պահպանեսցէ զնոսա, շնորհեսցէ երջանկութիւն եւ երկնապարգել խաղաղութիւն. ամէն:

Օրհնութեամբ՝
Գարեգին Բ Կաթողիկոս

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ա. Կոնդակներ, արձանագրություններ, յիշատակագրեր, հրամանագրեր

1. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդրանիկ կոնդակը:
2. Գիր Հայրապետական օրհնութեան եւ գնահատանաց առ Գեորգեան հոգեւոր ճեմարանս Մայր Աթոռիս Սրբոյ Էջմիածնի:

բ. Արխիւներ, տեղեկատուական բառարաններ, օրացոյցներ, հանրագիտարաններ, նախագծեր

1. Թեմական դիւանի արխիւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Տէր Սիոն եպիսկոպոս Աղամեան, Շինարարութեան միջոցառումների տեղեկանք՝ Արմաւիրի թեմի առաջնորդարանի:
2. Թեմական դիւանի արխիւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Տ. Մարկոս եպիսկոպոս Յովհաննիսեան, Շինարարութեան միջոցառումների տեղեկանք՝ Գեղարքունիքի թեմի առաջնորդարանի:
3. Թեմական դիւանի արխիւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Առաքել եպիսկոպոս Քարամեան, Շինարարութեան միջոցառումների տեղեկանք՝ Կոտայքի թեմի առաջնորդարանի:
4. Թեմական դիւանի արխիւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Տ. Վազգէն եպիսկոպոս Միրզախանեան, Շինարարութեան միջոցառումների տեղեկանք՝ Վիրահայոց թեմի առաջնորդարանի:
5. Կաթողիկոսական դիւանի արխիւ, ճարտարապետաշինարարական բաժին, ձեռագիր, ըստ արխիւի տուեալների:
6. Հայադարան, Համահայկական գործարար անուանացանկ-2009, հ. I, Երեւան, «Գործարար Տիեզերք», ՍՊԸ, 2009, էջ 546.
Արցախի թեմ- քարտէզով, էջ 516-517.
7. Հայադարան, Համահայկական գիղ-ուղեցոյց-2009, հ. II, Երեւան, 2009, «Գործարար Տիեզերք», ՍՊԸ, 2009, էջ 684.
Պատմաճարտարապետական եւ բնութեան յուշարձանների ցանկեր, էջ 38-41:
Հնագիտական, պատմաճարտարապետական յուշարձաններ, կոթողներ էջ 42-52.
Հայ Առաքելական Եկեղեցի էջ 55-74.
8. ճարտարապետութեան եւ շինարարութեան նախագծերի արխիւ.
9. «Օրացոյց 2010» Հասարակ թուականին Քրիստոսի (ըստ նոր տոմարի) եւ բուն թուականին հայոց 4502-4503 եւ տոմարական թուականին հայոց ՌՆԾԹ եւ ՌՆԿ= 1459-1460 :
10. Օրացոյց «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ», Լոս-անջելոս, 2010 թ.:

11. “Генплан Концепции Развития Первопрестального св. Эчмиадзина”, Дипломный проект, Артавазд Тарханян и Лусинэ Тарханян, руков. Проф. Мери Даниелян, ЕрГУАС, факультет Архитектуры, Кафедра Истории и Теории Архитектуры, 2006.

գ. Տպագիր գրքեր

1. Վարազդատ Յարութիւնեան, Նորորեայ ոսկեծեռիկը (ճարտարապետ Բաղդասար Արզումանեանի կեանքն ու ստեղծագործական վաստակը.), Ս. Էջմիածին, 2004 թ:
2. Վարազդատ Յարութիւնեան, Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, Ս. Էջմիածին, 1996 թ:
3. Պրոֆ. Վարազդատ Յարութիւնեան, Եկայք Շինեսցուք (Պատմութիւն Ս. Էջմիածնի Մայր Աթոռի շինարարական գործունեութեան Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Առաջինի գահակալութեան շրջանում (1955-1988), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1988 թ.
4. Եղիշէ Աւագ քահանայ Սարգսեան, Սուրբ Էջմիածնի հոգեւոր ճեմարանը (Գեորգեան ճեմարան-աստուածաբանական համալսարան) - (1945-2006), Սուրբ Էջմիածին-2009.

Ծանօթ. մնացեալ օգտագործուած գրքերի համար տե՛ս աշխատութեան յղումները:

դ. Մամուլ

1. Հ. Բագրատ արեղ. Գալստանեան, Վեհափառ Հայրապետի մանկավարժական գործունեութիւնը, «Էջմիածին», 2001, օգոստոս, էջ 31-34:
2. Մերի Դանիւլեան, Հայ եկեղեցաշինութեան նոր վերելքը, «Էջմիածին», 2009, ԺԱՅ, էջ 65-77:
3. Մերի Դանիւլեան, Հայ Առաքելական եկեղեցաշինութեանը նոր վերածնութիւն, «Քրիստոնեայ Հայաստան», բացառիկ՝ նուիրուած է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալութեան 10-ամեակին, 2009, նոյեմբեր, էջ 19:
4. Վարդան Դելրիկեան, «Եօթ խորհուրդ ...եօթ ճանապարհ առ Աստուած», յիսուն նոտրումներ Գարեգին Բ Վեհափառից, «Էջմիածին», 2001, օգոստոս, էջ 67.
5. Եկեղեցին եւ արուեստը, «Քրիստոնեայ Հայաստան», բացառիկ՝ նուիրուած է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի գահակալութեան 10-ամեակին, 2009, նոյեմբեր, էջ 16:
6. Խմբագրական՝ Եկեղեցաշէն Հայրապետի յրբելեանը (Գարեգին Բ), «Էջմիածին», 2001, էջ 3-4:
7. Հ. Գարեգին Համբարձումեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետութեան շրջանի՝ 1999-2009 թթ. ընթացքում կառուցուած եւ վերանորոգուած եկեղեցիների ցանկը ըստ տարեթուերի, (ամսփայ, միւրջ ստացուել է 2010 թ. փետրուարին):

8. «Ճարտարապետութիւն եւ Շինարարութիւն», յատուկ թողարկում նուիրուած Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարգին Բ Հայրապետի գահակալութեան 10-ամեակին, 2010, Թ. 1.
9. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատուական համակարգ, Գարեգին Բ Կաթողիկոսին յանձնուեց Գեորգեան Հոգեւոր ճեմարանը բարձրագոյն կրթական հաստատութիւն ճանաչելու մասին կառավարական որոշումը, «Էջմիածին», Ձ-է, 2002, էջ 132:
10. Հեղինէ Սկրտչեան, Եղիշէ աւագ քահանայ Սարգսեան. Գեորգեան ճեմարանի պետականօրէն ճանաչումը երկրորդ շնչառութիւն է հաղորդում պատմական կրթօջախին, «Էջմիածին», Ձ-է, 2002, էջ 133-136.
11. Ն.Ս.Օ.Տ.Տ.Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի զեկոյցը Գերագոյն Հոգեւոր Խորհրդի նիստում, «Էջմիածին», 2002, Ա, էջ 44-47:
12. Ն.Ս.Օ.Տ.Տ.Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի զեկոյցը Մայր Աթոռի 2002 թուականի գործունէութեան վերաբերեալ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի նիստում, «Էջմիածին», 2003, Գ-դ, էջ 39-64:
13. Ն.Ս.Օ.Տ.Տ.Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի զեկոյցը Մայր Աթոռի 2004 թուականի գործունէութեան վերաբերեալ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի նիստում, «Էջմիածին», 2005, Է, էջ 38-63:
14. Ն.Ս.Օ.Տ.Տ.Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի զեկոյցը Մայր Աթոռի 2005 թուականի գործունէութեան վերաբերեալ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի նիստում, «Էջմիածին», 2006, Բ-գ, էջ 10-30.:
15. Ն.Ս.Օ.Տ.Տ.Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի զեկոյցը Մայր Աթոռի 2006 թուականի գործունէութեան վերաբերեալ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի նիստում, «Էջմիածին», 2007, Բ-գ, էջ 23-55:
16. Ստեփան Կերտող, Ս. Էջմիածնի Մայր տաճարը կղաճայ աւելի գեղեցիկ, «Էջմիածին», 2000, հոկտեմբեր, էջ 115-117.
17. Պետրոս Յովհաննիսեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս. կեանքի եւ գործունէութեան համառօտ ուրուագիծ, «Էջմիածին», 2001, օգոստոս, էջ 21-30.
18. Խաժակ արքեպ. Պարսամեան, Հովուապետը իր հօտին պահապան, «Էջմիածին», 2009, ԺԱՅ, էջ 5-8:
19. Ա. Գ. Քալաշեան, Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի եկեղեցաբանական ըմբռնումները, «Էջմիածին» 2009, ԺԱՅ, էջ 48-64:
20. Ստեփան Քիրքչեան, Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցին, «Էջմիածին» 2001, սեպտեմբեր, էջ 114-120:
21. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Երեւանում կառուցուող Ս.Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, «Էջմիածին», 2000, յուլիս, էջ 36-37:
22. Կատարուեց Ս. Էջմիածնի Բաց Խորանի հիմօրհնէքի արարողութիւնը, «Էջմիածին», 2000, դեկտեմբեր, էջ 16.
23. «Էջմիածին» ամսագիր, 2009, ԺԱՅ, յատուկ համար նուիրուած Վեհափառներ եւ Սրբազնագոյն Կաթողիկոսներ Ամենայն Հայոց Գեորգ Զ Չորեքչեանի եւ Գարեգին Բ Ներսիսեանի յրեւելանական տարեթուերին:

Ե- Համացանցի կայքեր

1. Patriarchate of Moscow -The Trinity and St. Sergius Monastery, Cathedral of Christ the Saviour, web: www.patriarchia.ru
2. Vatican-Papal Basilica of Saint Peter, web: www.vatican.va/phome_en.htm
3. Patriarchate of Constantinople- Cathedral of Saint George in the Phanar, web: www.patriarchate.org
4. Archbishopary of Canterbury-Lambeth Palace, Canterbury Cathedral, web: www.archbishopofcanterbury.org, www.canterbury-cathedral.org
5. Patriarchate of Antioch (Syrian Orthodox Church)- St. Ephrem Monastery, web: sor.cua.edu
6. Patriarchate of Alexandria (Coptic Orthodox Church)- Church of St. Takla Haymanot , Church of St. Mark , web: www.copticpopo.org, www.saintmark.com, www.st-takla.org
7. World Council of Churches-Geneva, web: www.oikoumene.org.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եկեղեցաշէն Հայրապետն Հայոց.....	9
Նախաբան	11

Ա. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառուցապատումը մինչև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութիւնը

1. Պատմական ակնարկ	17
2. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարածքի գոտեւորումը	35
3. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հին կառույցներին նոր կեանք	60
Աշխատանքներ Մայր Տաճարի վրայ.	60
Մայրավանքի նոր դարպասների կառուցումը.	63
Մայր Աթոռի տպարանի շէնքի երկրորդ վերանորոգումը	66
Հին Վեհարանի վերակառուցումը.	69
Ալէք եւ Մարի Մանուկեան թանգարանի վերանորոգութիւնը.	73
Երեմեան խցերի վերանորոգութիւնը.	75
Նոր Վեհարանի վերանորոգութիւնը եւ բարեզարդումը.	77
Հին դիւանատան շէնքի ընդարձակումը.	82
Ատամնաբուժարանի վերակառուցումը.	84
Տպարանին մերձակայ պատմական շէնքի վերածումը սեղանատան.	85
Վերանորոգութիւններ Ս. Գայիանէ վանքում եւ յարակից տարածքներում.	86

Բ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նորակառույց շէնքերը

1. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նորակառույց եկեղեցիները.....	101
Բաց խորանը.	101
Ս. Վարդան եւ Ս. Յովհաննէս Սկրտիչ մկրտարանը.	106
Սրբոց Յրեշտակապետաց եկեղեցին.	111
2. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նորակառույց եկեղեցական, կրթական, վարչահասարակական, մշակութային շէնքերը.....	121
Գեորգեան հոգեւոր ճեմարանի համալսարանական հաստատութեան վերածումն ու նրա նորակառույցները.	121
Գարեգին Առաջին կրթական կենտրոնը.....	128
Միաբանական համակառույցը.....	131
Նոր Դիւանատան շէնքը.	134
Վաչէ եւ Թամար Մանուկեանների անուան մատենադարանը.....	135
Վեհարանի հանդիսութիւնների դահլիճը.....	146
Էօրնեկեան դպրոցը.....	148
Արտադրական համակառույցը.....	151
3. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճարտարապետական միջավայրի տարածական կազմակերպումն ու օժանդակ կառույցները.....	154
Վանքապատկան մանկական խաղավայրը.	154
Ճարտարապետական փոքր ձևեր եւ քանդակային ձեւաւորումներ.	155
«Լուսաւորչի Աջը» կոթողը.....	157
Գ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համալիրը միջազգային զուգահեռներով	
Վատիկանի Ս. Պետրոս տաճարի պապական համալիրը.	166
Սոսկուայի և Համայն Ռուսիոյ Պատրիարքութեան Ս. Երրորդութեան եւ Ս. Սերգիոս վանական ու Ս. Փրկիչ Մայր տաճար համալիրները.....	171

Կ. Պոլսի յունական պատրիարքութեան	
Ս. Գեորգ Մայր տաճարի համալիրը Ֆանարում	
և Հալքիի սեմինարիան.	176
Քենթրբերիի Արքեպիսկոպոսութեան Տաճարային համալիրն ու	
Լանբէթ պալատը.	180
Անտիոքի Ասորի Ուղղափառ Պատրիարքութեան	
համալիրը	181
Ղպտի Ուղղափառ Պատրիարքութեան համալիրը	187
Վերջաբան.....	191
CORPUS INSCRIPTUM	197
Գրականութիւն.....	207

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37
Հ 300

ՀԱԻԱՏՈՎ ԿԱՌՈՒՑԵԱԼ

ԴԱԻԻԹ ՔԵՐԹՄԵՆՃԵԱՆ

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1999-2011)

Խմբագիր՝ Տ. Նաթան եպս. Յովհաննիսեան

Հ 300 ՀԱԻԱՏՈՎ ԿԱՌՈՒՑԵԱԼ: Համադրական ուսումնասիրութիւն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառուցապատման Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալութեան տարիներին (1999-2011 թթ.) /Հրատարակութեան պատրաստեց Դաւիթ Քերթմենճեանը; Խմբագիր՝ Նաթան եպս. Յովհաննիսեան:– Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2011.– 216 էջ:

ՀՏԴ 23/28
ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-59-091-2

© Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, 2011 թ.

Հրատարակչութեան տնօրէն՝	Տ. Նաթան եպս. Յովհաննիսեան
Խմբագիր՝	Նաթան եպս. Յովհաննիսեան
Սրբագրիչ՝	Սիրանուշ Գրիգորեան
Էջադրումը՝	Ղեւոնդ քահանայ Մայիլեանի

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱՎԿՉՈՒԹԻՒՆ
Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2011

Չափը՝ 70x100 1/16, թուղթը՝ 150 գ.,
ծաւալը՝ 13.5 տպ. մամուլ, տպաքանակը՝ 1500:

Տպագրուած է «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» Հրատարակչատանը

